[illegible]

ՀՏԴ 821.111-93
ԳՄԴ 84(4Մբ)-4
Ռ 781

Բոլորիս Ալենը / Կազմող՝ Ն. Տերտերյան.— Եր.: «Զանգակ» հրատ.,
Ռ 781 2021.— 168 էջ:

ՀՏԴ 821.111-93
ԳՄԴ 84(4Մբ)-4

ISBN 978-9939-68-899-2

© Տերտերյան Ն. (կազմելու համար), 2021
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2021

# բոլորիս ԱԼԵՆԸ

**Ալեն Մարգարյանը** ծնվել է 1999 թ. փետրվարի 11–ին Երևանում: 2005–2013 թվականներին սովորել է Դերենիկ Դեմիրճյանի անվան թիվ 27 հիմնական դպրոցում: Չբավարարվելով դպրոցական գիտելիքներով՝ մասնակցել է արտադասարանական մի շարք խմբակների՝ պարի, թատերական, լողի և այլն: 2013 թվականին, գերազանց ավարտելով հիմնական դպրոցը, ընդունվել է Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոցը ու այն ևս ավարտել գերազանց: Դպրոցին զուգահեռ ակտիվորեն հաճախել է TUMO ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն: Ֆիլմարվեստի հանդեպ մեծ հետաքրքրությունն ու սովորելու ձգտումը նրան դարձրին մեդիա ոլորտի վառ ուսանողներից և Tumo News (Teen) ստարտափի համահիմնադիրներից մեկը: 16 տարեկանից ընդգրկվել էր «Ռոլան» մանկապատանեկան ֆիլմերի միջազգային փառատոնի ժյուրիի կազմում: Տարբեր աշխատարանների ընթացքում ստանձնել է չորս փաստագրական ֆիլմի ռեժիսորի դեր: Դրանցից երկուսը՝ “Greens” և “Taraz” ֆիլմերը, նկարահանվել են Սմիթսոնյան ինստիտուտի համար՝ հայկական մշակույթն աշխարհին ներկայացնելու նպատակով:

Ընտրելով կինոարվեստի ակադեմիական ուղին՝ 2016 թվականին ընունվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի ռեժիսուրա բաժին:



Համալսարանում ակտիվ ուսանող լինելով՝ մասնագիտական փայլուն բեմադրություններին և կինոաշխատանքներին զուգահեռ մասնակցել է բազում ուսանողական նախաձեռնությունների, այդ թվում՝ օտար լեզուներ սովորեցրել իր տարեկիցներին, վարել ընդդեմ խտրականության քննարկումներ, 17 տարեկանում արդեն դարձել պատանեկական ամառային ճամբարի կամավոր մարզիչ, իսկ հաջորդ տարի՝ ջոկատավար:

Այս ամենի արդյունքնում, գիտական և մշակութային փոխանակման ծրագրի շրջանակում, շատ քիչ ուսանողների թվում մեկնել է Լիտվայի կրթական գիտությունների համալսարան: Հմտանալով մասնգատիտական գործում և բավական փորձ ձեռք բերելով՝ որպես «Ֆիլմերի ստեղծման» դասընթացավար աշխատել է Թումոյում և ընդամենը երկու աշխատանքային տարվա ընթացքում հասցրել կրթել հազարավոր հայ պատանիների Երևանում, Գյումրիում և Դիլիջանում:

2016 թվականին կայացած Երևանում Նոբելյան օրերին հատուկ հրավերով մասնակցել է Նոբելյան մրցանակակիրների հետ քննարկումներին, իսկ Հռոմի պապի հայաստանյան այցի ընթացքում օգնել է հանդիպումների կազմակերպմանն ու համակարգմանը:

Մասնագիտական և աշխատանքային ձեռքբերումները, ակտիվ հասարակական և սոցիալական կյանքը, կամավորական աշխատանքները, լավատեղյակությունը երկրի գիտական և մշակութային կյանքին, մասնակցությունն այդ ոլորտի գրեթե բոլոր նշանակալի միջոցառումներին Ալենի առօրյան էին:

Ալենն ուներ արվեստի նուրբ ճաշակ և մեծ գրքասեր էր, ստեղծում էր իր սեփական գրադարանը: Սիրում էր բացահայտել նորը թե՛ Հայաստանում, թե՛ Հայաստանից դուրս և հասցրել էր լինել քսանից ավելի երկրներում:

Մանկավարժական ու կրթական փորձը և կողքինին օգնելու անկասելի բնավորությունը հանգեցրին իր կյանքը սոցիալական աշխատանքում շարունակելու որոշմանը: 2020 թվականին՝ բակալավրիատը կարմիր դիպլոմով ավարտելուց հետո, ընդունվեց Բոստոնի համալսարան՝ սոցիալական աշխատանք և կրթության կառավարում կրկնակի մագիստրոսական ծրագրով: Ընդունվեց, սակայն որոշեց առայժմ չմեկնել, այլ կատարել իր պարտքը, և 2020-ի ամռանը զորակոչվեց բանակ:

Ալենն Մարգարյանը զոհվել է 2020 թ. սեպտեմբերի 30-ին Մատաղիսում:



Ծողակաթ Դևրիկյան

# ՄԵՐ ՕՐԵՐԻ ԱՌԱՔՅԱԼԸ

**Ամենաիսկական ընկերությունը,**
**որ աշխարհն արարելիս**
**Ասված ստեղծել էր, տվել էր մեզ...**

Եթե դուք չեք ճանաչել Ալենին, միգուցե իմ վերնագիրը ձեզ պաթետիկ թվա, բայց Ալենը իսկապես առաքյալ էր: Ինչպես Մուրացանի «Առաքյալը» վիպակի հերոսը, շատ էր ցանկանում արտասահմանում սովորելուց հետո վերադառնալ ու Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում գրականություն, արվեստ և լեզուներ դասավանդել, ու միշտ ասում էր. «Լավ կրթությունը պիտի հասանելի լինի բոլորին»:

Նաև առաքյալ էր բառի ուղիղ իմաստով: Ամենուր սեր, հարգանք, հանդուրժողականություն և իրար նկատմամբ կարեկից լինել էր քարոզում:



Ես սկսել էի հավատալ «Մի ծաղկով գարուն կգա» խոսքերին, որովհետև ճանաչում էի Ալենին: Ալենը միշտ այդ մի ծաղիկն էր, առաջին ծափը տվողն էր: Միշտ ամեն մարդու, երևույթի, մտքի մասին հիմնավորված կարծիք ուներ, բոլորի համար արդարացնող խոսք ուներ: Իր սիրելի արտահայտություններից էր՝ «Կրթվածության ամենաբարձր աստիճանը հանդուրժողականությունն է»: Ու այդ խոսքերին հավատարիմ՝ ցանկացած հարցի միշտ ըմբռնումով էր մոտենում:

Ալենն իր կյանքում միշտ էր պատերազմում ու պայքարում, բայց ոչ զենքով ու արյունով, այլ գրքով ու գրչով: Պայքարում էր կրթվածության, գրագիտության ու հանդուրժողականության հաղթանակի համար:

Իր խորությունն ու բարձրությունը միգուցե բոլորը չէին հասկանում, բայց նա հասկանում էր բոլորին: Հասկանում էր իրենից մեծերին ու փոքրերին, մտնում էր բոլորի դրության մեջ, ներում ամեն ինչ:

Իր գիտելիքներով, կարդացածով, իմացածով, ունեցածով միշտ պատրաստ էր կիսվել մյուսների հետ:

Երբեմն կեսկատակ-կեսլուրջ ասում էր. «Երբ Նոբելյան մրցանակ ստանամ, խոստացի՛ր, որ իմ մասին գիրքը դու ես գրելու: Դրա համար էս մի բանը հիշի՛ր, որ հետո գրքումս գրես», ու ծիծաղում էինք: Ես էլ ասում էի, որ եթե գրելիս ինչ-որ բան մոռանամ, իրենից կհարցնեմ, բայց հիմա էլ հնարավոր չէ իրենից հարցնել, դրա համար թե՛ ես, թե՛ մեր ընկերները գրում ենք այն, ինչ մենք ենք հարմար գտնում:

**Իսկ հիմա ամեն ինչի մասին մի քիչ ավելի մանրամասն:**

Ալենն ու ես ծանոթացանք 2013 թվականի սեպտեմբերին՝ ավագ դպրոցում: Ալենը մեր դասարան եկավ երկու շաբաթ ուշ: Ես նստած էի առաջին նստարանին՝ հենց ուսուցչի սեղանի առաջ: Նստած էի մենակ, մյուս առաջին նստարանները նույնպես զբաղված չէին: Բոլորը հիմնականում խուսափում էին առաջին շարքում նստելուց. այդ տեղերը գտնվում էին դաս հարցնելու ուղիղ «հարվածի տակ»:

Մի օր դասամիջոցին մեր դասարան մտավ մի տղա, հայացքով ընդգրկեց ամբողջ դասասենյակը, մոտեցավ իմ սեղանին ու հարցրեց. «Էստեղ ազա՞տ է, կարո՞ղ եմ նստել»: Ասացի՝ իհարկե: Ալենը նստեց: Այդ օրվանից մինչև դպրոցն ավարտելը նստեցինք միասին, նույն նստարանին: Հենց այդ պահից հասկացա, որ Ալենը տարբերվում է ուրիշներից, մեծ սեր ու ձգտում ունի ուսման նկատմամբ:

Ժամանակի ընթացքում ավելի լավ սկսեցինք ճանաչել իրար, ավելի ընկերացանք ու մտերմացանք: Սկզբում հաճախ էինք զարմանում մեր հետաքրքրությունների ու ճաշակի նմանության վրա, հետո զարմանալու փոխարեն սկսեցինք ուրախանալ, որ շատ հարցերում համակարծիք ենք:

Դպրոցական տարիներն անցան ուրախ ու անհոգ: Արդեն շատ մանրամասներ չեմ հիշում, որոշ բաներն էլ անհրաժեշտ չեմ համարում պատմել: Բայց գիտելիքներից առավել դպրոցը մեզ տվեց մի մեծ ու ամուր ընկերություն, որը գալիք տարիներին դեռ ավելի պիտի խորանար:

## Մեր «Վերնատունը»

*2020 թ. սեպտեմբերի 27–ին սկսվեց մեր կյանքում եղած ամենաչարաբաստիկ բանը՝ պատերազմը: Իսկ 2019 թ. սեպտեմբերի 27–ին Ալենն ու ես գրական խմբակի հիմքեր էինք դնում, որին մի տարի միայն վիճակվեց կյանք ունենալ:*

*Մենք հաճախ էինք գեղարվեստական տարբեր ստեղծագործություններ քննարկում, բանաստեղծություններ արտասանում, արվեստի տարբեր գործերից խոսում և որոշեցինք մեր այդ քննարկումներն անել ոչ թե առօրյա զրույցների ընթացքում, այլ մեր վերստեղծած «Վերնատան» շրջանակներում: Իհարկե, հասկանում էինք, որ մենք շատ–շատ բաներով ենք պակաս և շատ հարցերում ենք զիջում 20–րդ դարի «Վերնատան» ստեղծողներին, բայց միևնույն ժամանակ կարծում էինք, որ մեր օրերում ու մեր հասակակիցների մեջ հե՛նց մենք կարող ենք մեզ իրավունք վերապահել ստեղծելու 21–րդ դարի «Վերնատունը»:*

*Եվ մի գեղեցիկ նոթատետրում մեր այդ որոշման մասին գրեցինք. «2019 թվականի սեպտեմբերի 27–ին հանդիպեցինք՝ նշելու մեր ընկերության վեցամյակը, որի ընթացքում որոշեցինք մեր կարողությունների սահմաններում վերստեղծել մերօրյա Վերնատուն՝ հետևելով 20–րդ դարի հայ մտքի տիտանների օրինակին:*

*Վերնատանը նախատեսվում է իրականացնել շարունակական հանդիպում–քննարկումներ հայ և համաշխարհային գրականության ու արվեստի թեմաներով:*

*Վերնատան ստեղծողներ և առաջին անդամներ՝*
*Դևրիկյան Հողակաթ*
*Մարգարյան Ալեն*
*27.09.2019»*





Այդ օրվանից մեր հանդիպումների ու զրույցների մի մասը նվիրվում էր «Վերնատանը»: Դրանցից մի քանիսն անգամ տեսագրել եմ: Արտասանում էր Թումանյան, Սևակ, Չարենց, Ազնավուրի երգերի հայերեն թարգմանությունները և շատ–շատ ուրիշ գործեր:

Հայ գրողներից ամենաշատը սիրում էր Միսաք Մեծարենցին: Այնքան սիրուն ձայնով էր ասում. «Համբույրներ կուգան հովեն ու ծովեն» կամ էլ երբեմն փոխում էր ու ասում. «Համբույրներ եմ ուղարկում հովեն ու ծովեն»: Ու իսկապես, ճիշտ են ասում, որ մարդիկ նման են իրենց սիրելի կերպարներին, հերոսներին, գրողներին: Նույնիսկ կյանքի տևողության հարցում Ալենը նման եղավ Մեծարենցին (Մեծարենցը մահացել է 22 տարեկանում): Բայց ոչ թե կյանքի տևողությամբ, այլ կատարած գործերով են մարդիկ մնում ժամանակակիցների ու հաջորդ սերունդների հուշերում:

Ու ինչպես Չարենցն է Մեծարենցին նվիրված բանաստեղծության մեջ գրել.

Արյուն է եղել աշխարհում:– Եղել է եղեռն ու կռիվ:
Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամեհի ելած իրար դեմ:
Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ կարդաց:
Արև՛ է երգել ու գարուն այս հիվանդ, հանճարեղ պառանին:

Ալենը նույնպես երբեք չէր խոսում պատերազմների, եղեռնի ու աղետների մասին: Իրեն լսելով թվում էր, թե աշխարհում միայն արևներ ու գարուններ կան:

Հաճախ էր ասում նաև Սահյանի «Իմ մահով ոչինչ չի փոխվի կյանքում» բանաստեղծությունը: Ես էլ ջղայնանում էի, ասում էի. «Լավ, հասկացանք, ինչքան էլ սիրուն ա գրած, բայց էդ էլ մի՛ ասա, դրա փոխարեն կարելի ա Սայաթ–Նովա երգել»: Ինքն էլ պատասխանում էր. «Քեզ մնա՝ ամբողջ օրը Սայաթ–Նովա կուզես: Ես սիրում եմ էս բանաստեղծությունը ու միշտ էլ ասելու եմ»: Թե ինչն էր այդքան սիրում, չգիտեմ:

Ու չգիտեմ, թե իրեն հիմա էլ որտեղ գտնեմ ու ասեմ, թե իր մահով ինչքա՞ն բան է փոխվել կյանքում ու ինչքան բան՝ պակասել աշխահում:



## Գրքե՛ր, գրքե՛ր, գրքե՛ր

Ալենի մեծագույն սերը գրականությունն էր: Կարդում էր բոլոր ժանրերի ստեղծագործություններ: Սիրում էր ամեն ինչ՝ նովելներից մինչև էպոսներ, քառյակներից մինչև վեպեր: Բայց հեքիաթները հատկապես շատ էր սիրում: Դրանք համարում էր գրականության ամենաբարձր ժանրը: Կարծում էր, որ հեքիաթները երեխաների համար հետաքրքիր լինելուց բացի նաև կրթող ու դասեր տվող պիտի լինեն:

Առանձին մտքեր ուներ ճնշված կամ լքված երեխաներին հարազատ ու ապրումակցող հեքիաթներ գրելու մասին: Ինձ մանրամասն պատմել էր բոլորի սյուժեները: Բայց ձեզ պատմել չեմ կարող, որովհետև խոստացել էի իրեն, որ մինչև չտպվեն, դրանց մասին ոչ ոքի հետ չեմ խոսելու: Ալենը իր սրտի ամենաթաքուն ու նվիրական բաներով կիսվել էր ինձ հետ, բայց միայն հեքիաթների համար էր ուզել, որ խոստանամ գաղտնի պահել:

Միշտ պատկերացնում էինք, թե քանի–քանի՛ երեխայի համար իր հեքիաթները պիտի դառնային մանկության սիրելի մաս: Բայց, փաստորեն, շատ երեխաների փոխարեն դրանք սիրելի ու հարազատ դարձան միայն ինձ համար:

Թեև Ալենի սիրելի ժանրը հեքիաթներն էին, բայց իր ամենասիրելի գեղարվեստական ստեղծագործությունը Լև Տոլստոյի «Աննա Կարենինան» էր: Ասում էր, որ կյանքում ամեն ինչի պայքարով պիտի հասնել, բայց ոչ Կարենինայի պես ճանապարհի կեսից հուսահատվելով: Ասում էր, որ մեծ նպատակները երբեմն մեծ զոհողություններ են պահանջում: Ու այս դեպքում երկրի ապագայի համար որոշիչ պահին Ալենն էլ արեց իր զոհողությունը՝ տվեց մեզ համար այդքան թանկ իր կյանքը:

Մենք իրար շատ հաճախ էինք գրքեր նվիրում, երբեմն առանց առիթի կամ տոնի, որովհետև համարում էինք, որ գիրք նվիրելն է տոն դառնում: Մեծ կարևորություն էինք տալիս մակագրությանը: Իմ մակագրություններն Ալենի կողմից մի առանձին գրաքննադատության ու վերլուծության էին ենթարկվում: Իսկ ես Ալենի գրածներով ուղղակի հիանում էի: Իր գրած յուրաքանչյուր մակագրություն փոքրիկ գրական ստեղծագործության

էր նման: Մի քանի նախադասությամբ փոխանցում էր մի ամբողջ պատմություն ու շատ–շա՛տ սեր:

Քանի որ Ալենից նվեր ստացածս գրքերը շատ են, ցուց տալու համար մակագրելու իր տաղանդը, որպես օրինակ կներկայացնեմ դրանցից վերջին երկու տարիների իմ ամենասիրելիները:

Ինչպես կտեսնեք, Ալենը հաճախ մակագրում էր անգլերեն: Հայոց լեզուն պաշտելու աստիճան սիրում էր և հարգում, բայց քանի որ նաև շատ լավ էր տիրապետում անգլերենին, երբեմն ստացվում էր այնպես, որ հարմար էր գտնում մակագրել անգլերեն:

Մեր ընկերության 6–ամյակի առիթով նվիրել էր ամերիկուհի գրող Հարփըր Լիի «Ծաղրասարյակ սպանելը» վեպը (1960 թ.): Գրքում վեր է բարձրացված ռասայական խտրականության հարցը, որը, դժբախտաբար, արդիական է անգամ այսօր:

Ալենը գիրքը մակագրել է այսպես.

*“There are friends, and there are family, then there are friend that become family.*

*To the fiercest, the strongest and the most intelligent young woman whose passion to the world of knowledge burns brighter than the morning star.*

*To my voice of reason, to my family: Shogh*

*With love, Alen*

*01.10.2019”*

*(Կան ընկերներ, և կա ընտանիք, և կան ընկերներ, որ դառնում են ընտանիք: Ամենահամառ, ամենաուժեղ և ամենախելացի երիտասարդ աղջկան, ում սերը դեպի գիտելիքի աշխարհը վառվում է ավելի պայծառ, քան առավոտյան աստղը:*

*Իմ ներքին ձայնին, իմ ընտանիքին՝ Հողին*

*Սիրով, Ալեն)*

2020 թվականի Նոր տարվա օրերին Ալենը Դուբայում էր: Մի օր խոսելիս ասաց, որ ուզում է այդ անգամ ես ասեմ, թե ինչ գիրք կցանկանամ, որ ինձ համար բերի: Ասացի՝ «Վան Գոգի նամակները եղբորը», քանի որ մենք էլ հաճախ մեր ընկերությունը համեմատում էինք այդ եղբայրների նվիրվածության, հարազատության ու կապի հետ:

*Գրքի առաջին էջին գրել է.*

*"Dear Shoghakat,*

*I no longer know things with certainty, except the belief in our forever bond.*

*As Van Gogh himself has said: "Close friends are truly life's treasures. Sometimes they know us better than we know ourselves. With gentle honesty, they are there to guide and support us, to share our laughter and our tears. Their presence reminds us that we are never really alone"*

*And even though today's means of communication are different from letter–writing, I want you to be sure that in a world where people still write paper–letters, in that parallel reality, most of my letters are addressed to you.*

*Your loving friend, Alen, 01.2020"*

*(Սիրելի Հողակաթ,*

*Կան բաներ, որոնց վրա ես այլևս վստահ չեմ, բացի իմ հավատից, որ մեր կապը հավերժ է:*

*Ինչպես Վան Գոգն ինքն է ասել. «Մտերիմ ընկերները կյանքի իրական գանձեր են: Երբեմն նրանք ճանաչում են մեզ ավելի լավ, քան մենք ինքներս մեզ: Նուրբ անկեղծությամբ նրանք պատրաստակամ են ուղղորդել ու աջակցել մեզ, կիսել մեր ծիծաղն ու արցունքները: Նրանց ներկայությունը հիշեցնում է մեզ, որ մենք երբեք լիովին մենակ չենք»:*

*Եվ չնայած այսօրվա հաղորդակցության միջոցները տարբերվում են նամակ գրելու ժամանակներից, ես ուզում եմ, որ դու վստահ լինես, որ մի աշխարհում, որտեղ մարդիկ դեռ թղթե նամակներ են գրում, այդ զուգահեռ իրականության մեջ իմ նամակների մեծամասնությունը հասցեագրված է քեզ:*

*Քո սիրող ընկեր, Ալեն)*




Dear Shoghakat,

I no longer know things with certainty, except the belief in our forever bond.

As Van Gogh himself has said: "Close friends are truly life's treasures. Sometimes they know us better than we know ourselves. With gentle honesty, they are there to guide and support us, to share our laughter and our tears. Their presence reminds us that we are never really alone".

And even though today's means of communication are different from letter-writing, I want you to be sure that in a world where people still write paper-letters, in that parallel reality, most of my letters are addressed to you.

Your loving friend,

Alen 01.2020

Վան Գոգը եղբորն ուղղված նամակներն ավարտում էր այսպես «Your loving brother, Vincent» (քո սիրող եղբայր, Վինսենթ), ու Ալենն էլ, փաստորեն, նրա նմանությամբ է գրել՝ «Your loving friend, Alen» (քո սիրող ընկեր, Ալեն):

Մարտի 8-ին նվիրել էր իմ շատ սիրելի «Աննան կանաչ կտուրներից» գրքի՝ երևի ամենագեղեցիկ ու նուրբ հրատարակությունը, որ կա աշխարհում, ու գրել էր.

*"I'm so glad I get to live in a world where there are Octobers and springs, but most importantly you!*
*With the most beautiful feellings, Alen*
*08.03.2020"*

*(Ես շատ ուրախ եմ, որ ապրում եմ մի աշխարհում, որտեղ կան հոկտեմբերներ, գարուններ, բայց ամենակարևորը՝ կաս դու:*
*Ամենագեղեցիկ զգացմունքներով՝ Ալեն)*


The good stars met in your horoscope,
Made you of spirit and fire and dew.
BROWNING

I'm so glad I get to live in a world where there are Octobers, and Springs but most importantly you!

With the most beautiful feelings,
Alen
08.03.2020



*2020 թ. հուլիսին առանց որևէ առիթի Ալենը նվիրեց ինձ իտալացի գրող Ումբերտո Էկոյի ամենահայտնի գործերից մեկը՝ «Վարդի անունը»: Ինքն այդ գրքից արդեն ուներ, ու որոշել էինք, որ հետը կտանի բանակ ու միաժամանակ կկարդանք՝ ինքը՝ այնտեղից, ես՝ տնից: Բայց մեր որոշած բազում այլ բաների պես սա էլ անկատար մնաց...*

Գրքի վրա գրել էր.

*«Հուսով եմ՝ մի օր բոլորը կհասնեն մտքի այն հասունությանը, որ գիրք նվեր ստանալուց մեր պես ուրախանան:*
*15. հուլիս. 2020»:*

*Հիշում եմ, ես էլ կարդացի ու զարմացած ասացի. «Ալե՞ն, էս մեզ ուղղված մաղթանքներից անցում ես կատարել համամարդկայի՞ն ցանկությունների»: Ժպտաց, ասաց. «Հա, մեզ ամեն ինչ արդեն մաղթել եմ»:*

Բայց սրանից հետո էլ մակագրություններ չեղան: Էլ չենք իմանա, թե դեռ ինչ համընդհանուր մաղթանքներ ուներ: Բայց այս մեկը երևի իր համար ամենակարևորն ու ցանկալին էր:

## Փոստքարտեր

Եթե գրքեր նվիրելը և մակագրելը բավականին տարածված է, ապա փոստքարտեր նվիրելու և մակագրելու մշակույթը շատ քիչ է հանդիպում: Ամեն դեպքում իմ շրջապատում Ալենից բացի չկա մեկը, ով փոստքարտը նվերի անբաժան մաս է համարում:

Ինչպես շատ ու շատ այլ գեղեցիկ սովորություններ, փոստքարտեր նվիրելը նույնպես Ալենն իր օրինակով սովորեցրել էր իր շատ–շատ ընկերների և ծանոթների:

Ես ինձ շատ երջանիկ եմ համարում, որովհետև Ալենից մնացած քսանից ավել փոստքարտեր ունեմ, որոնցից յուրաքանչյուրն ինձ համար մի մասունք, հիշողություն ու հոգու վառարան են: Այստեղ մի քանիսը կներկայացնեմ նպատակով, որ միգուցե այս մասին իմանալուց և դրանք կարդալուց հետո այս գեղեցիկ երևույթը ձեզ համար նույնպես ավանդույթ դառնա: Որովհետև վերջիվերջո բանավոր ասված խոսքերը մնում են միայն մեր հիշողության մեջ կամ երբեմն էլ՝ օդում ու մոռացվում են: Իսկ գրի առնված բառերը միշտ կենդանի են ու ամեն անգամ կարդալուց ջերմացնում են մեր հոգին:

Ալենն ամերիկյան տոներից ամենաշատը Երախտագիտության տոնն էր սիրում, որը միշտ առաջարկում էր նշել: Այդ օրը ջերմ խոսքեր էր ասում բոլորին՝ չմոռանալով ոչ ոքի: Եվ վերջին տարիներին նաև փոստքարտեր էր նվիրում: Ինձ տված-ներից մեկի վրա գրել է.

*«Իմ նեղ օրերի ընկեր, իմ լեն օրերի ընկեր, իմ Հողակաթ,*

*First and foremost, thank you for being present in my life and I just want to take a moment and yell to the entire world how grateful I am for having you by my side.*

*Your love and support help me keep moving and navigating in the hardest game area, called Life and it ain't a thing without you. Thank you for being my support system.*

*Hugshugshugs*

*Love, Alen, 28.Nov.2019"*

*(Իմ նեղ օրերի ընկեր, իմ լեն օրերի ընկեր, իմ Հողակաթ*

*Առաջին հերթին շնորհակալություն իմ կյանքում ներկա լինելու համար և ուզում եմ մի պահ առանձնացնել ու բղավել ամբողջ աշխարհով, թե ինչքան շնորհակալ եմ ես՝ քեզ իմ կողքին ունենալու համար:*

*Քո սերը և աջակցությունն օգնում են ինձ շարունակել շարժվել և նավարկել այս բարդ խաղադաշտում, որ Կյանք է կոչվում, և դա ոչինչ է առանց քեզ: Շնորհակալություն՝ իմ աջակցող համակարգը լինելու համար:*

*ԳրկումեմԳրկումեմԳրկումեմ*

*Սիրով, Ալեն)*



Քանի որ ասացի, որ իր այս գեղեցիկ սովորությունը նաև մեզ համար էր ավանդույթ դարձել, բերեմ նաև իմ գրած մակագրությունը այս տոնի առիթով.

*“There have been times when I forgot to thank you for being there for me. Now, I take this day to thank you for the previous six years and the years that are still to come…*

*Our homes may be far apart, but our hearts are as close as Monet and impressionism, as Dali and surrealism, as Shakespeare and the drama…*

*Shogh, 28.11.19”*

*(Կային ժամանակներ, երբ ես մոռանում էի շնորհակալություն հայտնել քեզ իմ կողքին լինելու համար: Այժմ, օգտվելով այս օրվանից, ես շնորհակալություն եմ ասում քեզ անցած վեց տարիների և այն տարիների համար, որոնք դեռ պիտի գան…*

*Միգուցե մեր տները իրարից հեռու են, բայց մեր սրտերը այնքան հարազատ են, ինչպես Մոնեն և իմպրեսիոնիզմը, Դալին և սյուրռեալիզմը, Հեքսպիրը և դրաման…*

*Հող, 28.11.19)*

2020 թ. իմ ծննդյան օրը համընկավ համաճարակի բռնկման սկզբի ամենաթեժ շրջանի հետ: Ապրիլը այն ժամանակն էր, երբ տանից դուրս գալու համար շատ կարևոր պատճառ էր պետք ունենալ: Նաև անհրաժեշտ էր հատուկ թուղթ լրացնել դուրս գալու նպատակի ու ժամանակի վերաբերյալ: Ալենը շատ օրինապահ մարդ էր: Ոչ մի դեպքում երբեք օրենքը կամ կարգը չէր խախտում կամ չէր շրջանցում: Ալենի միակ օրինազանցությունը ես տեսել եմ իմ այդ տարվա ծննդյան օրը: Եկել էր մեր շենքի մոտ ինձ շնորհավորելու, բայց այս հարցում նույնպես այնքան գիտակից ու կարգապահ գտնվեց, որ չհամաձայնվեց տուն բարձրանալ, ուզեց, որ հանդիպենք բաց տարածքում: Ինձ շնորհավորելու համար իրենց տնից այդքան հեռու գնալը ոստիկանների համար երևի հարգելի



պատճառ չհամարվեր, դրա համար պարետատան թղթի «այցելության նպատակը» բաժնում գրել էր. «Այցելություն միայնակ ապրող տարեց տատիկիս»: Արդարանում էր՝ ասելով. «Լավ, շատ սուտ չեմ գրել, 21 տարեկանը արդեն կարելի ա տարեց համարել»: Ասում էի. «Բա տատի՞կը»: Ծիծաղում էր:

Նստել էինք մեր բակում: Շատ ծիծաղեցինք, զրուցեցինք, ցրվեցինք: Չնայած որ առավոտյան տխուր էի, որ սովորականի պես չեմ կարողանալու բոլոր ընկերներիս հետ նշել ծնունդս, բայց Ալենի հետ հանդիպելուց հետո ինձ թվում էր, որ այդ տարի նույնպես շատ ուրախ անցկացրի օրս:

Փոստքարտի վրա գրված շնորհավորանքից շատ էի հուզվել: Գրել էր.

*«Ինչպես «Ազատությունը, որ առաջնորդում է ժողովրդին», այնպես էլ դու կյանքում ինձ շատ լուսավոր տեղեր ես առաջնորդել, ու չնայած հարազատ մարդուն էնքան բան կա ասելու, որ երևի ուրիշն իմ տեղը լիներ բան էլ չկարողանար ասեր, բայց ես համենայնդեպս փորձեմ.*

*Ես գիտեմ, որ քո իմացություններով ու հավատալիքներով շարժվելով աշխարհն ավելի լավ տեղ ես դարձնում, աշխարհում լինելը իմ համար «տանը» լինել ես դարձնում ու հաճախ մարդկային լավագույն հատկանիշների կենդանի մարմնացումն ես:*

*Ծնունդդ շնորհավոր իմ soulmate (հարազատ հոգի) ու հիշի, որ "soulmates never die" (հարազատ հոգիները երբեք չեն մահանում):*

*Սիրով, Ալեն, 08.04.2020»*


Le 28 juillet 1830 La Liberté guidant le peuple, 1830 | Huile sur toile H. 260 ; L. 325 cm | Paris, musée du Louvre, département des Peintures
© Photo RMN-Grand Palais (musée du Louvre) H. Lewandowski | © RMN-Grand Palais, Paris 2018 • IC 00 3746 •

Ալենը ռոմանտիզմի դարաշրջանի ամենանշանավոր նկարիչ ֆրանսիացի Էժեն Դելակրուայի «Ժողովրդին առաջնորդող Ազատությունը» (1830 թ.) կտավով շատ էր հիանում: Դա համարում էր իր ամենասիրելի գեղանկարը և հաճախ էր հիշում ու համեմատություններ անում դրա վերաբերյալ: Նաև

ասում էր, որ ես եմ առաջին անգամ իրեն մանրամասն պատմել այդ նկարի մասին, դրա համար Լուվրից ինձ համար բերել էր այդ պատկերով տարբեր էջանշաններ, նոթատետրեր ու այլ հուշանվերներ:

Իսկ օտար երկրների ու հուշանվերների մասին խոսելով՝ կարող եմ ասել, որ մեր ամենահետաքրքիր հանդիպումները լինում էին ճանապարհորդություններից վերադառնալուց հետո, երբ շատ թեմաներ էին լինում կուտակված: Իրար համար մեծագույն սիրով ու մանրակրկիտությամբ էինք նվերներ ընտրում:

Եվ շատ էինք սպասում այն օրվան, երբ կկարողանայինք միասին ճամփորդել: Երբ ոչ թե վերադառնալուց հետո կկիսվեինք պատմություններով, այլ բոլոր պատմությունները մեզ համար կլինեին ընդհանուր: Երբ ոչ թե իրար լուսանկարներ ցույց կտայինք, այլ լուսանկարված կլինեինք միասին:

Իսկ ճանապարհորդության տպավորությունների և հետագա ծրագրերի մասին որպես կենդանի հիշեցում են մնացել մեր գրած քարտերը:

*“My dearest darling Shoghakat,*

*I write this postcard post-factum, when I am already back for more than a month which means that we didn’t properly see each other for a long time. But not seeing each other never stand in between us as our friendship has once again defined the true nature of that phenomenon.*

*To travel is to live and, to me, to live is to dream, so in dream I believe. The very dream to go and see the world together. Museums, galleries, sights: all of it. And as it says: a dream dreamed together is a reality. So cheers to our older versions in the future, to those who finally travel together.*

*Love, Alen*

*Nov.2019”*

*(Իմ ամենահարազատ սիրելի Հողակաթ,*

*Ես գրում եմ այս փոստքարտ պոստ ֆակտումը, երբ արդեն մեկ ամիս է, ինչ տուն եմ վերադարձել, ինչը նշանակում է, որ իրար չենք տեսել արդեն երկար ժամանակ: Բայց իրար չտեսնելը երբեք չի կանգնել մեր մեջ, քանի որ մեր ընկերությունը ևս մեկ անգամ հաստատեց այդ ֆենոմենի իրական բնույթը:*

*Ճամփորդել նշանակում է ապրել, և ինձ համար ապրել նշանակում է երազել, այսպիսով երազանքին ես հավատում եմ: Հենց այն երազին՝ գնալ ու տեսնել աշխարհը միասին: Թանգարաններ, պատկերասրահներ, տեսարժան վայրեր. ամեն ինչ: Եվ ինչպես ասում են՝ միասին երազած երազանքը իրականություն է: Այսպիսով կեցցեն մեր հին տարբերակները ապագայում, կեցցեն նրանք, որ վերջապես ճանապարհորդելու են միասին:*

*Սիրով, Ալեն, Նոյ. 2019)*

*“My dearest darling Shoghakat,*

*There are things that I wanna be sure of and also there are things that I am already sure of: our friendship is one of that few things. To me you are the most important friend who we just need another year of friendship with to become family, according to that picture, but I already think of you as a family.*

*P. s. As we understood wifi is not reliable, so next time travelling we need to pack each other in our baggage!*

*Love, Alen, 18.Aug.2019”*

*(Իմ ամենահարազատ սիրելի Հողակաթ,*

*Կան բաներ, որոնցում ես ցանկանում եմ վստահ լինել, և կան բաներ, որոնցում ես արդեն վստահ եմ՝ մեր ընկերությունը դրանցից մեկն է: Ինձ համար դու ամենակարևոր ընկերն ես, և համաձայն նկարի՝ մեզ ևս մեկ տարի է հարկավոր ընտանիք դառնալու համար, բայց ես քեզ արդեն ընկալում եմ որպես ընտանիք*:*

*P. s. Ինչպես հասկացանք, wifi–ը հուսալի չէ, հետևաբար հաջորդ անգամ ճամփորդելիս պետք է տեղավորենք մեկս մյուսիս ուղերեռի մեջ:*

*Սիրով, Ալեն, 18.օգոստ.2019)*

Ֆեյսբուքում մի անգամ մի նկար էինք տեսել, որի վրա գրված էր, որ եթե մարդիկ լավ ընկերներ են լինում 7 տարուց ավել, ապա նրանց կարելի է ընտանիքի անդամներ համարել:

Ցանկանում էինք առաջինը Մարոկկո գնալ: Ես այնքան շատ եմ հիանում այդ երկրով ու այնքան շատ էի խոսել իր մոտ դրա մասին, որ արդեն ինքը ինձնից շատ էր սպասում Մարոկկոն տեսնելուն:

Կահիրեից ինձ ու իր համար իսլամական երկրներում տարածված, բայց մեզ համար շատ յուրահատուկ թվացող լուսամփոփներ էի բերել: Ու փոստքարտի վրա գրել էի.

Some beautiful paths can't be discovered without getting lost.

_ Erol Özan

*“I’ve always thought that Magic lives in the lamp stores. Now I know that I wasn’t mistaken…*

*In the East these kind of lamps are considered to be magical! Every time you switch it on, remember that we have two parts of an unwritten fairytale. And when they reunite with the third one from Morocco a fairy tale would be born even more magnificent and beautiful than Scheherazade had ever told during “One Thousand and One Nights”.*

*Love, Shogh, 2019”.*

*(Ես միշտ կարծել եմ, որ կախարդանքն ապրում է լամպերի խանութում: Հիմա գիտեմ, որ չէի սխալվում: Արևելքում այսպիսի լամպերը համարվում են կախարդական: Ամեն անգամ, երբ այն միացնես, հիշիր, որ մենք ունենք մի չգրված հեքիաթի երկու մասերը… և երբ դրանք միավորվեն երրորդի հետ, որ կբերենք Մարոկկոյից, մի հեքիաթ կծնվի՝ էլ ավելի հիանալի և գեղեցիկ, քան Հահարզադեն երբևէ պատմել է իր «Հազար ու մի գիշերների» ընթացքում:*

*Սիրով, Հող, 2019)*

Սակայն սրանք մտքեր էին, որ իրականացան միայն մեր երևակայական աշխարհում, իսկ իրականում մնացին միայն թղթի վրա գրված: Բայց ես հուսով եմ, որ հիմա լիովին ազատություն ստացած Ալենի հոգին արդեն շրջել է Մարոկկոյում, եվրոպական գոթական առեղծվածային մութ պալատներում, հոլանդական կակաչների դաշտերում, անձրևոտ Շոտլանդիայի նեղ փողոցներում և բոլոր այն տեղերում, որոնց մասին երկար երեկոներին խոսել ենք, և որոնք միասին տեսնելուն այդքան սպասել ենք:

Եվ, ինչպես տեսնում եք, Ալենը լավ խոսքեր չէր խնայում՝ իր սերն ու ջերմությունը փոխանցելու համար: Կարծես գիտեր, որ հետո էլ հնարավորություն չի ունենալու: Ես էլ ձեզ եմ խորհուրդ



տալիս ավելի շատ ջերմ խոսքեր ասել, որովհետև միգուցե մի օր ափսոսենք հենց չասվածի համար:

Միգուցե լինեն մարդիկ, որոնց փոստքարտերը ուղղակի թղթի կտորներ կամ մանրուքներ թվան, բայց կյանքի իրական գեղեցկությունները երբեմն հենց այսպիսի փոքրիկ բաների մեջ են, որոնք Ալենը կարողանում էր տեսնել, ստեղծել ու գնահատել:

## Կենսագրությունը

Համալսարանում մեր սիրելի դասախոսներից մեկը մի անգամ ասաց. «Կենսագրությունն այն չէ, թե որ թվականին որ դպրոցն ենք ընդունվել, ապա որ համալսարանը և այլն, այլ այն է, թե որ թվականին և որտեղ ենք հանդիպել մի մարդու, ով փոխել է մեր կյանքը, մեր պատկերացումներն ու ձգտումները ավելի բարձր ու լավն է դարձրել»:

Այդ օրը դուրս եկա համալսարանից, դռների մոտից միանգամից զանգեցի Ալենին ու ասացի, որ ինձ համար այդպիսի մարդը ինքն է, դեռ մի բան էլ ավելին: Ինքն էլ պատասխանեց, որ նույնը ինձ համար կարող է ասել: Շատ ուրախացանք այդ փոխադարձությունից ու հաջորդ տարիներին դեռ շատ անգամներ կրկնեցինք այդ միտքը ու էլի՝ իրար համար:

Հիմա ես նորից եմ ասում՝ Ալենն իմ կենսագրության ամենակարևոր մարդն էր, ումից ես սովորել եմ միայն լավը, ճիշտը, գեղեցիկը: Ով շատ–շատ ճանապարհներում ուղղորդել ու առաջնորդել է ինձ ու հաստատել, որ աշխարհում հարազատ հոգիներ իսկապես կան:

## Պատարագը

Մի օր Ալենը զանգեց, ասաց, որ ուզում է պատարագի գնանք: Որոշեցինք Կոմիտասի պողոտայի նորակառույց եկեղեցին գնալ, այնտեղ դեռ չէինք եղել: Հունվարի 19–ն էր, առավոտյան շուտ հանդիպեցինք, ուսումնասիրեցինք եկեղեցու ճարտարապետական ու գեղարվեստական հարդարանքը դրսից ու ներսից: Մինչ քննարկում էինք սրբանկարները, զանգերը

հնչեցին, ու նկատեցինք, որ ամբողջ եկեղեցին արդեն լիքն է: Հազիվ մի տեղ գտանք վերջին շարքում ու կանգնեցինք:

Ավարտից հետո Պատարագի խորհրդով լցված, հանգստացած ու մի քիչ էլ մրսած՝ դուրս եկանք եկեղեցուց: Մտանք մոտիկ մի սրճարան՝ թեյ խմելու: Էնտեղ մի աննկարագրելի կռիվ էր ընթանում աշխատող երկու կանանց միջև: Բայց Ալենը աներեր էր, չհամաձայնվեց դուրս գալ, ու նստեցինք թեժ մարտերի էպիկենտրոնից մի քիչ հեռու: Այդ կանանց կռիվը պարբերաբար մարում ու հետո նոր թափով էր բռնկվում: Դա էր պատճառը, որ պատարագից հետո ողջ խաղաղությունը, որ զգում էինք, շատ արագ ցրվեց: Ինչ–որ պահի եկավ սրճարանի մենեջերը, մտածեցինք, որ հիմա վեճը կհարթվի, բայց այդ կինը պարզապես ասաց. «Կռվե՛ք, բայց առանց անձնական վիրավորանքների»: Այդ օրվանից դա դարձավ Ալենի սիրելի արտահայտություններից. բոլորին հորդորում էր՝ կռվել առանց անձնական վիրավորանքների:

Ալենն այդ օրը դեռ Գյումրի պիտի գնար, քանի որ հաջորդ օրն ինչ–որ միջոցառման էր հրավիրված: Քանի որ ցուրտ էր, որոշեցինք երթուղային նստել: Նստեցինք ու հասկացանք, որ այսքան տարիների ընթացքում առաջին անգամ ենք միասին երթուղային նստել: Իհարկե, այդ առիթով որոշեցինք լուսանկարվել: Դիմացի նստարանն ու նստարանին նստած մարդու մեջքը խանգարում էին, որ ձեռքս առաջ տանեի ու լավ նկարեի: Ալենը, ինչպես միշտ, սկսեց կատակել: Առաջարկեց, որ հեռախոսը փոխանցենք դիմացի նստողներին ու խնդրենք՝ մեզ նկարեն: Սկսեցինք ծիծաղել, ու երբ զգացինք, որ արդեն անհարմար է ու միգուցե խանգարում ենք մյուսներին, որոշեցինք իջնել երթուղայինից: Իջանք, մնացած ճանապարհը քայլեցինք, ես հասա տուն, ինքը գնաց Գյումրի:



## Ընտանիքը

Ընտանիքն Ալենի համար բարձրագույն արժեք էր: Այն ամեն ինչից բարձր էր դասում: Իսկ Ալենի սերն առ մայրիկը որդիական սիրո օրինակ էր բոլորի համար: Երևի իմ ճանաչած ամենակապված, անմնացորդ նվիրված ու սիրող մայր ու որդին էին նրանք:

Ալենի համար օրվա սիրելի ժամը երեկոյան պարոն Գևորգի հետ թեյ խմելու և զրուցելու ժամն էր: Վերջին տարիներին Ալենը շատ էր նմանվել պրն. Գևորգին. նրա նման հավասարակշռված էր, համեստ, հոգատար:
Բայց մի աննկարագրելի ու մոլեռանդ սիրով էր սիրում եղբորը՝ փոքրիկ Դավիթին: Այնքան ցանկություններ ու հույսեր ուներ՝ կապված Դավիթի հետ՝ սկսած նրա ձեռքը բռնած տառերը սովորելուց մինչև գիտության ամենաբարձր աստիճաններին նրան տեսնելը: Ակտիվորեն մասնակցում էր Դավիթի կյանքի յուրաքանչյուր շրջանում:

Ես միշտ մտածում էի, թե ինչքան բախտավոր է Դավիթը, որ Ալենի նման հենապյուն ու փարոս ունի, որը շողալու է նրա կյանքի բոլոր՝ թե՛ ուրախ, թե՛ անսպասելի իրավիճակներում: Բայց, ցավոք, Դավիթը շատ կարճ վայելեց եղբոր ներկայությունն ու հոգատար վերաբերմունքը: Բայց այդ մի քանի տարիներին այնքան սեր ու ջերմություն ստացավ Ալենից, որ, վստահ եմ, կհիշի ողջ կյանքի ընթացքում:

Ալենը սովորաբար բարձրախոսի վրա դրված էր հեռախոսով խոսում: Նրա բանակ գնալուց մի քանի օր առաջ էր, երեկոյան խոսում էինք. մեկ էլ սենյակ մտավ Դավիթը: Ես էլ որոշեցի հարցնել. «Դա՛վ, ի՞նչ ես կարծում Ալենի՝ բանակ գնալու մասին: Շա՞տ ես կարոտելու»: Դավիթը պատասխանեց. «Շա՜տ: Օրերն եմ հաշվելու մինչև հետ գա»: Բայց ո՛չ Դավիթը, ո՛չ էլ մենք այդքան շատ թվեր չգիտենք Ալենի հետ գալու օրերը հաշվելու համար:

## Բոստոն

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը կարմիր դիպլոմով ավարտելուց հետո Ալենը մագիստրատուրայի համար դիմել էր Բոստոնի համալսարան: Հունվարի վերջին իմացանք, որ հարյուրավոր դիմորդներից Ալենը ընդունվածներից մեկն էր:

Ականջներիս մեջ դեռ հնչում է Ալենի անսահման ուրախ ձայնը, երբ ընդունվելու մասին հայտնող նամակը ստանալուց հետո զանգել էր՝ ինձ այդ մասին ասելու:

Քանի որ Երևանի բոլոր արձաններից Ալենի համար ամենասիրելին Առնո Բաբաջանյանինն էր, համալսարան ընդունվելու առթիվ իրեն այդ արձանը ներկայացնող կրծքանշան էի նվիրել ու գրել. «Ցուրտ հեռուներում թող քեզ մեր քաղաքի ջերմությունը փոխանցի»: Բայց ո՛չ Ալենը, ո՛չ կրծքանշանը Բոստոն չհասան: Բաբաջանյանը մնաց այստեղ, իսկ Ալենը գնաց շատ ավելի հեռու:

Այստեղ տրամաբանական հարց է առաջանում, թե ինչպե՞ս եղավ, որ չմեկնեց Բոստոն, այլ գնաց բանակ ծառայելու: Ինչ–որ պահից ավելի ու ավելի հաճախ սկսեց խոսել բանակի մասին, ծառայության էջը նույնպես պատվով անցնելու ու փակելու մասին: Եվ որոշեց, որ նախ կանցնի պարտադիր զինվորական ծառայությունը, հետո ազատորեն կտնօրինի իր կյանքը:

Ես շատ էի ասում, որ այդպիսի համալսարանում սովորելու հնարավորություն քչերն են ունենում: Ասում էի, որ ճիշտ կլինի սովորել, հետո վերադառնալ ու այդ գիտելիքները ի նպաստ մեր երկրի զարգացման օգտագործել: Բոլոր այս խոսքերիս պատասխանում էր. «Մի անգամ ընդունվել եմ, էլի կընդունվեմ: Հաջորդ անգամ Օքսֆորդ եմ ընդունվելու»:

## Խորհրդավոր ընթրիքը

Ալենը բանակ գնալուց օրեր առաջ ընկերների համար ընթրիք էր կազմակերպել իրենց տանը: Ընթրիքի հաջորդ օրը, երբ խոսում էինք, ասացի, որ մեր անցկացրած երեկոն շատ նմանեցրի «Խորհրդավոր ընթրիքին» (Խորհրդավոր է կոչվում Քրիստոսի երկրային կյանքի վերջին ընթրիքը մատնությունից առաջ: Այդ երեկո Հիսուսը վերջին անգամ սեղան է նստում իր 12 աշակերտների հետ, որի համար այն անվանում են նաև Վերջին ընթրիք): Քրիստոսը և իր աշակերտները 13–ն էին, Ալենը և մենք՝ 12–ը: Մենք բախտավոր էինք. մենք չունեինք Հուդա:

Բայց հիմա ափսոսում եմ. չպիտի այդպիսի համեմատություն անեի: Որովհետև ես գիտեի, որ դա Քրիստոսի համար վերջին ընթրիքն էր եղել, բայց երբեք չէի ցանկանա պատկերացնել, որ մեզ համար էլ վերջինը կդառնար:

Այդ երեկո Ալենը մի շատ երկար կենաց ասաց, որն ավելի շատ նման էր պատգամի ու խորհրդի: Իր այլաբանական խոսքերից մի փոքրիկ մաս այստեղ գրում եմ ու այդ մաղթանքը ցանկանում եմ նաև ձեզ: Ասում էր. «Կա մի բան, որ ես ուզում եմ իմ կողմից ձեր մոտ մնա էս երկու տարիներին, էնպես, ինչպես որ ես եմ ձեզնից շատ բաներ իմ հետ տանում: Ես երկար ժամանակ իմ «տունը» ման եմ եկել ուրիշների մեջ, բայց հիմա

հասկացել եմ, որ իմ «տունը» ես եմ: Ուզում եմ, որ դուք էլ կյանքում գտնեք ձեր «հոգու տունը» ու միշտ պայքարեք դրա համար…»:

Մենք մեր տունն արդեն գտել էինք: Պիտի մաղթեր, որ չկորցնեինք…

## Մանկական գրականության սերը

Ալենը մեր օրերի շատ մտավորականների էր ճանաչում ու հետևում սոցցանցերում: Բայց մի աննկարագրելի հիացմունք, սեր ու հարգանք ուներ գրականագետ, թարգմանչուհի Ալվարդ Ջիվանյանի նկատմամբ: Գնում ու կարդում էր տիկին Ջիվանյանի թարգմանած գրեթե բոլոր հեքիաթները՝ «Վիննի Փու արջուկը», «Օզի կախարդը», «Օլիվեր Թվիստ» և այլն:

«Հարրի Փոթերի» հատորների հավաքածուն ուներ և՛ անգլերեն, և՛ ռուսերեն, բայց գնում էր ամեն տարի լույս տեսնող հայերեն նոր հատորները, որովհետև դրանք իր սիրելի տիկին Ջիվանյանն էր թարգմանում:

Թարգմանություններից բացի հատկապես լուրջ էր վերաբերվում Ալվարդ Ջիվանյանի հեղինակային հոդվածներին ու գրքերին: Մանկական գրականության թարգմանական հարցերի վերաբերյալ դիտարկումներ էր մեջբերում տիկին Ջիվանյանի «Հմայված հոգիների պարտեզում» գրքից:

Մի անգամ Մոսկվայում մի գիտաժողովի էի ներկա: Երբ Ալենը իմացավ, որ այդտեղ զեկուցում էր կարդալու նաև տիկին Ջիվանյանը, շատ ուրախացավ: Հետո մի քանի օր առավոտից երեկո ասում էր. «Ուշադիր կլսես, որ ինձ պատմես: Հանկարծ ոչ մի տառ չմոռանաս»: Իսկապես շատ ուշադիր լսեցի ու պատմեցի իրեն:

Գնում էր բոլոր հանդիպում–միջոցառումներին, որ կազմակերպվում էին տիկին Ջիվանյանի հետ: 2017 թ. փետրվարին նախկին «Բյուրոկրատ» գրախանութում տիկին Ջիվանյանի հետ հանդիպումից հետո նաև լուսանկար էր տեղադրել Ֆեյսբուքում ու գրել. «Հարազատ զգացում է, երբ ձգձգում ես գեղարվեստական գրքի ընթերցանությունը, որպեսզի





ավելի երկար վայելես այն, բայց որ էդպես non-fiction կկարդայի, այ դա բացահայտում էր ինձ համար:

Ավարտեցի մանկական գրականության տեսության խնդիրների մասին տիկին Ջիվանյանի հեղինակած «Հմայված հոգիների պարտեզում» գիրքը, որը նախատեսված է ինձ նման՝ մանուկ ընթերցողին հասցեագրված գրականությամբ հետաքրքրվող մարդկանց համար:

Մի խոսքով՝ երջանիկ եմ, որ հնարավորություն եմ ունեցել անձամբ զրուցելու Ձեզ հետ, տիկին Ջիվանյան»:

Մեկ անգամ էլ մի փոքրիկ հարցազրույց էր անցկացրել տիկին Ջիվանյանի հետ՝ Հարրի Փոթերի առաջին հատորի տպագրվելուց հետո:

Ալենը շատ անկաշկանդ ու համարձակ էր: Շատ արագ խոսակցության նյութ էր գտնում թե՛ ծանոթների, թե՛ անծանոթների հետ: Բայց տիկին Ջիվանյանին երբեք չէր մոտենում: Երևանը շատ փոքր է պատահական հանդիպումներ չունենալու համար: Տարբեր անգամներ տիկին Ջիվանյանին տեսել ենք Օպերայում, Մատենադարանում, քաղաքի տարբեր փողոցներում քայլելիս:

Բայց ոչ մի անգամ չէր համաձայնվում մոտենալ, խոսել իր հետ: Ասում էր. «Չգիտեմ ինչ ասեմ, բա որ լավ տպավորություն չթողնեմ»:

Վստահ եմ՝ Ալենը շատ ուրախ է, որ տիկին Ջիվանյան իր մասին մի քանի փոքրիկ հուշ է գրել և երևի ափսոսում է, որ ժամանակին, երբ բազում հնարավորություններ կային այդ գեղեցիկ խոսքերն անձամբ լսելու, խուսափում էր հանդիպումից:

Ալվարդ Ջիվանյանի հուշերը կարող եք կարդալ էջ 151–ից:

## Վերջին հանդիպումը

Ալենի հետ վերջին անգամ տեսնվեցինք 2020 թ. օգոստոսի 7–ին: Այդ օրը նման չէր մեր սովորական հանդիպումներին, քանի որ հիմնականում մեր հանդիպումները լինում էին շատ ուրախ, անհոգ ու ժամանակն անցնում էր աննկատ: Բայց այդ անգամ ո՛չ ուրախ էինք, ո՛չ տխուր, ո՛չ հանգիստ էինք, ո՛չ անհանգիստ: Մոտ ապագայի հետ կապված անորոշության զգացողություն կար:

Ալենը հանդիպման էր եկել՝ մի մեծ տոպրակ ձեռքին: Տոպրակի մեջ գրքեր էին՝ Ալենից նվեր ստացած իմ վերջին գրքերը: Բայց դրանք փաթեթավորված էին թղթով ու ժապավեններով, չէր երևում, թե ներսում ինչ գրքեր են: Յուրաքանչյուրի վրա փոքրիկ գրություն կար:

Գրքերից ամենամեծի վրա գրված էր.




Չափսից, ձևից ու գրությունից ես միանգամից հասկացա, որ դա արվեստի հետ կապ ունեցող ինչ–որ գիրք կամ ալբոմ է լինելու: Ու իրեն ասացի, որ առաջինը հաստատ դա եմ բացելու:

Եվ իսկապես առաջինը դա բացեցի սեպտեմբերի կեսերին: Ես գիտեի, որ շատ գեղեցիկ մի բան է լինելու, բայց որ այդքան, չէի պատկերացնում: Գրքի անունն է «Импрессионисты»: Ներկայացնում է իմպրեսիոնիզմի ծագման և զարգացման ողջ ընթացքն ու նշանավոր նկարիչներին:

Մի անգամ ես իրեն Կլոդ Մոնեի արվեստին նվիրված մի գեղեցիկ գիրք–ալբոմ էի նվիրել ու մակագրել էի. “Loose yourself in the magical world of impressionism and I will meet you there” (Մոլորվի՛ր իմպրեսիոնիզմի կախարդական աշխարհում, և ես



կդիմավորեմ քեզ այնտեղ): Ալենը այդ օրը ասել էր, որ ինքն էլ ինձ դրան համարժեք գրքով կպատասխանի: Բայց ինքն ինձ նվիրեց մի նկարչի փոխարեն ամբողջ ուղղությունը ներկայացնող ու նկարագրող՝ ինձ համար մի անգին գիրք:

Երկրորդ գրքի գրությունը ասում էր.




Ինձ շատ էր հետաքրքրում, թե ինչ գիրք է ներսում: Անընդհատ փորձում էի գուշակել, տարբերակներ էի ասում, բայց բոլորը սխալ էին: Սա էլ ավելի էր շարժում իմ հետաքրքրությունը: Երբ արդեն բանակում էր, ասում էր, որ այդ գրքին կարելի է «մոտենալ» միայն «Ֆաուստը» կարդալուց հետո: Ես էլ հավատացել էի, որ դա իսկապես շատ լուրջ և բարդ մի գիրք է: Ու երևի այդպես հավատալով էլ կկարդայի «Ֆաուստը» և նոր կհամարձակվեի մոտենալ իր գրքին, եթե չլիներ պատերազմը: Պատերազմի հենց առաջին օրն էլ բացեցի, որովհետև ուզում էի իր հետ կապված ևս մի բան ինձ ավելի մոտ լիներ: Բացեցի ու սկսեցի ծիծաղել: Ներսում «Վանականը, որը վաճառեց իր Ֆեռարին» գիրքն էր՝ մեր օրերում ամենաշատ վաճառվող ու կարդացվող գրքերից մեկը: Ոչ ոքի ճաշակը և նախասիրությունները ոչ մի դեպքում վիրավորել չցանկանալով՝ պետք է ասեմ, որ մենք միշտ անլուրջ էինք վերաբերվում այդ և նմանատիպ գրքերին: Ինտերնետում մի քանի էջ կարդացել ու իրեն պատմել էի, համոզվելու համար, որ այդ գիրքը չի համապատասխանում մեր ճաշակին:

Ես գիտեմ, թե Ալենը ինչքան հետաքրքիր էր ծրագրել այդ ամենը: Պատկերացրել էր, որ ես կկարդամ «Ֆաուստը» ու մեծ հույսերով կբացեմ փաթեթավորումը, կտեսնեմ՝ ինչ է ներսում, կբարկանամ, կծիծաղեմ, կզանգեմ իրեն, ու ինքը մի լավ

կուրախանա, թե ոնց եմ ես «խաբվել»: Բայց այդ ամենը պլանավորելիս ի՞նչ իմանար, որ երբ բացեմ, իրեն էլ զանգել հնարավոր չի լինելու:

Երրորդի վրա գրված էր.




Երբ այդ տողերը կարդացի, ծիծաղեցի ու ասացի. «Էս մեկը կյանքում չեմ բացի: Աշխարհի ամենալավ լավագույն ընկերը ես արդեն ունեմ, էլ գրքից անիրական ու անշունչ ընկերն ի՞նչ եմ անում»: Բայց, ինչպես հասկանալի է, դա նույնպես բացել եմ: Ներսում «Վինի Փու արջուկի» երկու փոքրիկ հատորներն էին: Ալենի կարծիքով «Վինի Փուն» այն հեքիաթներից է, որով կարելի է դաստիարակել ու շատ բան սովորեցնել երեխաներին: Չգիտեմ, ես Ալենի պես հեքիաթների սիրահար չեմ ու այդքան խորությամբ չեմ հասկանում դրանք, բայց անպայման կկարդամ, ու միգուցե Վինին Քրիստոֆեր Ռոբինից բացի նաև ինձ համար լավ ընկեր դառնա: Բայց ես երևի լավ ընկեր չեմ լինի Վիննի համար, որովհետև միշտ իմ իրական ընկեր՝ իմ Ալենին եմ հետ ուզելու:

## Բանակը

Ալենը արյան ժառանգական հիվանդություն ուներ՝ ժիլբերի համախտանիշ: Բուժզննման ժամանակ բժիշկներին ասել էր, որ այդ խնդիրն իրեն չի անհանգստացնում, որ ինքը առողջ է, և իրեն պետք է անպայման բանակ զորակոչեն:

Մնացած բոլոր ստուգումներն անցնելուց հետո մի տարօրինակ անհամբերությամբ սպասում էր ծանուցագրին: Նույնիսկ զանգել հարցրել էր, թե ինչո՞ւ է ուշանում: Բոլորս ծիծաղում էինք



նրա այդ անհագ ձգտման վրա՝ որպես առաջ ստանալ ծանուցման թերթիկը:

Մի քանի օրից ծանուցագիրը «վերջապես» եկավ, ու Ալենի սիրտը տեղն ընկավ:

Ալենն անընդհատ ասում էր. «Դե ես Ղարաբաղ եմ ընկնելու: Մնում ա տեսնենք՝ կոնկրետ ուր»: Ես էլ ասում էի. «Կարևոր չի՝ ուր, կարևորը՝ անփորձանք անցկացնես»: Ու, դժբախտաբար, իսկապես որ կարևոր չէր, թե ուր, որովհետև փորձանքը հասավ բոլորին էլ:

Օգոստոսի 12–ին զինվորական տեղամասում վիճակահանությամբ ընկել էր Մատաղիսի զորամաս:

Իհարկե, հասկանալի է, որ միջավայրը և կենցաղային պայմանները շատ էին տարբերվում իր սովորական առօրյայից, բայց Ալենը չէր բողոքում ու շատ արագ հարմարվեց այնտեղի կարգուկանոնին և պահանջներին:

Մի քանի շաբաթ հետո Ալենին վերցրել էին կապի վաշտ: Շատ ուրախ էր այդ առիթով և մի օր զանգեց ու ասաց, որ սեպտեմբերի 14–ը տոն է՝ Կապավորի օրն է: Ասում էր, որ սրանից հետո պիտի անպայման նշենք այդ տոնը: Ես էլ, հիշում եմ, ասացի. «Ալեն, քո բանակ գնալով մեր կյանքում սկսեցին նոր տոներ ավելանալ, որոնց մասին առաջ չգիտեինք էլ, ես ո՞նց եմ էդ բոլորը հիշելու»: Բայց այդ ասելու պահին չէի պատկերացնում, որ նույնիսկ մի ամիս չանցած մեր կյանքում ավելանալու են շատ–շատ դժբախտ ու տխուր օրեր, իսկ տոնները կորցնելու են իրենց ուրախությունն ու նշանակությունը:

## Գրքի առաջին տողը

Ալենը բանակում նույնպես կարդում էր: Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղության» առաջին հատորը վերջացնում էր արդեն: Բայց, իհարկե, բանակում կարդալու համար ժամանակ ավելի քիչ էր ունենում, քան Երևանում:

Տարբեր գրքերի հետ «կապի մեջ» լինելու համար մի օր ինձ խնդրեց, որ ամեն գիշեր իրեն որևէ մի գրքի առաջին տող ուղարկեմ ու գրեմ՝ ով է հեղինակը և որ թվականին է առաջին անգամ լույս տեսել:

Ինձ էլ շատ դուր եկավ այդ միտքը: Ամեն օր մեծ սիրով էի մտածում, թե որ գրքի առաջին նախադասությունը պետք է գիշերը ուղարկեմ, որ ինքը առավոտյան արթնանա, կարդա ու օրը լավ գրականության հետ կապով սկսի: Ինքն էլ այդ տողերը գրում էր իր նոթատետրում, իսկ օրվա ընթացքում հեռախոսով խոսելիս ինձ ասում էր իր կարծիքը ու փորձում էր գուշակել հաջորդ օրվա համար որոշածս գիրքը:

Մի անգամ նամակն ուղարկելիս ինքս ինձ մտածեցի, թե ինչքա՞ն ժամանակ դեռ պիտի այդ տողերը ուղարկեմ, մտածեցի՝ հանկարծ մի օր իմ իմացած գրքերը չվերջանան: Ծիծաղեցի մտածածիս վրա ու անցա առաջ: Բայց այդ հարցի պատասխանը եկավ շատ ավելի շուտ ու աննկարագրելի ավելի վատ ձևով, քան ես կարող էի պատկերացնել:

Ընդամենը 5 տող հասցրի ուղարկել: Նկարներով կարող եք տեսնել, թե որ գրողների որ գործերն էի ընտրել: Վերջին տողը, որ ուղարկել եմ սեպտեմբերի 26–ի համար, Ռաֆֆու «Խենթից» էր: Ասվում էր. «Բայազեդը պաշարված էր: Թուրք, քուրդ, բոշա, ջուլո և








ավելի քան քսան հազար խառնիճաղանճ բաշիբոզուկներ, խառն տաճկաց կանոնավոր զորքերի հետ, շրջապատել էին կիսավեր քաղաքը»: Հաջորդ օրը իմացանք, որ թուրք, քուրդ, բոշա, սիրիացի և ադրբեջանական հազարավոր զորքեր հարձակվել էին մեր երկրի վրա: Թե ինչու էի այդ օրը այդ ստեղծագործությունը ընտրել՝ չգիտեմ: Միգուցե զգում էի, միգուցե զգուշացնում էի, միգուցե և ուղղակի պատահականություն էր:




Իսկ նոթատետրը, որի մեջ Ալենը անց էր կացնում այդ տողերը, պատերազմի օրերին էլ իր հետ էր: Այդ անիծված պայթյունից դուրս էր թռել գրպանից ու ընկել էր իր կողքին: Հրամանատարը նկատել էր, վերցրել ու հետո փոխանցել Ալենի ընտանիքին:

Նոթատետրը կիսապայրված է, սևացած, պոկոտված, բայց երևում են Ալենի ձեռքով սիրով գրված այդ մի քանի տողերը:

## Պատերազմը

Ալենի բանակային ընկերներից մեկը՝ **Մազմանյան Էդուարդը**, սիրով համաձայնվեց պատմել Ալենի բանակային կյանքի և պատերազմի օրերի մասին: Եվ ես այստեղ բառացի ներկայացնում եմ նրա պատմածը:

*«Ես արդեն մի տարի ծառայում էի, երբ Ալենը եկավ, ու առաջին անգամ որ տեսա, դեմքը ծանոթ թվաց: Հետո հասկացանք, որ Գյումրու Թումոյի ընդհանուր ծանոթների միջոցով էինք հանդիպել, քանի որ ես էլ Գյումրիից եմ:*

*Որ նոր էր եկել, մտածում էի՝ դժվար կհարմարվի բանակի կյանքին, բայց էնքան կազմակերպված էր, որ բոլորից ավելի արագ ադապտացվեց: Սկզբում ասում էր, որ կան կանոններ, հրամաններ, որոնց իմաստը չի տեսնում: Բայց դրանց նշանակությունն էլ շատ արագ հասկացավ:*

*Ալենի պես տղա չկար մեր զորամասում, էս նրա համար չեմ ասում, որ զոհվել ա ու պետք ա փառաբանել, այլ իսկապես տենց էր: Իրանից շատերը ուզում էին սովորել՝ մեկը՝ անգլերեն, մեկը՝ ռեժիսուրա, մեկ ուրիշն էլ՝ հոգեբանություն:*



*Ասում էր, որ բանակը շատ լավ ու անհրաժեշտ կառույց ա, ուղղակի պետք ա համակարգին ներսից ծանոթանալ ու փորձել բարեփոխումներ անել:*

*Մենք շատ էինք զրուցում, տարբեր բաներ քննարկում, ու Ալենը հաճախ ասում էր, որ լավին էլ ա պետք լավով պատասխանել, վատին էլ: Ու հետաքրքիր ա, որ կռվից երկու օր առաջ էինք էդ մասին խոսում, ու ես իրան ասում էի, որ կյանքը գիրք չի, որ հնարավոր չի անարդարության, սպանության, թալանի մասին էջերը թերթել, անցնել, չառնչվել: Պետք ա գիտակցել, որ դրանք էլ են կյանքի մաս ու հնարավոր ա՝ պատահեն:*

*Սովորաբար մարդը ձգտում ա էնպես անել, որ իրեն լավ լինի, բայց Ալենը փորձում էր էնպես անել, որ մյուսներին լավ լիներ: Բոլորին օգնելու էդ ցանկությունը իր միջից էր գալիս: Ու նաև շատ անկեղծ էր: Մի անգամ մեզ խնդիր էր հանձնարարվել. պիտի մալուխ անցկացնեինք հողի տակով: Մի հատվածում անելուց հետո մի քիչ հանգստացանք ու անցանք մյուս տարածքին, ու էդ ժամանակ Ալենին զանգ եկավ, որը կարևոր էր իրա համար: Ես ասեցի, որ կարող ա խոսել, բայց նենց, որ հրամանատարը չտեսնի, թե չէ կարող ա պատժի:*

*Մինչև Ալենը խոսեց եկավ, ես արդեն գործը արել էի: Ու էդ ժամանակ հրամանատարը մոտեցավ հարցրեց. «Վերջացրի՞ք: Շա՞տ եք հոգնել»: Ու էդտեղ Ալենը միանգամից ասեց. «Ամբողջը Էդուարդն ա արել, ես հեռախոսով էի խոսում»: Էդքան ազնիվ լինելու համար չպատժեցին:*

*Ու ես էդ կարճ ժամանակում նկատել էի, թե ինչքան ա ինքը խոսքին արժեք տալիս: Դատարկ բառեր էնքան որ օդում չի ասում, բառերը չի արժեզրկում:*

*Շատ էր կարդում: Երբ օրապահ էր լինում, 2 ժամ կանգնում էր, հետո հանգստանալու 2 ժամի ընթացքում՝ կարդում: Ու մյուսներին էլ էր խորհուրդ տալիս կարդալ: Ով ինչ փնտրում էր կամ ում ինչ պակասում էր՝ ըստ այդմ ստեղծագործություններ էր առաջարկում:*

*Պատերազմի օրերին Ալենին մյուս նորակոչիկների հետ տեղափոխեցին ապաստարան: Ես էլ էի էնտեղ որպես կապավոր:*

*Ու էդ ապաստարանում կապը լավ չէր բռնում, ու Ալենը, մի անկյունում նստած, ձեռքը վերև պահած, փորձում էր կապ բռնել: Ու*

*իրան տանից հաղորդագրություններ էին գրում էն մասին, թե ինչ ա կատարվում, ինչ ա ասում նախարարությունը, ոնց են արձագանքում մեծ պետությունները: Ու էդպես ձեռքը վերև պահած ոնց որ Ախթամարի արձանը լիներ: Ու իսկապես, Ախթամարի կրակի պես մի ճրագ ու լույս էր դարձել մեր համար՝ դրսի աշխարհի հետ կապի:*

*«Զինվոր չեն ծնվում, զինվոր դառնում են» խոսքերը շատ նկարագրող են Ալենի համար: Պատերազմի առաջին պահից շատ պատրաստակամ ձևով օգնում էր ամեն հարցում: Կատարում էր բոլոր հրամանները, շատ դեպքերում էլ ինքնակամ էր տարբեր գործեր անում:*

*Առաջին օրը մի քանի ժամ եղանք ապաստարանում, հետո ոտքով գնացինք Թալիշ: Թալիշում երկու օր մնացինք ու սեպտեմբերի 29–ին էլի իջանք Մատաղիս:*

*Էդ օրերից մեկին ինձ հարցրեց. «Դու զգո՞ւմ ես մահվան շունչը»: Ես ասեցի, որ պատերազմում մահվան շունչը նույնիսկ կույրը տեսնում ա, խուլը լսում ա, անզգան զգում ա…*

*Ալենը զոհվեց սեպտեմբերի 30–ին, ցերեկը, անօդաչուի հարվածից: Մի քանի տղաների հետ զենք ու սնունդ էին բարձում մեքենաները: Արդեն համարյա ամեն ինչ տեղավորել վերջացրել էին, սպասում էին ջուրը հասներ, որ դա էլ դնեին ու ուղարկեին: Բայց չհասցրեցին: Էդ պայթյունից զոհվեցին մեր ընկերներից երեքը՝ Ալենը, Հակոբյան Գոռը, ում ծառայության ավարտին մնացել էր ուղիղ 100 օր և Բեժանյանը:*

*Ապրումները բառերի վերածելը բարդ ա, ու նաև չկա մի լեզու, որով Ալենին հնարավոր կլինի լիովին նկարագրել: Բայց ուրախ եմ ու հպարտ, որ բանակային մի քանի ամիսներին ընկերներ ենք եղել»:*



## Կա մի աշխարհ մեր աշխարհում…

Դեռ բանակ գնալուց առաջ Ալենը բոլոր ընկերներին խնդրել էր իրեն թղթե նամակներ ու անգլերենով գիտական հոդվածներ ուղարկել: Ես ու մեր մի քանի ընկերները նամակներ էինք գրել ու սեպտեմբերի 26–ին իր ընտանիքի հետ ուղարկել: Ալենը դրանք կարդացել է սեպտեմբերի լույս 27–ի գիշերը: Ու հիմա մի քիչ ուրախ ենք, որ գոնե գիտենք, որ մեր սիրո, ջերմության ու կարոտի մասին խոսքերն են միգուցե եղել իր մտքում պատերազմի օրերին:

Ես նամակս ավարտել էի այսպես. *«Էս վերջերս մի քառատող ա պտտվում մտքումս, որ Սևակը գրել ա Հայաստանի համար, բայց ես ասում եմ քո համար.*

*Կա մի աշխարհ մեր աշխարհում՝ ինձ հարազատ,*
*ձեզ անծանոթ:*
*Ուր էլ լինեմ՝ կանչում է նա հազար ձայնով*
*ու սրտագին,*
*Ապրում է նա իմ հոգու մեջ իբրև անբառ,*
*համր կարոտ,*
*Իբրև լեգենդ դեռ չգրված, իբրև մի երգ անսրբագիր:*

*Մինչ նոր նամակներ*
*Քեզ անսահման սպասող, Շող»*

Ու իսկապես, Ալենը մի աշխարհ էր մեր աշխարհում, շատերին անծանոթ, բայց ինձ համար՝ բոլորից ավելի հարազատ…

*Ալենին ու մեր այսքան տարիների ընկերությունը հնարավոր չէ մի քանի էջում ներկայացնել, ու երևի թե պետք էլ չէ: Ես իմ ամենաթանկ հուշերը կպահեմ ինձ համար: Իսկ էստեղ ամենը, ինչ գրել եմ, գրել եմ հույսով, որ Ալենի գաղափարները, համոզմունքներն ու պատկերացումներ արձագանք կգտնեն մեր գիրքը կարդացողների և Ալենին մինչ այս չճանաչող մարդկանց սրտերում: Հուսով եմ, որ սրանից հետո, Ալենին հիշելով, իրար ավելի հաճախ գրքեր կնվիրենք ու դրանք կմակագրենք ավելի սրտանց ու գեղեցիկ: Ավելի շռայլորեն իրար ջերմ խոսքեր կասենք ու կլսենք: Ալենի պես անմնացորդ կսիրենք արվեստը, գրականությունը և մեզ միավորող հայոց լեզուն:*

*Ու Ալենի կողմից բոլորիս ցանկանում եմ մաղթել, որ այսուհետ իրար նկատմամբ լինենք մի քիչ ավելի ներող, սիրող ու հանդուրժող…*

We need at least one friend who understands what we do not say.

– Arabic Proverb

Էդգար Մարտիրոսյան

# ՔԱՅԼԵՐՆ ՈՒ ՊԱՅՔԱՐՆԵՐԸ

Ալենը մեծ երազող էր, իսկ ես շատ բան չէի հասկանում, երբ ծանոթացանք 2014 թվականին՝ Թումոյի աշխատարաններից մեկի ընթացքում: Ո՛չ ես, ո՛չ ինքը էդպես էլ չհիշեցինք մեր ծանոթության դետալները, բայց բավարարվեցինք Թումոյի ու ֆիլմերի ստեղծման անորոշ հավաքական պատկերով՝ որպես մեր ծանոթության խորհրդանիշ:

Իրականում ուրախ եմ, որ ինձ հետ ծանոթությունը պիտի ընդհանրացված Թումոյի հետ կապվեր, որովհետև շատ էր սիրում էդ տեղը, ամեն ինչից զատ մի բանի համար՝ իրեն հարազատ մարդիկ պարգևելու: Մինչև էդ հարազատ մարդիկ հարազատ կդառնային, Ալենը, որպես առաջնորդ, փայլում էր բոլորի մեջ: Համախմբող ու առաջ տանող կերպար էր, ու երևի թե հենց էդ պատճառով էլ ես Ալենին մարդու լավագույն օրինակ եմ համարել ի սկզբանե ու փորձել եմ նմանվել: Իմ՝ Ալենին նմանվելու կապակցությամբ ինձ

«Ալենի չինական քոփի» էին անվանում մեր ընկերները, ու ծիծաղում էինք. նեղվում էի, բայց հիմա մեծ ուրախությամբ եմ հիշում:

Ալենի հետ քայլ առ քայլ մտերմացա: Նախ՝ բառի բուն իմաստով քայլեր, բայց նաև՝ մեծ, երկար ու կարևոր: Շատ էինք քայլում միասին: Ալենն էնպիսի մարդ էր, որի հետ քայլելու առիթը բաց չթողնելու համար իմ տան ուղիղ հակառակ ուղղությունով էի գնում ու հետո ավտոբուսով ետ էի դառնում: Ի դեպ՝ էդքան քայլելուն մեկտեղ, Ալենը չէր սիրում կոշիկները մաքրել կամ կոշիկների մի փոքր մաշվելուց չէր նեղվում ու նորը գնում: Կարծում էր՝ կոշիկներն իր անցած ճանապարհների տեսական ներկայացուցիչներն էին: Իրենց մի քիչ մաշվածությունը խորհուրդ ուներ ու հիշողություններ էր կրում: Ալենի հետ քայլելիս խոսում էինք ամեն ինչից, հրաշքներից ու հակառակը:

Հա՛, Ալենի հետ խոսակցությունները երբեմն հրաշքներից բավականին հեռու էին, բայց միևնույն է՝ հրաշալի էին զուտ իր ներկայությամբ: Ալենը հրաշք էր ստեղծում ու պատրաստ էր ցանկացած գնով վտարել չարն ու վատն իր սիրելիների կյանքից: Չափազանց հոգատար էր: Ու կարծում եմ զուտ էն պատճառով, որ իր մտերիմ ընկերների մեջ տարիքով ու փորձով ամենափոքրն էի, իմ նկատմամբ հատկապես հոգատար էր ու ուշադիր: Իր՝ իմ նկատմամբ էս ուշադրությունն ու հոգատարությունը շատ սիրուն արտահայտել է 2019–ի ամռան շրջագայությունից բերած փոստքարտի վրա:





Dear Edgar,
The building depicted on the other side of the postcard is "La Sagrada Familia"; "Passion Façade" which represents the passion and death of Jesus.
Barcelona is also the city where I encountered love the most so love and passion is what I wish to you!
Here you are, opening another volume of the same book, the book of your life. It's not just a blank page or new chapter, it truly is a new volume, so use the ink that is in your hands and write your hero, yourself a true and authentic self. Be yourself and never stop asking. And always remember, Mother is always there for your babe!
Love, Alen 18. Aug. 2019

BASÍLICA DE LA SAGRADA FAMÍLIA
Josep M. Subirachs. Dibuix preparatori de la *Façana de la Passió*, 1992.
© Basílica de la Sagrada Família © Espai Subirachs © laleproduccions
9 789208 904471

*“Dear Edgar,*

*The building depicted on the other side of the postcard is “La Sagrada Familia,” “Passion Facade,” which represents the passion and death of Jesus.*

*Barcelona is also the city, where I encountered love the most, so love and passion are what I wish to you!*

*Here you are, opening another volume of the same book, the book of your life. It is not just a blank page or a new chapter, it truly is a new volume, so use the ink that is in your hands and write your hero yourself, your true and authentic self. Be yourself and never stop evolving. And always remember, I am always there for you!*

*Love, Alen*
*18 Aug. 2019”*

*«Սիրելի Էդգար,*

*Փոստքարտի մյուս կողմում պատկերված շինությունը «Սուրբ Ընտանիքը» տաճարի «Չարչարանքների ճակատն» է, որը ներկայացնում է Հիսուսի չարչարանքներն ու մահը:*

*Բարսելոնան նաև այն քաղաքն է, որտեղ ամենաշատն եմ սեր հանդիպել, այսպիսով ՝ քեզ մաղթում եմ հենց սեր:*

*Ահա և դու բացում ես մի նոր հատոր քո նույն գրքի՝ կյանքիդ գրքի: Սա ընդամենը մի նոր էջ չէ կամ նոր գլուխ. սա իսկապես նոր հատոր է: Օգտագործիր ձեռքումդ եղած թանաքը և կերտիր քո հերոսին քո անկեղծ ու իսկական կերպարով: Ինքդ դու եղիր ու երբեք մի՛ դադարիր զարգանալ: Եվ միշտ հիշիր՝ ես միշտ քո կողքին եմ:*

*Սիրով՝ Ալեն*
*Օգոստոսի 18, 2019»*



Թերևս, իմ էնպիսին լինելու համար որպիսին, որ հիմա եմ իրեն եմ շնորհակալ մեծ մասամբ: Ալենն ինձ շատ բաներ սովորեցրեց. օրինակ՝ պետք է ընտրել մեր պայքարները: Ասում էր. “Pick your fights wisely.” Կարծում էր՝ պետք է իմանալ, թե որ պայքարն էր մերը, որը՝ չէ, որպեսզի էներգիա չկորցնեինք և ուժասպառ չլինեինք անկարևոր խնդիրներով զբաղվելիս, որ վերջում՝ կարևորի ժամանակ, պայքարելու ուժ ունենայինք: Ինքն էլ պայքարող տեսակ էր, ու քանի դեռ ես անձամբ էնքան հզոր չէի, որ պայքարեի իրեն հավասար, ինքը մղում էր իմ պայքարներն էլ ու վերջում դեռ ինձ շնորհակալություն էր հայտնում և ասում. «Էդգարն իմ էն ընկերն ա, որն ինձ հիշեցնում ա պայքարների մասին, որ պետք է մղել, ու հասկացնում, որ անիմաստ չեն էդ պայքարները»:

Հիմա ինքն էլ էստեղ չի, որ շարունակի պայքարել մեր կողքին, բայց իր ընկերներից բոլորն էլ իրենից մի մաս կրում են իրենց մեջ, ինչը նշանակում ա՝ Ալենի պայքարները դեռ չեն ավարտվել, ու վստահ եմ ՝ արժանի շարունակողներ կան:

Ալենի հոգատարությունն իրոք սահմաններ չուներ: Մի «տուն» էր ստեղծել, որտեղ իր սիրելի մարդիկ էին ապրում, ինքն էլ խնամում էր նրանց: Ես պատիվ եմ ունեցել լինելու էդ մարդկանցից մեկը, ում մեծագույն օգնության համակարգն Ալենն էր: 2019–ի ամռանը, երբ էլի միասին քայլում էինք, ինձ ասաց. «Ես այլևս քո օգնության համակարգը չեմ, դու էլ օգնության կարիք չունես, բայց հիմա արդեն ես քո փախուստի համակարգը կդառնամ: Երբ զգաս, որ ոչինչ էլ չի օգնում, կարող ես փախնել ինձ մոտ»: Չգիտեմ՝ հիմա էլ ինչ ասել:

## Դիլիջանում

Ալենի հետ Դիլիջանում անցկացրածս օրերը կյանքիս ամենաուրախ օրերից էին: 2019–ի մայիսն էր: Ինքը Թումոյից գործուղման էր, ես էլ որոշեցի այցելել ու 4 օր նրա հետ անցկացնել, որովհետև երկուսիս անձնականում էլ ծանր շրջան էր, և ուզում էինք ցրվել, թեթևանալ: Ալենն արդեն մի ամիս ապրել էր էնտեղ, բայց Դիլիջանի կենտրոնական փողոցներից բացի ոչ մի տեղ

ոտք չէր դրել: «Ես արկածախնդիր տեսակներից չեմ»,— ասում էր իր ձևով: Բայց քանի որ մի քանի օրով էի մոտը, ստիպեցի, որ մի քիչ ակտիվ անցկացնենք՝ դրական էներգիայով լցվելու համար:

Այցելեցինք Դիլիջանի 2 թանգարանները, Պարզ լիճ գնացինք ու Հաղարծնի վանքի մոտ էլ նորաբաց «Հաղարծնի Գաթայի» համար նկարահանվեցինք որպես տուրիստներ: Անձնակազմը Ալենին միանգամից հավանեց ու իրեն ընտրեց, որ անգլերենով ներկայացնի գաթա պատրաստելու պրոցեսը: Վերջում, որպես նվեր, մեզ երեք գաթա տվեցին, որոնցից մեկն էլ հենց Ալենի պատրաստածն էր, վրան գրած՝ Ալեն: Կյանքումս կերած ամենաքաղցրն էր, ու Հաղարծնի գաթան այլևս երբեք էդ համը չունեցավ:

Ալենին ճանաչողները գիտեն, որ պարել շատ էր սիրում ու շատ լավ էր պարում: Ամեն գիշեր Դիլիջանի փողոցներով



քայլելիս հասնում էինք լճին, որն ունի մի շա՛տ սիրուն, պուճուր կամրջակ: Ալենը կանգնում էր հենց մեջտեղում ու սկսում պարել: Ինձ էլ էր հրավիրում, ասում էր. “Let us dance the night away” (Արի ամբողջ գիշեր պարենք): Պարելն էլ Ալենից սովորեցի Դիլիջանի կամրջի վրա: Բանակ գնալուց առաջ կազմակերպած ընթրիքից հետո ինձ ասաց, որ շատ ուրախ էր, որ ես պիտի լինեի էդպես պարելով իրեն հաջորդողը:

## Կինո

Ալենն առանձնահատուկ հարգանք ուներ ֆիլմարվեստի նկատմամբ. Էնքան, որ երբևէ անօրինական ճանապարհներով ֆիլմեր չէր ներբեռնում, գնում էր կինոթատրոններում նայելու՝ ֆիլմի վրա աշխատած անձնակազմի գործը չանարգելու համար: Ճիշտ է՝ չէր սիրում միայնակ տանը ֆիլմեր նայել: Բայց շատ հաճախ էր կինոթատրոն գնում, թեկուզ միայնակ՝ կինոաշխարհի նորություններից ետ չմնալու ու քննարկելու/քննադատելու համար: Կինոթատրոնում ոչ մի տեսակի ուտելիք չէր գնում, որովհետև կարծում էր՝ ֆիլմը նայելիս ծամելը կամ կողմնակի աղմուկ առաջացնելն էլ էր անհարգալից:

Քանի որ մեծ ուշադրություն էր դարձնում հատկապես հայկական արվեստին սատարելուն թե՛ գրականության մեջ, թե՛ կինոյի, թե՛ արվեստի բոլոր մնացած բնագավառներում, մի օր առաջարկեցի գնալ նայելու հայկական արտադրության մի նոր ֆիլմ ՝ «Էրկեն կիշեր»: Ուզում էինք միասին երկար ժամանակ անցկացնել ու որոշեցինք նույն օրը նայել 2 այլ ֆիլմ: Երկուսիս համար էլ ռեկորդ գրանցեցինք՝ իրար ետևից 3 սեանսի մտնելով: Վերջինի ընթացքում, որը հենց հայկականն էր, էլ

չդիմացավ ու օգտվելով դահլիճի կիսադատարկ լինելուց, նշան տվեց, որ սկսենք խոսել: Ամբողջ ընթացքում խոսեցինք. սկզբում՝ հենց ֆիլմից, հետո արդեն ուրիշ թեմաներով: Ֆիլմից գրեթե բան չէինք հասկացել, բայց ասաց. «Ոչ մեկի չասես, խայտառակ չլինենք: Ով հարցնի՝ շատ լավ ֆիլմ ա, գնացեք նայեք»:

## Հեքիաթներ

Ինչպես Շողակաթը ներկայացրեց, Ալենը գրականության ու հատկապես մանկական գրականության մեծ սիրահար էր: Շատ էր սիրում նաև գրքեր նվիրել ու անպայման մակագրում էր նվիրած գրքերը: Ուզում եմ իմ հատվածն ավարտել՝ կիսվելով մակագրություններով, որ թողել էր երկու հեքիաթների գրքերում, որոնք ինձ էր նվիրել 15 տարեկան դառնալուս կապակցությամբ: Մինչ օրս շատ թանկ եմ պահում էս երկու գրքերը մյուսների հետ մեկտեղ ու ժամանակ առ ժամանակ անդրադառնում եմ դրանց՝ ինչպես ինքը՝ Ալենն էր կարգադրել:

*“Everything you look at can become a fairy tale and you can get a story from everything you touch.*
*Hans Christian Andersen*
*Hope you never stop reading and needing fairy tales.*
*Happy Birthday!*
*04.05.17”*

*(«Ամեն բան, որ տեսնում ես, կարող է հեքիաթի վերածվել, և կարող ես պատմություն ստանալ ամեն բանից, ինչին դիպչում ես»*
*Հանս Քրիստիան Անդերսեն*
*Հուսով եմ՝ երբեք չես դադարի հեքիաթներ կարդալ ու հեքիաթների կարիք զգալ:*

*Ծնունդդ Հնորհավո՛ր*
*04.05.17)*






*“Fairy tales are more than true: not because they tell us that dragons exist, but because they tell us that dragons can be beaten.*
*Neil Gaiman*

*Happy Birthday, darling.*
*04.05.17”*

*(«Հեքիաթներն ավելի քան ճշմարիտ են. ոչ թե այն պատճառով, որ նրանք մեզ պատմում են, որ վիշապներ գոյություն ունեն, այլ այն պատճառով, որ նրանք ասում են, որ վիշապներին հնարավոր է հաղթել»:*

*Նիլ Գաիման*

*Ծնունդդ Հնորհավոր, սիրելիս*
*04.05.17)*

Լիանա Հարությունյան

Այդքան սպասված ժամը տասն է: Ծլընգ: «Երկու րոպեից՝ ֆոեռում»,— կարդում եմ նամակը ու շտապում հագնել բաճկոնս կամ էլ գլխարկս, վերցնել առավոտից ամեն րոպեի հետ ծանրացող պայուսակս ու թողնել կիսատ մնացած գործերս: Մի րոպե: Ստուգում եմ, բացի կորցրած ժամանակից հո էլ բան չե՞մ մոռացել: Ուղղում եմ սեղանի վրա ամեն ինչ, որ լինեն միմյանց զուգահեռ կամ ուղղահայաց: Հեռախոս, քարտ, ու դրմփ, փակվեց առաջին դուռը: Դրմփ: Բացվեց նորը: Դրմփ–դրմփ: Փակվեց երկրորդը, ու բացվեց վերջինը: Ու ինքը: Կամ ավելի ճիշտ կլինի երևի ասել Նա: Ավելի է սազում էդպես: Ա՛խ, Նա:

### Ամենօրյա արարողություն

Կանգ չեմ առնում, մոտենում եմ նրան ու, բացարձակապես չպլանավորված համահունչությամբ, արդեն միասին քայլում ենք դեպի վերջին դուռը: Էս մեկը չի դմփում, էստեղ իրար չենք զիջում, էստեղ ներսի ու դրսի սահմանը մի լոնքով չի, որ հաղթահարում ենք: Ու քամի:

Կանգ ենք առնում մի պահ, ասես սպասում մի վայրկյան, որ մարմիններս սովորեն դրսի սառնությանը, թարմությամբ լցվեն ու բարուրը քանդած նորածինների պես մի լավ ձգվեն: Պիտի գրի կամ զանգի: Գրում կամ զանգում ու ասում է. «Մեր տան մայր աստվա՞ծ: Դուրս եմ եկել, քայլում եմ՝ գամ»:

### Ամենօրյա սովորություն

Քայլում է իրեն հատուկ ոճով, որ նկարագրել չեմ կարող, բայց իրենից մի քանի լոնք առաջ է ընկել հենց իր ինքնավստահությունը, որ թևի տակ է առել խորը–խորը պահված երազանքներն

ու դրանց ինչ–որ բան է բացատրում՝ մեկումեջ ափով երկինքը շոյելով:

Ձախ, ու աստիճաններ են, նույն տեղում՝ ջրափոս: Անցնում ենք խոտերի միջով, ասում էր, թե ինչ–որ համալսարանում միայն պրոֆեսորներին է կարելի խոտերի միջով անցնել: Ու ոտքը հենց այս փաստից էլ ավելի ծանր ու հստակ դնում է խոտերի մեջ: Քայլում ենք արագ–արագ: Գտել ենք իրար՝ երկար լռնքերով ու արագ խոսելով:

### Ամենօրյա պատմություններ

Պատմում է՝ ինչ է արել, ինչ է մտածել, ինչ է լսել կամ էլ ասել: Հարցնում է նույնը ինձ, բայց պատասխաններս կարճ եմ տալիս, ուզում եմ լսել–լսել–լսել: Մի անգամ ասաց. «Խնդիրնե-րիցս էլ մեծագույնն էն ա, որ մենակ ես եմ խոսում»: Ու ավան-դույթ դարձած ճանապարհի կոնկրետ մի կետ, կոնկրետ մի քարե սալիկ, կոնկրետ մի ծառ, որ դարձել են կոնկրետ մի կա-տակի ամենօրյա մասնակիցներ: «Ինչ սիրուն ա երկինքը էսօր»: Ծիծաղում ենք ամենօրյա երկնքի վրա ու թափթփված գցում հաջորդ մի քանի քայլը: Կատակի գծից հետո, կարծես թե, փոխվում է պատմությունը: Էլ չկա առօրեականություն, չկան կրկնություններ ու նմանություններ: Չկան ամենօրյա հարցեր ու բողոքներ, ամենօրյա խնդիրներ: Կա միայն կանգառի երկու կոորդինատ ու դրանց տանող հազարավոր ճանապարհներ ու ճանապարհները լրացնող հազարավոր թեմաներ ու պատմու-թյուններ, քննարկման ենթակա դրամաներ ու բացվելիք գաղտնիքներ:

### Ամենօրյա նպատակակետ

Խոսում է: Հաճախ սիրո մասին, երբեմն՝ անցյալի: Քայլում է թեթև, ձեռքերը դրած ստանդարտից մի քիչ երկար բաճկոնի գրպանները, ականջակալները՝ գրպանում պատրաստ, ուսա-պարկը՝ պարտադիր երկու ուսով գցած: Քայլում է ինքնամոռաց, բայց ինձ չի մոռանում: Իսկ ես, ասես հրաշք տեսած մի քնահա-րամ երեխա, վազվզում եմ կողքից, նայում ու ապուշ կտրած լսում: Լսում–լսում–լսում:



### Ամենօրյա գաղտնիք

Կանգ ենք առնում, նստում, նայում, խոստովանում, երգում, լսում, երազում ու պահում գաղտնիքը, անունը, որ տվել ենք ոչ թե տեղին, այլ զգացմունքին ու տրամադրությանը:

### Ամենօրյա սուտ

Ձանգ: Հոգոց եմ հանում ու կրկնում արդեն անգիր նույն տեքստը. «Հա՛, պա՛պ: Հա՛, տեսել եմ՝ ժամը քանիսն ա: Հա՛, գալիս եմ, կանգառում եմ»: Սպասում ենք մի քանի վայրկյան: Չեմ ուզում գնալ: «Հել»,— ասելով թռչում է ներքև ու պարզում ձեռքը. «Օգնե՞մ. թե՞ strong independent»: Հենց իսկական տղամարդիկ են ֆեմինիստ լինում: Գուցե:

Ու նորից քայլում ենք, արդեն դանդաղ, որովհետև զգում ենք բաժանվելու հոտը, չնայած դեռ ժամանակ կա: Ժամանակ դեռ կա, բայց քիչ է շատ–շատ:

Նայում եմ՝ ուռենին ու նա: Նա ու ուռենին: Ասում էր, եթե ծառ լիներ, հենց ուռի կլիներ: Հա՛, կլիներ: Լույսերը սիրուն–սի-րուն թարթում են, ընկում սիրուն–սիրուն դեմքին, շողքերը արագ–արագ խաղում են, իսկ ինքն էլի խոսում: Գրքերից, սի-րուց, գինուց, նախկիններից, պլաններից, մտքերից: Ամեն ինչից կարծես խոսել ենք: Չէ՛, մի բան կա՝ բաց ենք թողել:

### Ամենօրյա կանգառ

Մոտենում ենք, ու ասում եմ լի վստահությամբ, որ կմերժի ամենօրյա «կարաս չճանապարհես»–ը: Անփութորեն ու կամաց եմ տալիս իրեն խոսքերս, որ հանկարծ չհավատա ու չհամաձայն-վի: Կանգնում է իրեն հատուկ ձևով՝ մեջքով դեպի կամուրջը, դեմքով ինձ, մոտիկ–մոտիկ:

### Ամենօրյա

Չէ, չէ, չէ՛: Ի՞նչ ամենօրյա: Սա սցենարից դուրս էր: Էքսպ-րոմտ, անակնկալ՝ ասես կայծակ պարզ երկնքում:

— Էսօր հետդ մի կանգառ ավել կքայլեմ:

— Լո՞ւրջ:

Թող հետ մղվի իմ մտքին լույսը,
քանի որ իմ և այդ ժամանակի
միջև խոչընդոտ լույսը կդառնամ։
— Գոնսալես Հերմինցուկ

— Հա՛, ուզում եմ քայլել հետդ:

Ու ուրախ այս ամենօրյայից բացի ամեն հնարավոր ածականին մի քիչ համապատասխան որոշմանս քայլում ենք ու խոսում–խոսում: Խցանված է կամուրջը, մարդիկ գնում են տուն, ու մեկ էլ նորից: Նորի՞ց: Հա՛, նորի՛ց: Պատրանքի պես մի միտք ու մի փոքր բարձրաձայն ասված, բայց թաքուն պահած ցանկություն.

«Նենց կվազեի՛»:

**Քամի**

Ձեռքս՝ նրա տաք ձեռքի մեջ, մազերս՝ աջ ու ձախ, պայուսակս՝ հազիվ–հազիվ մատներիցս կախված, իսկ շարֆս՝ քամու հետ ծածանվող: Վազում ենք. կամրջի կեսը դեռ կա: Գոռում ենք: Ի՞նչ: Չգիտե՛մ: Վազում ենք ինքնամոռաց: Բայց ինքն ինձ չի մոռանում: Ձեռքս պինդ–պինդ է բռնել, գուցե վախենում է, որ քամին կտանի: Ինձ չի մոռանում, մտածում եմ ու ավելի արագ վազում: Պտտվում է սիրուն երեսով ինձ: Ու հիմա, նստած իմ սենյակում, աչքերս փակում եմ ու նորից տեսնում ամեն ինչ: Մազերիս միջից դեղին ու սպիտակ լույսերի տակ դեմքն է՝ սիրուն, պարզ: Ժպիտը, հենց էն խելագարության հասցնող ժպիտը: Ու աչքերը, որ լայն ու լիարժեք ժպիտից կնճիռներ են տեղավորում իրենց կողքի անկյուններում: Ինձ է նայում, ինձ չի մոռանում: Ու վազում ենք առանց իմանալու:

Հետո հետաքրքրեց՝ տեսնես մարդիկ ի՞նչ էին մտածում: Գուցե մտածում էին, որ շտապո՞ւմ էինք: Չէ՛, շատ ամենօրյա միտք է ու գործողություն: Գուցե մտածում էին, որ ուզում էինք ավելի շա՞տ սպորտով զբաղվել: Օրվա եռուզեռը ինչ վատ սպորտ է բայց: Գուցե, որ ցնդե՞լ էինք: Դե՛, հավանականությունը քիչ չի: Գուցե, որ մրսո՞ւմ էինք, որոշեցինք վազել ու տաքանա՞լ: Չէ՛, նրա հետ ի՞նչ մրսել: Կրակ է կողքիս, նայե՛ք: Ու երևի մեկը կգուշակեր, որ գուցե վազում են, որովհետև շտապում են, բայց շտապում են ապրել ու ոչ թե տուն հասնել: Գուցե վազում են, որ սովորեն, թե ինչպես է պետք երազանքների հետևից վազել, ոչ թե լոկ ոտքերը մարզել: Գուցե վազում են, որովհետև երիտասարդ են ու երազկոտ ու մի քիչ էլ ցնդած: Գուցե վազում են, որ ներսի կրակը

քամին էլ ավելի ուժգնացնի ու ծակծկող սվիտրի կարիք էլ չլինի: Գուցե վազում են, որովհետև ուղղակի երջանիկ են: Գուցե: Ես էլ չգիտեմ: Ու չեմ հիշում:

Միայն աչքերն եմ հիշում, որ ինձ են նայում: Միայն միտքը՝ ինքնամոռաց վազքի մեջ ինձ չի մոռացել, տեսե՞ք, ինձ չի մոռացել: Միայն ամենօրյա որոշումներիս հետ չսազող, ատամներիս ետևից պատահաբար դուրս պրծած խոսքերս եմ հիշում ու մտածում, եթե հիմա չշշնջամ, այլ վերցնեմ ու գոռամ, որ ուզում եմ վազել, ձեռքս կբռնե՞ս, կվազե՞ս, կպտտվե՞ս ու մինչև ոսկորներս հասնող հայացքով ինձ կնայե՞ս:

Ինքնամոռաց քո վազքի մեջ ինձ մոռացար, Ալե՜ն, ձեռքս թողիր ու մոռացար…



Երվանդ Աբրահամյան

# Անվերադարձ

Կորստի երկու տեսակ կա: Մեկը՝ վերականգնվող, թույլ, անէական, երբ կորցնում ես անպետք, բայց թանկ մի բան. անգամ ամենասիրելի գիրք կորցնելը թույլ կորուստ է: Կա նաև այլ տեսակի կորուստ՝ անվերադարձ, անփոփոխ, երբ իրականությունն անլուծելի է, իսկ կորստի մրմուռից կորցնում ես ինքդ քեզ կամ առնվազն սիրտդ կամ դրա կեսը:

Վերջինը հաճախ չի պատահում, ինչպես օրինակ լուսնի ամբողջական խավարումը, կամ ավելի ճիշտ, հազվադեպ է, ինչպես տիեզերքում մոլորակների՝ հատվելու աստիճան մոտենալը: Անվերադարձ կորուստը մանրամասն մեկնաբանել չես կարող, չի ստացվի, միայն անդառնալի կորուստը կարող է ստիպել այն ճանաչել, զգալ և արդյունքում՝ ատել: Ալենին անսպասելի ու անարդարացիորեն կորցնելը, դժբախտաբար, ինձ ստիպեց ճանաչել ու ատել անվերադարձը:

Ալենի մասին հնարավոր է անվերջ խոսել պատկերների ու իրադարձությունների միջով, նույնիսկ կորսված ապագան հորինելով հնարավոր կլիներ իր մասին պատմել, որոնցում իր կարմիր անձրևային վերարկուն կամ նարնջագույն ձմեռային գլխարկը, որը կրում էր մինչև ականջների ծայրը, կարող են դառնալ Ալենի բացառիկ և ապրեցնող կերպարի խորհրդանիշները: Եթե կյանքում պատահականությունները դասակարգվեին, Ալենին գտնելը, թերևս, կյանքիս լավագույն պատահականությունը կհամարեմ: Ալենը մի քանի տարերք ուներ՝ կրթություն, գրականություն, ֆիլմեր ու աշխարհը դեպի լավը փոխելու ցանկություն:

Վերլուծելով՝ հասկանում եմ, որ իր ընկերներին էլ գտնում էր ըստ այդ տարերքների: Ալենի ու իմ ուղիները հատեց կրթությունը: Չեմ վարանի նշել, որ աշխարհում ամենից շատ կրթության հավասարություն ու հասանելիություն էր երազում, անվերջ կարդում էր, ինքնակրթվում, իր աշխատանքով էլ իր բաժին ներդրումն էր կատարում, ապագան էլ կրթության շուրջ էր պատկերացնում:

Ալենի մեջ գտել էի լավագույն ընկերոջս, աշխարհի լավագույն եղբորը, որի մասին երբևէ կարող էի երազել: Ալենն ինձ սովորեցնում էր ապրել ամեն օրը, հավատալ ինքս ինձ, գնահատել ակնթարթը, չհանձնվել ու անկախ խոչընդոտներից՝ առաջ շարժվել: Ալենն ինձ համար բացահայտեց իրական ընկերությունն ու անմնացորդ բարությունը՝ ամեն րոպե, ամեն օր, մինչև վերջին ակնթարթը: Ալենն ինձ համար դարձել էր ընտանիք. երբ տխուր էի ու աշխարհս շրջվում էր, երբ երջանիկ էի ու աշխարհս ներդաշնակ էր, Ալենն ամեն ինչ էր, Ալենն ուրիշ էր: Ու հիմա զգում եմ կիսով չափ որբացած, ինձ առաջ շարժվել ու աշխարհը սիրել սովորեցնող ընտանիքս էլ չկա:

Գրասեղանիս վրա արդեն անհաշվելի անգամներ աչքի եմ անցկացնում Ալենից ստացած վերջին փոստային բացիկներն ու դրանց վրայի գրությունները, որոնք տանում են անցյալ, որտեղ Ալենը դեռ ապրում, ժպտում ու երազում է: Կարդալով հասկանում եմ, որ բացարձակ անհեթեթություն է կարծել, թե անվերադարձ կորուստը կարող է ժամանակի ընթացքում ամոքվել, ավելի քիչ ցավել, բավական է մեկ ակնթարթ, ու իրար հաջորդում են պատմությունների հերթականությունները, վերջին սարսափը. Առաջին օրվա պես սիրտն արնահոսում է:

Սուզվելով մտքերի աշխարհում՝ փորձում եմ պատճառներ գտնել, մեղավորներ ու սխալներ փնտրել, այլ իրականություն պատկերացնել, չհավատալ, դիմադրել, չէ՛, շարունակել սպասել, փնտրել, անպայման, մինչև գտնեմ: Հետո հանդարտվում եմ, ափիս մեջ եմ առնում ինձ նվիրած կապույտ գլխարկով թզուկի կավե արձանիկն ու հավատում եմ, որ անխոնջ փնտրելով՝ կգտնեմ Ալենին այլ աշխարհում, եթե միայն չկորցնեմ զգալու շնորհը:

"Christmas gives us an opportunity to pause and reflect on important things around us and our friendship is definitely one of these

Christmas, 2019"

(Սուրբ Ծնունդը մեզ հնարավորություն է տալիս կանգ առնել և անդրադառնալ մեզ շրջապատող կարևոր բաներին, անկասկած՝ մեր ընկերությունը դրանցից մեկն է:

Սուրբ Ծնունդ, 2019)

"For one of my favorite human beings on the planet who deserves all the great opportunities he dreams of. I believe, you will live your dreams. All of them.

From your forever friend to mine.
January, 2020
Alen "

(Աշխարհի իմ ամենասիրելի մարդկանցից մեկին, ով արժանի է բոլոր մեծ հնարավորություններին, որոնց մասին երազում է: Ես հավատում եմ, որ դու ապրելու ես քո երազանքները: Դրանք բոլորը:

Քո հավերժ ընկերոջից՝ իմ հավերժ ընկերոջը:
Հունվար, 2020
Ալեն)

## Ճոճանակը

Դիլիջանում անձրևոտ առավոտ էր, արդեն նախաճաշել էինք, անգամ խոտաբույսերով տաք թեյն էինք հասցրել խմել, իսկ նոր արթնացող քաղաքի ձայները, մաղվող անձրևն ու



մաքուր օդը կատարյալ հանգստություն էին հաղորդում: Նախորդ օրը բավական հոգնել էինք, ոչինչ չանելը ժամանակը լավագույնս անցկացնելու կատարյալ տարբերակն էր, իսկ մոտակա այգու դեղին ճոճռան ճոճանակը ոչինչ չանելու և հանգստանալու կատարյալ առարկան էր: Առանց վարանելու հայտնվեցինք ճոճանակին, որի անտանելի ճռճռոցը, իհարկե, մեզ ետ չպահեց տևական ժամանակ ճոճվելուց: Հոգնելով ճռճռոցից՝ կանգ առանք և, իհարկե, կյանքի իմաստի մասին խոսելու և խոր մտքեր փոխանակելու համար ճոճանակի վրա մնալը ևս լավագույն տարբերակն էր:

Ալենն առաջարկեց, որ փորձենք կանխատեսումներ անել, թե ինչպիսին ենք պատկերացնում ապագան, հետո համեմատություն անել և ընդհանրություններ գտնել: Գուշակումներին զուգահեռ դարձյալ սկսեցինք ճոճել դեղին ճոճանակը: Ալենը դիմացս էր, իսկ անձրևային կարմիր վերարկուն, ճոճանակի դեղին շղթաները, մաղվող անձրևի անգույնն ու այգու կանաչն անուղղակիորեն ճչում էին դեռ նոր սկսվող կյանքի ու անվերջ ապագայի մասին:

Գիտեմ՝ հանգիստ էր, ներդաշնակ, մտքերը խորն էին, երևի սովորականից է՛լ ավելի, խոսքերում երկար հրաժեշտի երանգներ կային: Արդեն բանակի ծանուցագիրն ուներ: Երբեմն մտածկոտ հայացքը սևեռում էր դեպի լեռների կանաչը, հետո շարունակում էր խոսել: Ու ճոճվում էր ճռճռան ճոճանակը, խաղում էր քամու ու անձրևի հետ: Անգույն անձրևը կաթում էր կարմիր անձրևային վերարկուին, դեղին ճոճանակը շարունակում էր ճռճռալ, գիտեմ, այդ պահին Ալենը երջանիկ էր:

Ալենի հետ անցկացրած վերջին ամբողջական օրն էր, ամենը խաղաղ էր, ամենն իր տեղում էր, ի՞նչ իմանայի, որ ճոճանակի ճռճռոցն ու անձրևի կաթիլներն այսօր համեմատվելու էին ժամացույցի վայրկյանի սլաքին, որ կյանքն անձայն ետ էր գլորում անվերջ ապագայի վայրկյանաչափը: Իսկ դեղին ճոճռացող Ճոճանակն ի՞նչ իմանար, որ մի օր դառնալու էր մի հեռու հուշ, մի աղոտ պատկեր, անդին մի միտք:

## Պղպեղներն ու շաքարավազը

Երբ Երևանից Գյումրի ժամանած գնացքը կանգ առավ կայարանում, առաջին հայացքից անշուք թվացող ժամանման սրահի մասին կարծիքս ակնթարթորեն փոխվեց, երբ նկատեցի խորհրդային հետարդիական (postmodernism) ճարտարապետության ոչ սովորական առաստաղը: Առաստաղի ծայրերի ամբողջ երկայնքով թափանցիկ ապակիներ էին, հետո շագանակագույն բետոն, իսկ ամենամեջտեղում լազուր ապակին էր, որի կենտրոնում դեղին ապակիներով արևի ուրվագիծն էր, որից էլ իր հերթին՝ կախված էր հսկայական սև ջահը: Համաձայնեք, նման պատկերի ամեն օր չենք հանդիպում: Առաստաղից ստացած տպավորությունիցս սթափվելով՝ հայացքս ուղղեցի դեպի կայարանի մուտքը, որտեղից իրեն հատուկ սահուն քայլերով ու լայն ժպիտով մեզ մոտեցավ Ալենը, ով ժամանակավորապես Գյումրիում էր՝ գործուղման: Գրկեց՝ իրեն հատուկ ամուր սեղմումով, անմիջապես նշեց, որ արդեն կազմել է օրակարգ, իսկ մենք արդեն հասցրել ենք քսան րոպե օրակարգից ուշանալ. Գյումրի ժամանելը երբեք այդքան ուրիշ չէր եղել:

Գյումրի այցի օրը համընկել էր քաղաքում պաստառների ու փայտե ձեռագործ առարկաների ցուցահանդեսների անցկացման հետ, իսկ Ալենին ճանաչողները լավ գիտեն, որ թանգարաններն ու տարատեսակ ցուցահանդեսներն Ալենի աչքից երբեք չէին վրիպում: Օրվա առանձնահատուկ կանգառը, անկասկած, Ասլամազյան քույրերի պատկերասրահն էր, ուր հերթական այցի հիմնական շարժառիթը պատկերասրահի փայտե նախշաքանդակ պատշգամբն էր, որն Ալենին շատ էր գրավել և որի մասին պատմում էր արդեն իսկ կայարանից:

Շրջելով պատկերասրահում՝ կանգ առանք գունավոր պղպեղների նկարի մոտ, որն անբացատրելիորեն գրավիչ ու տարբերվող թվաց: Ալենին հատուկ էր ցանկացած թանգարան կամ ցուցահանդես այցից հետո անպայման գնել փոստային թղթե բացիկներ՝ ընկերների, ընտանիքի համար: Այդ օրը գունավոր պղպեղներով բացիկները Ալենի համար սպասվածից նախընտրելի էին:

Արդեն կեսօրն անց էր, տանն էինք, ճաշել էինք, իսկ թանգարանային օրվանից իրականություն վերադառնալու լավագույն



միջոցը սև սուրճն էր, համենայնդեպս, ինձ համար: Հակառակ իմ երկարատև համոզումներին՝ Ալենը սուրճ երբեք չէր խմում, նախընտրում էր թեյը, իսկ մեր ոսկե միջինը դարձել էր նարնջի թարմ հյութը կամ նարնջի գազավորված լիմոնադը, որը ևս Ալենի նախընտրություններից էր:

Նոյեմբերին Գյումրիում բավական ցուրտ էր, մի պահ անգամ անձրևեց. տաք թեյն ու տաք սև սուրճը օրվան ավելի համապատասխան էին: Դրանք պատրաստելու պատիվն ինձ հասավ, արդյունքում՝ խոհանոցի դարակներում արդեն անհույս փնտրում էի շաքարավազի դարակը: Հերթով բացում–փակում էի սպիտակ կահույքի դարակները՝ շաքարավազի փնտրտուքով: Անհույս փնտրտուքից վրդովված՝ Ալենին խնդրեցի գալ և ինձ ցույց տալ շաքարավազի դարակը:

Հեգնական ժպիտով խոհանոց մտնելով ու շաքարավազի դարակը բացելով՝ իրեն հատուկ տոնայնությամբ մեջբերում է «Աշխարհի մյուս անկյունում ես կփոխեմ շաքարավազի դարակը» տողը (Սյունե Սևադայի «Կախվածություն» գրքից), որն անսպասելի էր, բայց, չգիտեմ ինչու, դաջվում է մտքումս ու միայն հետո էի ի վիճակի լինելու հասկանալ բառերի ողջ իմաստը:

Երեկոյան կանգնած էինք Երևան մեկնող գնացքի մոտ. հերթական ժամանակավոր հրաժեշտներից մեկն էր, որոնց անպայման հաջորդում էր նոր հանդիպումը:

2020–ի հոկտեմբերի 9–ին նոր հանդիպման վերջին հույսն աներևութացավ: Այսօր Գյումրու կայարանը, պղպեղներն ու շաքարավազը Ալենի հետ անցկացրած ամենաթանկ հիշողություններից են:

*Ալե՛ն, ընկե՛րս, կարոտում եմ, կստեմ, եթե ժխտեմ, որ դաղարել եմ սպասել, նոր հանդիպում երևակայել: Ու երևի դժվար էլ դադարեմ: Գիտես, գունավոր պղպեղների թղթե բացիկը երբեք այսքան կարևոր չէր եղել, սուրճ եփելիս շաքարավազի դարակը բացելը երբեք այսքան հիշողություն չէր արթնացրել: Երբեմն մտածում եմ, որ գուցե մի օր «աշխարհի մյուս անկյունում ե՛ս կփոխեմ շաքարավազի դարակը»՝ ամեն օր կախվածություն ունենալով քեզ պատմել դրա մասին:*

Աննա Մկրտչյան

# ՎԵՐՋԻՆ ՆԿԱՐ

Աչքս գցում եմ հեռախոսին, սպասում եմ, երբ պիտի զանգ գա, որ թռչեմ տեղիցս ու աստիճաններից ներքև գցեմ ինձ: Եթե ասել էր ժամը 1–ին, ուրեմն 1–ին էլ կզանգեր, բայց մինչ սլաքները կգային ժամը 1–ին, իմ սիրտը ժամացույցի սլաքներից արագ էր շարժվում:

Օգոստոսի 10–ն էր՝ երկուշաբթի օր, իր գնալուց երկու օր առաջ, ժամը 1:34: Ուշացել էր, բայց ոչ իր մեղքով. ճանապարհին անծանոթ–ծանոթ որոշել էին գրկել, իսկ գրկել նրան՝ մի ուրիշ արվեստ էր:

Դռան զանգը հնչեց, տեղիցս վեր թռա ու վազեցի դուռը բացելու և իսկական ջերմության հաճույքը զգալու: Դուռը բացեցի, մթության մեջ կանգնած էր մի երիտասարդ՝ սպիտակ շապիկով, վրան՝ մի դեղին արջ: Գլուխը փայլում էր, մազերը նոր էր կտրել, ու ինքը ևս փայլում էր ու մութ միջանցքը լուսավորում էր իր ժպիտով: Ներս մտնելուն պես՝ ձեռքերը բացեց ու պարզեց դեպի ինձ, ես ուղղակի ինձ նետեցի ձեռքերի մեջ: «Ոչ մեկի չասես, որ ինձ տեսել ես»,— բարձր ասաց նա: Երբ Ալենը գրկում էր, պետք էր այդ ժամանակ խոր շունչ քաշել, որ մինչև բաց թողնելը քեզ բավականացնի արտաշնչելու: Գրկելիս իմ գլուխը հայտնվում էր նրա կրծքավանդակին, և ես շատ ուժեղ լսում էի սրտի զարկերը ու նույնիսկ կարող էի հաշվել, թե վայրկյանում քանի զարկ է խփում: Մարմնի ջերմություն ու սրտի զարկերն այնքան ուժեղ էիր զգում, կարծես ներթափացեիր նրա հոգու մեջ: Անսահման երջանիկ էի այդ պահին:

Մեր հանդիպումը պլանավորված չէր: Այլ հանդիպում ուներ, ուղղակի շուտ էր հասել իր սովորության համաձայն ու որոշել էր անիմաստ ժամանակ չկորցնելու համար ինձ էլ տեսնել: Ձեռքին

մի տուփ կար, նոր հեռախոս էր առել, որ հետը տաներ բանակ: Նստած զրուցում էինք, ու մեկ էլ ասաց. «Անուլիկ, ինձ 3 հատ նկար ա պետք. մի հատը ՖԲ փոստելու համար, մեկը՝ ինստագրամ, մյուսը սթորի դնելու համար»:

Ես միանգամից վեր թռա տեղիցս ու գնացինք սենյակներից ամենամեծը: Իրականում սրտումս անհանգստություն ու վախ կար. Ալենին նկարելը այդքան էլ հեշտ չէր հատկապես ինձ համար: Ես ինձ արդարացնում էի՝ ում շատ եմ սիրում, չեմ կարողանում սիրուն նկարել:

«Կամերայո՞վ ես նկարելու, թե՞ իմ հեռախոսը տամ: Ինձ թվում ա իմ հեռախոսը ավելի լավ կնկարի»: Ես, իհարկե, լուռ պիտի համաձայնեի, քանի որ ինքը միշտ ճիշտ էր, բայց հետո ինձ չներեի, որ ինձ մոտ այդ օրվանից նկարներ չմնացին:

Մեր աշխատավայրի նորաձևության սենյակում սովետական ոճի երկար մոխրագույն մի վերարկու կար՝ նման սովետական ժամանակաշրջանի փոստատարի վերարկուի: Մինչ կբացեի դեպի պատշգամբ տանող դռները, հայելու դիմաց շորերն էր ուղղում, վերարկուի գոտին չէր կարողանում կապել: Խնդրեց, որ օգնեմ, չնայած ես էլ վստահ չէի, թե կկարողանամ լավ կապել, բայց ինքնավստահ մոտեցա և ուղղակի ինձնից գոհ՝ կապեցի: Վստահ ասացի՝ լավ է, էսպես պիտի լինի: Ժպտաց: Արդեն պատրաստի կադրը կար. Դիրքավորված, հայացքը՝ խոր, իսկ ժպիտը մնաց կամերայի հետևում ու իմ սրտում:

Իսկ էդ նկարում լրջություն ու անպարտելի հայացք կար: Երկու կադր մոտիկից, հետո՝ հեռվից, մի փոքր՝ աջից–ձախից: Կարծես ստացվեց, նայեցինք, հասկացանք, որ առաջադրանքը կատարել եմ: Գոհ էր կարծես ինձնից, բայց դեռ կար երկրորդ փուլը:

Նստեց իրեն բնորոշ ոճով՝ ոտքը գցեց ոտքին ու սկսեց մանրամասն նկարագրել՝ ինչ ձև կարող են լինել նկարները: Առաջին ընտրված նկարի հետևում շենք էր, առաջարկեցի փոխարինել կապույտ երկնքով:

Երբ շենքերը ներկում էի կապույտով, ոտքը ոտքին գցած երիտասարդն ասաց.

— Կարա՞նք հետևի ֆոնին սամալյոտներ դնենք սենց, որ գծով ծուխ ա ելնում դրանցից:

— Դու խնդիր չունես, կուզես՝ ծուխ էլ կավելացնենք:

— Հա՛, իդեալական կլինի:

Ընթացքում հասկացա, որ մի բան սխալ եմ արել, գլուխս թեքեցի, ու մեր հայացքները այդ պահին ասում էին. «Շատ արհեստական չի՞»:

— Հա՛, Անուլի՛կ, արի սամալյոտները հանենք, ծուխը հանենք, մնամ կապույտ երկնքում:

Նկարն անվանեցինք «Ալենը կապույտ երկնքի ֆոնին», երկրորդը՝ «Դուռը բաց», իսկ երրորդը՝ առաջին նկարի շենքով տարբերակը:

Երբ ավարտեցինք նկարների մշակումը, որոշում էր, որ ժամին պիտի փոստի ու ինչ պիտի գրի: 5 րոպե լուռ մնալուց հետո ցույց տվեց գրածը. «Իմ համար վերջացավ, իսկ դուք ձեզ լավ նայեք»…

Նամակ ստացավ, արդեն պիտի գնար: Հակառակ մեր կամքին՝ կանգնեցինք: Էներգիան ու ջերմությունը լուսավորում էին ամեն բան: Պտտվեց, ձեռքերը բացեց, ինձ մնում էր ուղղակի նետվել, ինչպես ցուրտ ժամանակ կնետվես տաք անկողինդ, ես էդպես ինձ գցեցի նրա ձեռքերի մեջ:

— Քեզ լավ կնայես, Անուլիկ, մինչև հետ գամ: Լիքը բաներ կանես, նույն տեղում չմնաս, քո համար խնդիրներ ստեղծի՛ր ու փորձի՛ր դրանք լուծել:

Համաձայն էի ամեն բառի հետ:

Դուռը բացվեց, դուրս եկավ, բայց ջերմությունն ու շնչառությունը դեռ ինձ հետ էին: Զգացի, որ ինչ–որ բան կիսատ էր, դուրս վազեցի՝ Ալե՛ն, Ալե՛ն: Աստիճանները գլորվելով՝ երկու–երեք… ես արդեն ներքևում էի, հարվածելով գրկեցի, երկու քայլ հետ գնաց ու ծիծաղեց բարձր.

— Արի նկարվենք վերջին անգամ...

Մարիա Հովհաննիսյան

# ՆԱՄԱԿ ԸՆԿԵՐՈՋՍ

Դատարկությունը երբեմն ավելի ծանր է: Ի վերջո, երբ կորցնում ես հարազատ մարդու, ոչինչ չի կարող փոխել այն փաստը, որ քեզ մնում է միայն դատարկությունը, բաց տեղ քո ներսում, որտեղ նախկինում եղել է այդ մեկը, ում շատ սիրում էիր:

Իմ անգի՛ն ընկեր, քեզ պես մարդու ես երբեք չեմ հանդիպել: Մեր ծանոթությունը, անշո՛ւշտ, ծիծաղելի էր, շատ ենք հիշել, շատ ենք կատակել: Դու էլ գիտես, թե կարճ ժամանակահատվածում ինչքան սիրեցի քեզ:

Իսպանիայից վերադառնալիս եկար նվերով ու փոստքարտով, որի մեջ պատմում էիր Իսպանիայի, մասնավորապես Բարսելոնայի՝ քեզ վրա թողած լավ տպավորության մասին: Միայն թե եղանակը դուրդ չէր եկել, շատ տաք էր քեզ համար, իսկ փոստքարտի վերջում գրել էիր.

> *“In a very short period of time you became a very dear friend to me and I hope that our friendship will continue in the future, too!*
>
> *Love, Alen*
> *19 August, 2019”*
>
> *(Հատ կարճ ժամանակահատվածում դու դարձար ինձ համար շատ սիրելի ընկեր, և հուսով եմ, որ մեր ընկերությունը կշարունակվի նաև ապագայում:*
>
> *Սիրով, Ալեն*
> *19 օգոստոս, 2019)*

Հիշո՞ւմ ես՝ քեզնից ինչքան շատ էի խորհուրդ հարցնում, որովհետև գիտեի, որ դու միակն ես, ով հասարակության կողմից ընդունված «օրենքերին» նշանակություն չի տալիս, ու միշտ իմ սրտի ուզածն էիր բարձրաձայնում: Իմ ուղեղն էլ նույն պահին կամավոր հետ էր քաշվում ու անում էի այն, ինչ դու էիր խորհուրդ տալիս, այսինքն՝ ի վերջո, այն, ինչ սիրտս էր ուզում:

Կներես, իմ իդեալիստ ընկեր, որ ծնունդիդ խայտառակ վատ նվեր էինք արել: Կարոտելու եմ ժպիտդ, հումորներդ, խորհուրդներդ, ձայնդ, գրքերից մեջբերումներդ, պարելդ, Աստված իմ, պարելդ: Կարոտելու եմ ՔԵԶ, Ալեն:

Հիշում ես՝ մի անգամ ասացի Քեզ, որ տիեզերքին շնորհակալ եմ ձեր, իմ ընկերների, համար: Ինչքան էր դուրդ եկել ընկերների համար տիեզերքին շնորհակալ լինելու միտքը, ու ինչքան էի ես հպարտանում տվյալ փաստով:

Մեկ այլ փոստքարտում էլ ցիտել էիր քո սիրելի Վիննի Պուհի հեքիաթից հատված, նաև հույն ողբերգակ Եվրիպիդեսի խոսքերը.

*“Sometimes the smallest things take the most room in your heart and it is also said that gifts persuade even the gods.*

*From my trip and for the opportunity*
*Love, Alen*
*October, 2019”*

*(Երբեմն մանրուքներն ամենաշատ տեղն են զբաղեցնում սրտում, և ասում են նաև, որ նվերներով կարող ես նույնիսկ աստվածներին համոզել:*

*Իմ ուղևորությունից և հնարավորության համար*

*Սիրով, Ալեն*
*Հոկտեմբեր, 2019)*

Քո կերպարի մասին խոսելն ուղղակի ավելորդ ա, քո՝ մարդկանց կյանքի վրա թողած ազդեցության մասին՝ առավել ևս:

Երբեք չեմ մոռանա, երբ շաբաթ առավոտյան զանգեցիր ու ասացիր. «Ջանի՞կ, կարոտեցի և հատկապես քեզ». ու առաջարկեցիր, որ գնանք բուրգեր ուտելու: Ավանդույթի պես բան էր դարձել միասին բուրգեր ուտելն այն անգամից հետո, երբ, չեմ նշի, թե ում ծնունդին շատ էինք ձանձրացել, ու սուտ հնարելով՝ արագ դուրս եկանք ու շատ ուշ ժամի գնացինք բուրգեր ուտելու: Երկուսս էլ խոստովանեցինք, որ բուրգեր ուտելու մեր փոքրիկ ավանտյուրան ավելի հետաքրքիր էր, քան ամբողջ ծննդյան արարողությունը:

Վերադառնամ շաբաթ առավոտյան զանգին: Այնպես ստացվեց, որ այդ օրը չկարողացա գալ: Մեկ այլ օր, երբ միասին

քայլում էինք, առաջարկեցի մի բան ուտել, համաձայնեցիր, անմիջապես հետո ստացա հետևյալ փոստքարտը.

*“For dear Maria,*

*who rejected my random offer of getting burgers together but wasn’t rejected in her offer of getting shawarma! Why? Cause I am a better friend!*

*From your forever friend to mine*
*January, 2020*

*(Սիրելի Մարիայի համար,*
*ով մերժեց միասին բուրգեր ուտելու իմ առաջարկը, բայց չմերժվեց շաուրմա ուտելու իր առաջարկում: Ինչո՞ւ: Քանի որ ես ավելի լավ ընկեր եմ:*

*Քո հավերժ ընկերոջից՝ իմ հավերժ ընկերոջը*
*Հունվար, 2020)*

Իմ հավերժ ընկեր, քո շնորհիվ ես բացահայտեցի, որ այդ աստիճան սիրել եմ կարողանում: Շատ դեպքեր կարող եմ պատմել, բայց ուզում եմ էգոիստաբար վարվել ու թողնել ինձ միայն: Շնորհակալ եմ իմ կյանքում եղած բոլոր իրադարձություններին, որ մինչ քո հետ ծանոթանալը ես արդեն հասել էի այն գիտակցմանը, որ զգացածի մասին պետք է արտահայտվել: Հաճախ էի հիշեցնում, թե ինչքան շատ եմ քեզ սիրում:

Քո կերպարով շատ եմ հիացել, քո աշխարհայացքով, քո գիտելիքներով: Հնարավոր բոլոր իմ շրջապատներում քո մասին պատմում էի ու պատմելուց, Աստված վկա, աչքերս փայլում էին:

Վերջերս բռնեցի ինձ այն մտքի վրա, որ, փաստորեն, ես քեզ դեռ սպասում եմ: Միասին ինչ–որ թեմա էինք քննարկում, ու մի միտք արտահայտեցիր. «Բոլորի կյանքն էլ գնում ա, կանգնած



չի: Ուղղակի մեզնից որոշների կյանքը կվերադառնա բնականոնին, իսկ մյուսներինը գլխիվայր փոխվելու ա, ու կան վերջին վայրկյաններ, որոնցից կախվում ենք հնի մեջ մնալու համար, բայց դուրս գալն ու ներս մտնելը, արանքում սովորականը բաց թողնելով, միանգամից ա լինելու»: Ինձ թվում էր՝ ես արդեն ընդունել եմ այդ անդառնալի փաստը, բայց պարզվեց՝ ես դեռ վերջին վայրկյաններից եմ կախվում՝ հնի մեջ մնալու համար: Ցանկացած իրադարձության, ու մանավանդ, չստացված կամ անհաջող հումորի մասին ուզում եմ արագ քեզ պատմել, ոնց առաջ էր: Արդեն հասել եմ այն վիճակին, որ փորձում եմ պատկերացնել, թե ի՛նչ կպատասխանեիր, ու կարևորը՝ քո ժեստերն ու միմիկաները:

Երբեք չէի հավատա, որ բախտ կունենամ գտնել քեզ պես մարդու: Կունենամ քեզ պես մարդու իմ կյանքում, ում այդչափ կսիրեմ: Քեզնից հետոյի բացը ուղղակի անտանելի ա:

Վերջերս քո մասին խոսելիս ասացի, որ կարոտել եմ քո ֆիզիկական ներկայությանը: Գիտե՞ս, ինչ նկատի ունեի: Չի եղել օր՝ քո մասին չմտածեմ: Քո կարծիքը մտովի չհարցնեմ կամ ենթադրեմ, թե ինչ կպատասխանես: Չեմ չափազանցնում՝ ամենուր ես: Ամենուր ես, բայց չկաս:

Շատ եմ մտածում՝ տեսնես ինչ կլիներ, եթե ընտրեիր ուսման ճանապարհը: Շատ եմ ափսոսում: Հետաքրքիր ա, արդյոք գոյություն ունի՞ զուգահեռ իրականություն ասվածը: Երանի այդ իրականությունում կատարեի բոլոր խոստումներս, որ անդադար երեսով էիր տալիս, որ չեմ արել դեռ: Կգայի քո մոտ ու ոնց խոստացել էիր, ման կտայիր ինձ Բոստոնում, ու միասին կգնայինք Նյու Յորք:

Մինչև հիմա հավատում եմ, որ դու այլ կերպ պետք է քո պարտքը տայիր այս երկրին:

Մենք խոսում էինք ապագայի մասին, կարծես թե գաղափար ունեինք: Երբեք չէի պատկերացնի, որ այսքան շուտ կկորցնենք քեզ: Դու առաջնորդող լույսն ես բոլորիս համար, հիշեցում այն բանի, որ անդադար պետք է ձգտել ավելիին:

Երազումս քեզ էի տեսել, պինդ գրկել էի, քեզնից պինդ. կպատկերացնեի՞ր նման բան:

## Միլենա Բարսեղյան

Ալենի հետ կապված ապագայի ընկերությունն ու միասին կայանալու պատկերացումներս ավելի շատ են, քան հիշողությունները: Անցյալում արդեն եղածով ուրախանում ու երանի ենք տալիս, բայց երբ բաներ կան, որ պիտի լինեին ու չեն լինելու, դա է ավելի դժվարացնում կյանքը:

Ինձ ասել են, որ իմ ու Ալենի գրական ձեռագրերը նման են, ու ես հիմա ավելի պարտավորված եմ գրում սա:

Վիլյամ Սարոյանին այնքան եմ սիրում, որ գրքերից չեմ նվիրում ոչ մեկին: Ալենի հետ վերջին հանդիպման օրը ես գնեցի Սարոյանի «Իմ անուշ փոքրիկ» գիրքն ու նվիրեցի մի թղթային նամակի ու աղոթագրքի հետ:

Թղթային նամակ գրելու համար նոր գրիչ գնեցի ու գրիչն էլ դրեցի նամակի հետ: Կարծում եմ՝ նա չհասցրեց կարդալ իմ նվիրած Սարոյանը: Պատահական բացված էջը կարդացի ու հիշում եմ ինքնապաշտպանական ծիծաղս, որովհետև էդ էջում մի մատ խորքից, գծիկով ու մեծատառով գրված էր. «Իսկ եթե նա զոհվի՞»: Ես ինչո՞ւ ծիծաղեցի, ես ինչո՞ւ չվախեցա:

Այս պատմությանը վկա կա, ես մենակ չէի, մեր մյուս ընկերը՝ Աննան էլ ինձ հետ էր: Ինքը կփաստի, թե էդ բացված էջին ու տողին ինչքան անուշադիր էինք ու անհավանական էինք համարում նույնիսկ կապ գտնել:

Աննան որոշել էր հեքիաթների գիրք գնել, սիրուն կազմով, դե դա Ալենի համար ոչ պակաս կարևոր պայման էր, բայց մտածեցինք վերադարձին կգնենք հեքիաթների սիրուն, փայլուն, գունավոր աշխարհի գիրքը: Վերադարձն է հիմա հեքիաթների գիրք, որ չի մտնում իրականության մեջ:



Սարոյանն ինձ հոգեհարազատ մարդկանցից է, ինչու՞ այդպես վարվեց ինձ հետ:

Ալենը ծնվել է փետրվարի 11–ին, նույն օրը իմ հարազատ ավագ եղբոր ծնունդն է: Եթե եղբորս հստակ գիտեմ՝ ինչ մաղթել, ապա Ալենին դժվարանում էի ու դրա համար նախօրոք կեսգիշերից մի քիչ շուտ ձևակերպում էի՝ ինչ եմ ցանկանում մեկին, ով իր օրինակով արդեն ամենալավն է ցանկացել աշխարհին:

Մաղթանքները վերածվում էին գովքի, որից Ալենը միշտ փորձում է խուսափել:

*11 փետրվար, 2019*

*«Քո մասին ինչ–որ բան կա օդի, ջրի, կրակի ու հողի մեջ: Դու նա ես, որ օգնում ես աշխարհին քո լինելով հենց...»:*

*Ես էս ի՞նչ եմ գրել: Կհամարձակվեի՞ մտածել, որ չլինելով էլ պիտի օգնի: Իսկ եթե լինելով է օգնում, ապա հիմա էս աշխարհն անօգնական ու անտեր թողել է ո՞ւմ:*

*Էդ ծնունդին նվեր էր ստացել իմ ամենասիրելի գրքերից մեկը՝ «Ծաղրասարյակ սպանելը», ու ասացի իրեն, որ այդ գիրքը շատ եմ սիրում, որ կարդալիս իմ կողմից բարևի գրքի հերոս Սրաչուկին ու Բոբ Ռադլիին: Երանի Ռադլիին, որ երբեք դուրս չէր գալիս մարդամեջ: Գիրքն ավարտել էր մարտի 22–ին ու մեջբերել. «Մեզ սովորելու քիչ բան է մնացել, թերևս միայն հանրահաշիվ»: Հիմա էս տողն էլ է արդեն նեղը գցում ինձ, բայց առաջ ուրիշ իմաստ էի տեսնում:*

*Ասաց, որ գրքի երկրորդ մասն ինձ կնվիրի, երբ գնա ուրիշ երկիր, որովհետև Հայաստանում չկա, կբերի:*

*Դեռ սպասում եմ, Ալե՛ն, էդտեղ հեղինակից հարցրու՝ Հարփեր Լիից խնդրի՛ր, քեզ հաստատ կտա, քեզ համար հաստատ կմակագրի:*

*11 փետրվար, 2020*

*«...միշտ թող կարևոր մնան էջանիշները ու գրքերում էջի տակ փոքր թվով նշված բացատրությունները և կարմիրը, որ քեզ այդքան շատ է սազում»:*

Մնաց կարմիրը՝ ուրիշ իմաստով:

Ալենն իմ կամեցած մաղթանքին տիրություն արեց: Իր հետ տարավ մի էջանշան, որի վրա տպել էր այն բառերը, որոնք մենք գրել էինք իր սենյակի գրատախտակին՝ որպես բարի ճանապարհ: Տարավ էջանիշը, ու կարևոր դարձավ դա, որովհետև վրան գրված մնաց. «Նրանք, ովքեր մեզ սիրում են, երբեք չեն լքում»:

Ես գրել էի Հարրի Փոթերից այս միտքը՝ անմնացորդ հավատալով դրան: Հիմա ամեն պահ ներկա լինելդ ու չլքելդ ապացուցում են տիեզերական սերդ ու նվիրումդ:

«Հարրի Փոթերն» Ալենը շատ էր սիրում, առանձնացնում էր և միշտ խորհուրդ տալիս: Մինչև Ալենի հետ Թումոյում ծանոթությունը ես այդքան էլ հատուկ վերաբերմունք չունեի Փոթերի հանդեպ: Մի օր Ալենը ժպիտով ու խրատական ասաց. «Ամո՛թ, ամո՛թ, ով չի կարդացել ու նայել ամենակարևոր բաների մասին–ը»:

Հետո արդեն ամեն Ամանորի նայում էի ու փորձում ինձ էդ մեծ փիլիսոփայությունը հասկանալ այնպես, որ ամոթանքն ինձ չվերաբերեր:

Ամեն հարցում էր օրինակելի, ու սա գովեստի խոսք չէ: Շատ բարձրաճաշակ էր ու առաքինի այնքան, որ մտածում էր աշխարհում ծնված երեխաներին պահել, հասցնել իրենց նպատակներին, ինքը անձամբ երեխա չունենար:

Մի օր ասաց, եթե աղջկա մոտ կա սև շրթներկ ու ցիտրուսային ծամոն, ուրեմն՝ նա իմը կարող է լինել: Դետալների տակ ուրիշ բան էր տեսնում, մի ամբողջ բնավորություն ու աշխարհայացք տեղավորում:

Մի օր ծաղկի խանութին նայելով քայլում եմ, ու ընդառաջ է գալիս իր լավագույն ընկերոջ՝ Գեորգիի հետ: Չէի հասցրել գլուխս ծաղիկներից կտրել, ու հենց էդ ֆիքսեց:



— Բարև՛, ինչ հաճելի ա, որ ծաղիկներին նայում ես նույնիսկ տեսադաշտիցդ վերանալուց հետո:

Հետո էդ նույն ծաղկի խանութից գնեցի ծաղիկներ իր մայրիկի՝ ամենաՆազելի տիկնոջ համար. անթառամ էին ու կապույտ:

***

Երբ հանդիպել էինք էլի մի քանի ընկերներով, զրուցում էինք դեսից–դենից ու մահվան թեմային էլ հասանք:

«Պատկերացնում եմ՝ ութսուն տարեկանում իմ սեփական ծաղկանոցում ճոճաթոռին նստած կմահանամ»: Ես, իհարկե, հասկանում էի, որ էդ պատկերացման տակ ամեն ինչ արած–դրած ու վաստակած մարդու հոգեբանությունն է ու սպասումը:

Դու ամեն ինչ արել ես, ամեն ինչ վաստակել ու շարունակում ես գործդ:

Նույն հանդիպմանն ասաց, որ տասնութ դառնալուց հետո ոչինչ չի փոխվել իր կյանքում: Էդ մենք ենք, որ չափահասությանն ենք վերագրում կարևոր փոփոխությունները. Ալենը թվերի հաշվարկով չէր, որ հասունանում էր:

***

Կարանտինի օրերին պատմվածք–նամակ էի գրել, ու հրապարակվել էր, նաև հայտարարվել, որ կտպագրվի ժողովածուով: Հենց իմացա էդ մասին, գրեցի Ալենին, հետո ավելացրի՝ նենց եմ ուզում զբոսնել էս ուրախությունից, գրեց. «Ո՞ւր գամ հենց հիմա»: Կեսգիշեր էր, չզբոսնեցինք, բայց ձևակերպումը լիքը բան հուշեց իսկական ընկեր լինելու մասին:

Հետո էդ պատմվածքով կիսվեց իր էջում ու գրեց, որ ինքն էլ, իմ գրածի պես, ուզում է մամային պատմելիք երազներ տեսնել:



Ալենի ամեն ոռպեն երազ էր մոր մասին և մայրիկին պատմելիք:

Հետո խոստացա, հենց տպագրվի, կուղարկեմ գիրքը իրեն բանակ: Գրքի շնորհանդեսը պիտի լիներ սեպտեմբերի 29–ին: Չեղավ: Ու նամակն էլ Ալենից չեղավ սեպտեմբերի 29–ին:

Ինձ ասում էր, որ ես լինելու եմ ապագայում ռոմանտիզմի ներկայացուցիչ, իսկ ավելի ուշ հրապարակային գրել էր, որ ռոմանտիկները ներողություն չեն խնդրում:

«Որովհետև մենք սիրում ենք, ու մեզ կարելի ա, մենք տխուր ենք, ու մեզ կարելի ա, մենք փոխելու ենք աշխարհը, մեզ համար դա ա նախանշված»:

Ես ոչ մի բան չէի պատասխանել: Հիմա էլ չունեմ պատասխան կամ շարունակություն էս մտքերին: Ավելի շատ պիտի խոսեցնեի ու ավելի շատ բան իմանայի ռոմանտիկների մասին: Ինչո՞ւ ենք անմնացորդ անփույթ ժամանակի հարցում:

Ֆրանսերեն էինք ուզում միասին սովորել, պայմանավորվել էինք միասին գնալ դասընթացների: Ասում էր՝ ազնվականին վայել լեզու ա, պիտի իմանանք: Ես էլ ավելացնում էի՝ ու Շառլին ա կապում, պիտի իմանանք:

Գրել էր ինձ, որ բանակից հետո դաշնամուր նվագել պիտի սովորեի: Գրել էր՝ բանակից հետո անելիքների ցուցակ ունի:

***

Մի օր պնդում էի, որ մարդը չի կարող անպատասխան երկար սիրել, ինքն ասաց. «Շաաա

Չեմ խաբում, որ իմ հանդիպած ամենաճիշտ որդին է նա: Իր փոքր եղբոր համար էլ հենց լավագույն օրինակն էր. ինչպես պաշտել մայրիկին՝ տիկին Նազելիին:

Մինչև մայրիկին ճանաչելը չէի մտածել էն մասին, թե որտեղից սիրելու էդ կերպը:

Տիկին Նազելին հենց ինքն է սերմանել դա. սեր-մանել, բառի երկու արմատի ճշգրտությամբ Ալենի մեջ սեր է մանել ու քաղել պտուղները:

Տիկին Նազելին պատմում էր մի դեպք Ալենի մանկական համառության մասին, հետո խոստովանում, որ նույն իր համառությունն է՝ ասածը չփոխելու, տեր լինելու ու մինչև վերջ պայքարելու տեսակը:

Խնդրել էր մայրիկին միշտ ծաղիկներ տանել, ասել էր՝ իսկական ընկեր կլինեք, եթե մամաս ծաղիկների պակաս չզգա: Պատերազմի նախօրեին գրել էր՝ «ավելի լավ եմ, քան բոլորը». սաղմնային շրջան վերադարձավ նորից. մայրիկին մոտ լինելը քիչ էր, պետք էր ներսում մնալ և լինել պաշտպանված ու անսահմանության մեջ, լինել ավելի լավ, քան բոլորը:

## Մարիա Սարգսյան

***

Թումոյի ֆիլմարտադրության դասընթացներից մեկի ընթացքում ծանոթացա Ալենի հետ. ես տասներկու տարեկան էի, ինքը՝ տասներեք:

Հիշում եմ՝ Թումոյի կինոթատրոնում հավաքված էինք դասընթացի ամբողջ թիմով: Մասնակիցներից յուրաքանչյուրը նախօրոք պիտի ընտրեր առաջարկվող չորս գույներից մեկը՝ առանց իմանալու դրանց իմաստը կամ էլ տարբերությունը:

Գույներից ընտրում եմ կանաչը: Ինչ–որ հաջողությամբ նույն ընտրությունն անում է Ալենը: Ու գույնի ճիշտ ընտրությամբ (հիմա եմ համոզված, որ ճիշտ) նստում ենք իրար կողքի ու ընկերանում:

Թումոյի ուսանողական տարիների ընթացքում Ալենն ամենատարբեր երազանքներն ու նպատակներն է ունեցել, որոնք մեկ առ մեկ իրագործել է:

Դասընթացի ընթացքում պիտի ֆիլմ նկարեինք, վերնագիր ենք ընտրում «Գիշերը Թումոյում»: Հենց այդպես սիրուն համընկնում են ֆիլմի անունն ու Ալենի մեծ նպատակը: Խոսում էր այդ մասին անընդհատ ու ինձ տանում իր հետևից: Դե, արդեն պարտադիր էր վերնագրին հավատարիմ մնալ ու հենց գիշերը նկարահանել՝ հնարավորինս ռեալիստիկ ֆիլմ ստանալու համար: Էն, որ ասում էի էդքան էլ հեշտ իրագործելի չէր, ճիշտ էի ասում. թույլտվություն չստացանք:

Ալենն ուներ իր հստակ պատկերացումները ֆիլմի մասին՝ ինչ–որ ֆանտաստիկ սպանություններով լի, բայց ես դրանք չէի հավանում ու մի օր, «դավաճանելով» Ալենին, գնում եմ ուրիշ թիմ:

Մտածում էի՝ մտքերս կհամընկնեն ուրիշ թիմում, բայց չգիտեի, որ շուտով հետ եմ գալու: Համեմատելով երկու խմբերը՝ վերադառնում եմ Ալենի՝ միակ տարեկցիս մոտ, ու եզրահանգում, որ մեր համագործակցությունն իսկապես հաջող ու հեշտ է լինելու:

Ալենն ինձ տվեց կոնկրետ հանձնարարություն. «Ունես մի գիշեր, սովորի՛ր ամեն ինչ»: Ալենի հետ երկար ու իրեն հատուկ նամակագրական պայքարից հետո ես պիտի քննություն հանձնեի ու հաջողելու դեպքում ստանայինք երանելի լավ տեխնիկան: Նամակագրությունը կա, պահում եմ, ավելին ասեմ՝ գաղտնի եմ պահում:

Անքուն գիշեր, բայց մեկ է՝ քննությունը չեմ հանձնում, քանի որ տասներկու տարեկան էի ու չգիտեի էլ՝ ինչ պիտի սովորեմ: Չենք ստանում ոչ լավ տեխնիկա, ոչ գիշերվա նկարահանում:

Դասընթացի ավարտից հետո անգամ ֆիլմը ցուցադրել չենք կարողանում, երևի որովհետև ամենափոքրն էինք ու ամենապրոբլեմատիկը՝ մեզ անհամապատասխան պահանջներով:

Նպատակը չի իրագործվում, բայց ընթացքը, մեկ է, շա՜տ բան սովորեցրեց:



***

Ինչ–որ ժամանակ անց Ալենը դուրս է գալիս Թումոյից: Երբ նորից հետ է գալիս, սկսում ենք իրար նորովի բացահայտել ու երկրորդ անգամ ընկերանալ՝ հեքիաթների մասին “Once upon a time”/Լինում է, չի լինում/ սերիալի քննարկումներով:

Յուրահատուկ ու մեկ–մեկ անհասկանալի նպատակասլաց էր: Երբ վերադարձավ Թումո, որոշեց, որ պիտի նորից անցնի արդեն անցած բոլոր ինքնուրույն վարժանքները, իսկ դրանք բարդ չէին, բայց շատ «ջանջալ» էին:

Հետո որոշում է, որ պիտի լինի մարզչի օգնական, ու միանշանակ դա էլ ստացվում է: Որպես երրորդ նպատակ՝ ընտրում է “TUMO News”–ի թիմին միանալը, որի անդամ էի ես արդեն:

Ոչ մի բացառություն. երրորդը նույնպես հաջողում է ու միանում թիմին:

Խոստովանում եմ, որ ոչ մեկի հետ շատ մտերիմ չէի ու Ալենի՝ թիմին միանալը, ամենալուսավոր դեպքերից էր: Որոշում է թիմում լինել օպերատոր: Միանում է օպերատորների 5 հոգանոց թիմին, որից մեկը նորից ես էի: Թիմին ղեկավար էր պետք, ու միաձայն որոշում ենք, որ պաշտոնը բաժին հասնի Ալենին: Ցիտում եմ բառ առ բառ. «...որ ամբողջ պատասխանատվությունը լինի իր վրա, որովհետև մենք դրան պատրաստ չենք»:

Մի մրցույթի էինք մասնակցում, որի ընթացքում ես ու Ալենը հայտնվել էինք տարբեր թիմերում, ու մրցույթը, իհարկե, մրցակցություն ու լարվածություն է առաջացնում: Հենց այդ մրցույթի ընթացքում էլ պատահեց մի օր, որ մասնակից երեք թիմերով մնացել էինք մոնտաժի ծանր գործն անելու՝ բոլորի աչքից հեռու մի սենյակում: Ոգևորված աշխատելով մնում ենք մինչև գիշեր՝ ժամը երկուսը ու հենց էդ պահին հասկանում, որ մեր երազածն է կատարվում. «Գիշերը Թումոյում» ենք:

***

Մի օր զանգում է Ալենն ու ասում. «Դու ինձ պետք ես»: Ասում է, որ Հարրի Փոթերի մասին նախագիծ է մտածել, ու միասին ենք անելու: Նախագիծն սկսում ենք. ինձ դուր էր գալիս ամեն ինչ, ու նոր շունչ է բացվում: Ու ամենօրյա աշխատանքային եռուզեռով անում ենք մեր փոթերյան նախագիծը ու հասնում ամենակարևոր օրվան՝ ցուցադրությանը:

Ցուցադրության ժամանակ թե՛ ինձ ու թե՛ հատկապես Ալենի համար կարևոր մարդ կար, ով առաջարկում է ֆիլմը երկրորդ անգամ դիտել, ինչը բավական լուրջ կոմպլիմենտ էր: Ու հիշում եմ, որ Ալենը, իր կաթնագույն սվիտերով և ուսերին գցած նույն գույնի ժակետով, ձեռքերը խաչած ու տարօրինակ, խորամանկ ու կամ էլ հպարտ ժպիտով նայում էր ինձ ու հպարտանում. ֆիլմը երկրորդ անգամ էինք դիտում:

Նոր տարվա հետ գալիս է նոր փուլ անհասկանալի խառնաշփոթով, անհամաձայնություններով ու աշխատանքային կռիվներով, որոնցից տուժում էր մեր ընկերությունը:



Ունեինք մեր սովորությունները ու պայմանավորվածությունները: Օրինակ, քանի որ չունեինք մեզ հատկացված սենյակ, որոշել էինք, որ Թումոյի երկրորդ հարկի բազմոցները պետք է լինեն մեր «օֆիսները»: Ու հենց ադպես էլ ասում էինք՝ «օֆիսներում» ենք:

Ալենն ինձ շատ էր սիրում, որովհետև երևի տեսնում էր իմ մեջ մեկին, ում հետ կարող է աշխատել ու առաջ մղել, փոխել դեպի լավը:

Մի օր բանավեճի ընթացքում Ալենը վեր է կենում ու գնում առանց մի բառ ասելու, սենյակից վերցնում թեյի իր հսկայական բաժակը ու հեռանում:

Ու նորից կորցնում ենք կապը՝ գուցե իրար ժամանակ տալով հասկանալու ամեն ինչ:

Մի ամսից նորից վերականգնվում է ամեն ինչ կամ էլ սկսում է ընկերության նոր փուլ՝ «Ի՞նչ ա եղել, ո՞ւր ես կորել» նամակով:

Խոսում էինք ամեն օր, ամեն ինչից ու բոլորից: Պարտականություններս էր իրեն տեղյակ պահել տեղի ունեցող բոլոր դրամաների ու բոլոր նորությունների մասին: Ու հենց այդ ժամանակ երևի սովորում եմ Ալենին այնքան, որ ցանկացած լուրջ ու կարևոր որոշում կայացնելուց առաջ քննարկում նրա հետ, որպեսզի մի թարմ ուղեղ հետս մտածեր ու մի ադեկվատ պատասխան տար հարցին:

***

Մի օր հանդիպում ենք ես, ինքը, Աննան, գնում սիրուն մի տեղ ու սկսում է խոսակցությունը.

— Ձեզ շատ լուրջ բան ունեմ ասելու: Ես բանակ եմ գնում:

Աննան սպիտակել էր, իսկ ես գիտեի, որ սուտ էր, ինքն էլ գիտեր, որ գիտեմ իր ստերի մասին:

— Կատակ եմ անում, Թումո գործի եմ ընդունվել:

Ու չնայած արդեն ընկերացել էինք վերջնական ու ընկերացել էինք վստահ, որ լինելու ենք իրար հետ միշտ, միևնույնն է մեզ նաև կապում էր ֆիլմարտադրությունը: Հիշում եմ, երբ Ալենի դիպլոմայինի թեմայով քննարկման ժամանակ ձեռքով–գլխով

շարժում արեց ու ասաց. «սենց կադր եմ ուզում», ես հասկացա՝ ինչ էր ուզում, նայեց ու ասաց, որ կարոտել էր այդպես աշխատելը, որ մի բառից իրար հասկանում էինք:

Ու իրոք, իմ աշխատանքային ամբողջ փորձառության մեջ Ալենը միակ ռեժիսորը եղավ, ում հետ կարողացա կատարյալ աշխատել:

Դրանից հետո պարզ հարց առաջացավ, թե ինչո՞ւ անձնական ինչ–որ ֆիլմեր չենք նկարում: Չգտանք նորմալ մի պատճառ, որովհետև չկար, ու սկսեցինք աշխատել մի նոր ֆիլմի վրա:

Կարանտինի ընթացքում հաճախ խոսում էինք ու քննարկում, բայց հետո եկան տարբեր աշխատանքային գրաֆիկներ, ամենօրյա գործեր, ու Ալենի դիպլոմայինը մնաց որպես միասին արած վերջինաշխատանք:

Ալենն ուղղակի ընկեր չէր, Ալենն ավելի եղբոր պես էր: Կիսվում էի ամեն ինչով ու ինքն էլ ինձ չափազանց լավ էր ճանաչում: Ինքն իմ բարի ու խելացի մի մասն է, որ երբեք չի դադարի կարևոր բան սովորեցնել՝ անգամ մինչև հիմա:



Դիանա Սարգսյան




Հիշե՞մ: Հիշում եմ ընկերս, քո ասած ամեն բառն եմ հիշում, բայց թույլ տուր այս մի ասածիդ հետ չհամաձայնվել: Կարծում եմ, քո կյանքում պարզապես չի եղել ԱԼԵՆ տեսակով ընկեր, դու նրան առանց որևէ կապի միջոցի չես ճանապարհել հավերժական ճամփորդության ու կարոտից մխիթարվելու միակ տարբերակդ ձեր նամակագրությունները կարդալը չի եղել, դրա համար էլ իմ ու քո լավագույն ժամանակների պատկերացումները, կներես, բայց այլևս չեն համընկնում:

Իսկ հիմա ուզում եմ մտովի ետ գնալ իմ լավագույն ժամանակներն ու այնտեղից քո մասին պատմել:

Երբ դուք ազատ եք, ձեզ թիրախավորելու են, որովհետև թիրախավորվում են սպիտակ և ազատ մարդիկ, ու թող թիրախավորեն, ուրեմն՝ դա ձեր կյանքի առաքելությունն է՝ միշտ լինել լուսավոր, միշտ տարբերվել ու միշտ այդքան ազատ մնալ: Ալենն այդ առաքելությունը կրողներից էր, ասում էր, որ հաճախ մեղադրում էին կարծիքը բարձրաձայնելու կամ մեծամիտ լինելու մեջ, բայց իր բառերով ասած՝ ինքն ուղղակի գիտեր իր գինը:

Անկեղծությունն Ալենի մեջ իմ ամենասիրելի հատկանիշներից մեկն էր, բացառիկ հարգանք ունենալով դիմացինի հանդեպ (անկախ տարիքից, ռասսայից կամ այլ բնութագրիչներից)՝ ցանկացած պարագայում, առանց արդարացումների ու «չնեղացնող բացատրությունների» ասում էր իր հեղինակավոր կարծիքը և վերջ: Երբեմն այդ կարծիքը համեմում էր իրեն բնորոշ նուրբ

սարկազմով, և երբ ստանում էր դրան հավասար պատասխան (իսկ ադպես այդքան էլ հաճախ չէր լինում), ալենական հայացքով նայում էր, շնորհավորում կամ ասում.«wow, չէի սպասում»:

Իրականում պետք է անկեղծ լինեմ ու ասեմ, որ Ալենին սիրելը բավականին հեշտ էր, ամեն ինչ ուներ դրան արժանանալու համար՝ բարձր ինտելեկտ, հմայք, հումոր, բայց, որ առավել կուզեի առանձնացնել, դա դիմացինի ներքին լույսը «բռնելու» ու ձեռք պարզելու կարողությունն էր: Ինչպես կասեր լուսանկարիչ Արմեն Տեր–Մկրտչյանը՝ դիմացինի ներքին լույսը տեսնելու համար նախ պետք է ինքդ քո մեջ այն ունենաս ու տեսնես, իսկ Ալենը պարզապես ճառագայթում էր, ու ինքն էլ գիտեր այդ մասին: Յուրահատուկ վերաբերմունք ուներ իր բոլոր ընկերների ու շրջապատի նկատմամբ: Հաճախ մեր մեջ տեսնում էր ավելին, քան մենք ինքներս, նկատում էր մեր միջի ամենաթույլ կայծը և կարողանում էր այնպես ոգևորել ու հավատացնել դրա՝ վառվող կրակ դառնալու մեծ շանսին, որ գործելուց բացի, այլ հնարավորություն չէինք էլ ունենում: Գիտեք, սկզբնական շրջանում մենք ոչ թե այդ կայծն էինք զգում, այլ պարզապես կուրորեն վստահում էինք մեր այն ընկերոջը, ով միշտ ճիշտ էր կամ, ինչպես սովորաբար սիրում ենք ասել, ինքը մեր լավագույն տարբերակն էր:

Սիրում էինք խոսելով քայլել. հետաքրքիր սովորություն ուներ, միշտ նախընտրում էր ինձնից ձախ քայլել, պատճառաբանում էր, որ այդպես իրեն ավելի հարմարավետ է: Չգիտեմ, երևի իրոք որոշակի հարմարավետություն կար, որովհետև երբ աջ կողմում էր հայտնվում, արագ նկատում էր ու մեկ քայլով տեղափոխվում դեպի ձախ:

Ինքն իմ ճանաչած բացառիկ մարդկանցից էր, որ ամբողջ սրտով հավատում էի իր համաշխարհային ճանաչմանը, միշտ մտածում էի, թե ինչպես պետք է պահեմ, երբ արդեն ֆիլմերն արժանացած լինեն:

Հերթական անգամ, երբ քայլում էինք ու զրուցում, հարցրի, թե չունի՞ արդյոք գիրք գրելու միտք, մի պահ կանգ առանք ու ասաց.«Գրողները բաժանվում են 2 խմբի՝ այգեպաններ և ճարտարապետներ: Այգեպանները կարող են թղթին հանձնել իրենց մտքերը, երբ դեռ չգիտեն իրենց սցենարի վերջնական ճակատագիրը, իսկ ճարտարապետները ամեն ինչ նախօրոք ունենում են մտքում, սցենարը սկզբից մինչև վերջ գրված են ունենում գլխում և միայն այդ ժամանակ հանձնում թղթին: Ես ճարտարապետ եմ»: Բայց խոստովանեց, որ այդ ուղղությամբ մտքում արդեն աշխատանքներն սկսված են: Ալե՜ն, երանի պարզվի, որ բոլորիցս թաքուն դրանք ավարտած ես եղել, ու մի օր երջանկանանք գտնելով:

2019 թ. ծննդյան շնորհավորանքի մեջ գրել էի, որ թեկուզ անցնի 60 տարի, իր մեջ ուզում եմ տեսնել ալենական տեսակը: Ինձ պատասխանեց կրկնակի սիրով ու ջերմությամբ. «Դիան, խոստանում եմ, երբեք չթարգել Ալեն լինել»:

Ընկե՛ր, երանի պատերազմի դաշտում ալենական տեսակիդ էդքան հավատարիմ մնացած չլինեիր, անկեղծ եմ ասում, եթե էդտեղ խոստումդ պահած չլինեիր, հո չէի՞ նեղանա, հիմա ո՞ւմ է պետք էս անսահման հպարտություն կոչվածն ու խեղդող կարոտն առանց քո ֆիզիկական ներկայության: Չէ, իհարկե հիշում եմ, որ “The ones, who love us never really leave us” (Նրանք, ովքեր սիրում են մեզ, երբեք չեն լքում), բայց գրկել ու հետդ խոսել եմ ուզում, դրա՞ն ինչ կասես…

Մեզ ճանաչելուց առաջ ինքը նախ իրեն էր լիարժեք ճանաչում՝ իր թերություններով ու առավելություններով, ընդունում էր դրանք, անհրաժեշտության դեպքում՝ կոմպենսացնում, անվերջ ինքնակրթվում և վերջում վայելում իր ազատությունը: Ալենն ազատ էր, երբեք չէր մտահոգվում, թե դիմացինը ինչ կմտածի իր արտաքինի կամ հագուստի մասին: Ապրում էր էնպես, որ ինքը հաճույք ստանար այդ ապրածից: Երբեք շրջապատին հարմարվելու համար չէր խախտում իր սկզբունքները՝ ընդհակառակը, կարողանում էր էնպես անել, որ այդ շրջապատն էլ սկսի հետևել դրանց: Սիրում էր կիրթ ու գրական հայերենով խոսել. հիշում եմ՝

մի անգամ պատմեց, որ ըստ տաքսու վարորդների ճնշող մեծամասնության՝ ինքը հայի նման չէ, որովհետև նորմալ հայերենով չի խոսում. «Եվրոպական հայերենի են նմանացնում գրական հայերենս»:

Սիրում էր չափազանց սիրուն, և մաղթանքներն էլ հաճախ հենց սիրելուն էին վերաբերում.

Ուզում եմ, որ երջանիկ լինես, Դիան, ու երջանիկ կարաս մենակ դու քեզ դարձնես, էդ փաստի գիտակցությունն եմ ուզում ունենաս: Ուզում եմ սիրես, սիրվես, ուզում եմ սիրառատություն լինի կյանքումդ, ուզում եմ տոնես կյանքդ, լիքը բան եմ ուզում: Ու նաև ուզում եմ գրկեմ ու ասեմ, որ ուրախ եմ, որ մենք ընկերներ ենք:

Իսկ դու ասում էիր, թե լավագույն այն տարիներն են, որ հիմա ենք ապրում…



## Գևորգ Տիգրանյան

Ալենի հետ ընկերությունս սկսվեց ԹՈՒՄՈ–ից՝ 2014 թվականին: Խելացի, բարի ու հավասարակշռված. սրանք էին առաջին տպավորություններս նրա մասին: Շատ կարճ ժամանակում հասցրեցինք մտերմանալ ու ըստ Թումոյում ընկերության չգրված օրենքի՝ սկսեցինք հնարավորին չափով մասնակցել նույն դասընթացներին: Ինչու հնարավորին չափով, որովհետև Ալենը այդ իսկ ժամանակ արդեն ընտրել էր իր ուղին, որը կապված էր գրելու, կարդալու, նկարահանելու, մոնտաժելու և նման այլ զբաղվածությունների հետ:

Ալենի հետ շատ հաճելի էր շփվելը բոլորի համար, որովհետև նա այն եզակի մարդկանցից էր, ով բավականին տեղեկություն ուներ ցանկացած թեմայի շուրջ զրույցի բռնվելու համար, իսկ դիմացինին հաճելի ու օգտակար էր նրան լսելը: Երևի մարդկանց մեծ մասի մոտ, ովքեր անկեղծ են իրենք իրենց հետ, եղել է այնպիսի դեպք, որ նոր ընկերոջ հետ շատ կարճ ժամանակում մտերմացել են, դարձել են հարազատ հոգի ու սկսել են խանդել այն ժամանակ, երբ այդ նույն ընկերը զրուցել է ուրիշ ինչ–որ մեկի հետ: Իմ կարծիքով բոլորդ հասկացաք մտքիս շարունակությունը: Ես համեմատաբար քիչ էի զրուցում Ալենի հետ, քան մյուսները, բայց զրուցելուց էլ բավականին երկար էր ստացվում: Երկար զրուցելու կողքին, եթե ոչ ավելի բարձր, պետք է դնել այն հանգամանքը, որ կարողանում էինք իրար հետ լուռ նստել դրսում ինչ–որ նստարանի կամ ուղղակի քայլել քաղաքով:

Ալենը շատ ընկերասեր էր: Իր ամեն ընկերոջ համար պատրաստ էր լինել ընտանիքի այն անդամը, ում պակասը որ ուներ տվյալ ընկերը: Շատ էր ուշադրություն դարձնում գեղեցիկ

մանրուքներին ու շատ լավ հիշում էր, թե իր որ ընկերոջ հետ երբ, որտեղ և ինչպես է ծանոթացել, և ամեն մեկի հետ կապված ուներ մի փոքր գեղեցիկ հիշողություն: Ալենը միշտ այնքան խաղաղ էր ու այնքան հանգստություն կար իր մեջ, որ ինձ միշտ թվում էր՝ հենց մի թեթև հրեմ իրեն, նա գետնից կպոկվի ու մոտ 2 մետր այն կողմ նորից կիջնի գետնին: Երևի չկա այնպիսի մի մարդ, ով Ալենի հետ երկու բառ փոխանակելով չզգար, որ սովորական երիտասարդ չէ, ու ինչքան շատ զրուցեր, այնքան ավելի կամրապնդվեր այդ կարծիքը տվյալ մարդու մոտ:

Շատ էր հավանում և գնահատում երեխաների հետ աշխատելը: Միշտ զարմանում էի, թե ինչպես կարելի էր այդ տարիքից նպատակ ունենալ աշխատել երեխաների հետ, քանի որ մենք ապրում ենք այնպիսի հասարակության մեջ, որում մարդկանց մեծ մասը մինչև կյանքի վերջին վայրկյանը մտածում է իր անձի լավ լինելու մասին: Ալենի աշխատանքը երեխաների հետ շատ բան կփոխեր Հայաստանի իրականության մեջ, որովհետև նա գիտակցում էր, որ երկիրը դեպի լավը կփոխվի միայն այն ժամանակ, երբ կրթության մակարդակը բարձր լինի: Ասում էր, որ մինիմումը պետք է կրթության և գիտության նախարար դառնար:

Շատերին դժվար կլինի հասկանալ, շատերին էլ հասկանալուց հետո դժվար կլինի իրենց մեջ ուժ գտնել իրագործելու այն պլանները, որոնք ուներ Ալենը: Ձեզ ներկայացնեմ փայլուն օրինակներից մեկը՝ մանկական գաղութում երեխաների հետ հոգեբանական զրույցներ անցկացնելը՝ նրանց կյանքը ճիշտ հունի մեջ գցելու համար: Այս պլանի հզորությունը և միևնույն ժամանակ դժվարությունը կայանում է նրանում, որ իրագործողը պետք է իր կյանքից մի հատված նվիրաբերի այն անձանց, այն երեխաներին, ում չիմացյալ սխալ քայլերը հանգեցրել են իմացյալ գրեթե անելանելի դրության: Ու հենց այդ «գրեթե» վիճակը ամբողջովին հնարավոր դարձնելն էր Ալենի նպատակը, նպատակը այն ԵՐԻՏԱՍԱՐԴԻ, ով իր այդ տարիքից արդեն իսկ իր մեջ կամքի ուժ էր գտել զբաղվել այդ գործով:

Ալենի նպատակները ներկայացնելով հանրությանը՝ մենք դարձնում ենք դրանք համընդհանուր, դարձնում ենք մի միտք, մի անմեռ սերմ, որն իր տեղը կգտնի մեզանից մեկի գլխում,



կծլի ու կդառնա նպատակ, որը իրագործելու համար պետք է լինենք Ալենի նման բարի, խաղաղասեր ու կամքով ուժեղ: Ալենին ծանոթացնելով հանրությանը՝ մենք նրան դարձնում ենք մի կերպար, ով կմնա միշտ ջահել, անմահ ու օրինակ կծառայի մեզ ու մեր սերունդներին:

Միլենա Ոսկանյան

Չկա ավելի մեծ սպասում, ինչպես քույրն է սպասում եղբոր վերադարձին, հատկապես, երբ այդ վերադաձը լինում է բանակից, ու եղբայրը ուղղակի տղա չի լինում, այլ զինվոր, սրբություն, ով գնացել է պաշտպանելու իր հայրենիքը և իր հայրենիքում գտնվող բոլոր աղջիկներին ու կանանց, ովքեր ևս ինչ–որ մեկի քույրն են: Ուշացումով շնորհակալություն եմ հայտնում, որ դու մշտարթուն կանգնած հսկում էիր սահմանը: Դու քո քաջությամբ մեզանից վանում էիր վախն ու անվստահությունը, հավատ ներշնչում՝ մեր հաղթանակի, մեր ապագայի նկատմամբ:

Ալենի հետ ես դառնում էի ուրիշ՝ ավելի բարի ու լուսավոր, նրա կողքին կրկնապատկվում էր այն դրականը, որ կա իմ մեջ: Նա միշտ իմ պահապան զինվորն էր: Հայրենասիրությունը Ալենին դարձնում էր համարձակ ու վճռական: Թող բոլորիդ հիշողություններում Ալենը մնա անսահման լավատես ու չափազանց հայրենասեր երիտասարդ, ում մեծագույն սերը հայրենիքն էր, իսկ մեծագույն երազանքը՝ աշխարհը փոխել դեպի բարին: Քաջազուն և դժվար ժամանակների հերոս, ում համար չկար առավել բարձր ու սրբազան պարտականություն, քան հայրենիքի պաշտպանությունն էր: Նա ծառայում էր, որպեսզի աշխարհում խաղաղություն լինի ու համերաշխություն, որպեսզի մարդիկ ապրեն հաշտ ու խաղաղ կյանքով:

Դու շարունակում էիր արժանի լինել մեր հին ու նոր հերոսներին՝ Հայկին, Տիգրանին, Վարդանին, Անդրանիկին, Նժդեհին, Մոնթեին: Իսկապես որ. քաջերի սերունդը քաջերն են:

Անահիտ Տերտերյան

Տատիկի կյանքի և ապրելու իմաստ՝ Ալեն: Ասում են հայոց լեզուն շատ հարուստ է, բայց ես վախենում եմ, որ բառերը չեն բավականացնի, որ քեզ նկարագրեմ: Անսահման բարի, բյուրեղյա մաքուր, մայրապաշտ, հիանալի թոռ տատիկի համար, չափազանց սիրալիր և ուշադիր: Մարմնի բոլոր բջիջներով նվիրված եղբայր, շատ ընկերասեր և ներողամիտ՝ շրջապատի նկատմամբ:

Ալե՛ն ջան, բալե՛ս, ես քեզ ասել եմ, որ դու իմ արևն ես, օդն ու ջուրը, իմ հոգու անդունդը: Ալե՛ն, դու հիմա երկնքում ես: Մի՞թե երկնքում շատ չէ երկու արևը: Բավ է քո չար կատակին: Իջի՛ր ներքև ու ինձ ջերմացրո՛ւ քո շողերով: Ես առանց քեզ մրսում եմ ու շուտով կմարեմ:

Գրքերի ու գիտելիքի արքա՛ Ալեն, մարդիկ չհասկացան, որ դու գրչով ավելի ուժեղ կպատերազմեիր և ավելի պիտանի կլինեիր Երկիր մոլորակին: Մարդիկ դեռ շատ կափսոսեն քեզ նմաններին լավ չպահպանելու համար:

Հանգիստ ու խաղաղ ննջի՛ր, իմ հերոս և լուսավո՛ր տղա: Երևի կծնվեն քեզ նման երիտասարդներ՝ շարունակելու քո կիսատ թողած գործերը:

Ալե՛նս, ես շարունակում եմ քեզ փայփայել իմ սրտի խորը խորքերում:

Իմ մարգարե՛ Ալեն…

## Մերի Շահբարյան

Ալենի սերը ֆիլմարվեստի հանդեպ գաղտնիք չէ, բոլորը գիտեն՝ ինչքան էր գնահատում արվեստը, ֆիլմը: Ոչ մի նոր ֆիլմ բաց չէր թողնում, միշտ կինոթատրոն էր գնում, վայելում ամեն վայրկյանը:

Մեկ տարի առաջ այդ անձրևոտ օրը ընկերուհուս հետ որոշեցինք գնալ կինոթատրոն. "Knives out"–ը նոր էր մեծ էկրան բարձրացել: Վերջապես ծանր օրը համալսարանում վերջացնելուց հետո գնացինք կինոթատրոն: Աշխատանքային օր էր, ու մարդ չկար: Տոմսերը վերցրինք ու մի քանի խանութ մտանք՝ մինչև սկսվելը: Արդեն շտապում էինք կինոթատրոն, որ հանկարծ սկիզբը բաց չթողնենք, ու ես զգում էի՝ մեկը անընդհատ հետևում է մեզ: Հոգնած էի, ուշադրություն չէի դարձնում, բայց շրջվեցի տեսնեմ՝ ո՞վ է: Ալենն էր: Քմծիծաղը դեմքին՝ իր լուսավոր ու չարաճճի հայացքով ինձ էր նայում, սպասում էր՝ երբ կնկատեմ:

Դե, իհարկե, Ալենն էր, ո՞նց կարող էր բաց թողնել որևէ ֆիլմ: Բարձր ծիծաղեց, միանգամից մոռացա հոգնածությունս ու վազեցի գրկելու՝ շփոթված ընկերուհուս մենակ թողնելով: Լրիվ պատահաբար հանդիպեցինք, չնայած որ օրեր շարունակ փորձում էինք պլանավորել ու դուրս գալ միասին մի տեղ թեյելու: Ալենն էլ իր տոմսը վերցնում է, գնում ենք դահլիճ՝ ընթացքում ինչպես միշտ ամենատարբեր բաներից խոսելով: Ալենի մայրը՝ տիկին Նազելին, միշտ ասում էր. «Ի՞նչ եք է էդքան խոսում ու խոսում բոլորից առանձին»: Միշտ՝ տարբեր, միշտ՝ հետաքրքիր:

Պոպկորն էր վերցրել: Զարմացա, հարցրի՝ ինքը չէ՞ր մի ժամանակ ասում. «Չի կարելի այդպես անարգել կինոարվեստը,

ֆի՛լմը վայելեք, մի՛ ծամեք»: Ասաց "Darling, we live once, I have realized that. We need to enjoy life as much as we can" (Սիրելի՛ս, մի կյանք ենք ապրում, հասկացել եմ՝պետք է վայելենք այն): Ծիծաղեցի… հիմա օր չկա, որ չհիշեմ այդ բառերը: Նույնը ինձ ասաց մեր վերջին հանդիպման ժամանակ՝ օգոստոսի 11–ին:

Ֆիլմն այդքան էլ չհավանեցինք. «Թույլ էր, բայց վատը չէր, բայց շատ լավն էլ չէր»,— ասաց: Իհարկե, հիմնավորեց, բացատրեց՝ ինչն էր լավը, ինչը՝ վատ:

Երկու ժամանոց պատահական հանդիպում էր, որ օրս անսահման ջերմությամբ լցրեց ու մինչ օրս անընդհատ հիշում եմ: Հիշում եմ ամեն սրամիտ նախադասությունը: Ալենի հետ ունեցած շատ հիշողություններից միշտ առանձնանում է կինոյի պատմությունը. այդ պահին ևս մի անգամ հասկացա, որ Ալենն այն քչերից է, որ կարող է մոայլ անձրևոտ օրս փոխել ու ջերմությամբ լցնել:

## Անի Կապզմալյան

Երջանիկ է այն մարդը, ով իր ապագա մասնագիտության մեջ ունի լավ ուսուցիչներ: «Լավ» ասելով նկատի ունեմ՝ տաղանդավոր, ճիշտ ուղու վրա դնող, ոգեշնչող: Կարճ ասած՝ «լավ» ասելով նկատի ունեմ՝ Ալեն: Բոլոր ուսուցիչները պիտի մի քիչ Ալեն լինեն: Գոնե մի քիչ: Մենք Ալենի առաջին ուսանողներից էինք, այդ պատճառով էլ շատ կապված էինք իր հետ: 2018 թվի հունիսին, երբ «Ֆիլմերի ստեղծման» առաջին դասին մտա դասասենյակ ու տեսա Ալենին դաս բացատրելիս, կարծեցի, թե դասընթացի հերթական ասիստենտն է (դե, շատ երիտասարդ էր, զարմացա, որ այդ տարիքում ԹՈՒՄՈ–ի դասընթացավար էր դարձել):

Կարճամետրաժ ֆիլմերի վերլուծություններ անելուց ու մեր առաջին հանձնարարությունը ստանալուց հետո Ալենը մեզ շոկի ենթարկեց: Ուսումնասիրեց 2 ժամանոց դասի ընթացքում, թե ով ում հետ է մտերիմ, ինչ ընկերական խմբեր կան, որ միշտ իրար հետ են աշխատում, ու բաժանեց դրանք: Ցրեց ամեն մեկիս մի նոր թիմ: Դժգոհ էինք, բայց մեկ ամիս անց հասկացանք, որ ոչինչ պատահական չէր Ալենի մոտ: Իսկապես գիտեր, թե ինչ էր անում: Ու ճիշտ էր անում: Այդ 8 դասի ընթացքում խոսեցինք ամեն ինչից, լցվեցինք երազանքներով, ոգեշնչվեցինք, գրեթե ամեն մեկս վարակվեց Ալենի ամբիցիաներով:

Դասերից մեկի ժամանակ ասաց մի բան, որ հավերժ ականջներիս մեջ կմնա: Ասաց, որ իր երազանքներից մեկն է երեխաների համար գրել գրքեր, ու երբ դրանք տպագրվեն, Ջոան Ռոուլինգի պես թաքուն մտնել գրախանութներ, ստորագրել այդ գրքերը ու դնել հետ պահարանի մեջ: Այդպիսի փոքր–մեծ նվերներ

էր երազում անել իր գրականության երկրպագուների համար: Չհասցրեց: Այնքան էր մեզ հետ կատակում, որ մեզ դուրս կթողնի դասընթացից, «որ կյանքը մեղր չթվա»: Նրան դասընթացի վերջում շապիկ նվիրեցինք՝ վրան գրված pass/fail (դասընթացի հաջորդ փուլ անցնել/ձախողելն է կոչվում):

Ալենն այն մարդն էր, ով բոլորիս անսահման ուժ էր տալիս երազելու, բայց և երկնքից երկիր էր իջեցնում: Երբ պատմեցի նրան, որ ուզում եմ արվեստով զբաղվել, ասաց, թե ինչքան դժվար է լինելու, պատմեց իր փորձի մասին, շեշտեց, որ պարտադիր է ամուր հիմք ունենալ, պարտադիր է դառնալ խաղի կանոնները փոխող մեկը, պարտադիր է իմանալ, թե վաղն ինչ պիտի անես: Պարտադիր է չլինել միջակ ու լինել առաջինը: Երբ մի անգամ դասի ժամանակ ասացի, որ ռոմանտիկ եմ, Ալենը նայեց ինձ, ալենավարի ժպտաց՝ մեղմ, մի քիչ մտածկոտ: Հասկացավ, թե ես ինչ նկատի ունեի: Ընկերս ասաց, թե բա՝ չէ, Անի, դու ի՞նչ ռոմանտիկ, դու շատ ուղղամիտ ես ռոմանտիկի համար: Ես արդեն ուզում էի սկսել իմ լիրիկան, որ ռոմանտիկ մարդը այն

մարդն է, ով ունի իդեալներ, ձգտում է դրանց հասնել, ողջ կյանք մեծ ու երկար ուղու վրա է: Ալենն ինձնից առաջ ընկավ և ասաց.

— Գո՛ռ, ռոմանտիկն այն մարդն է, ով հավատում է, որ մենակ կարող է փոխել աշխարհը:

Ալենի այդ արտահայտությունը միշտ կապրի ինձ հետ և իմ մեջ: Ասում էր, որ իր մեջ պրագմատիզմն է հաղթել: Գուցե, բայց ոչ ռոմանտիկ մարդը չէր կարող նման բան ասել, ավելին՝ ոչ ռոմանտիկ մարդը երբեք նման բան չէր ասի իր ուսանողին: Այն էլ ինձ պես տպավորվող ուսանողուհու, ով նրա ամեն ասածը սպունգի պես քաշում էր:

Միշտ հավատում էր մեր ուժերին: Երբ պետք էր, զայրանում էր, երբ մի բանը վատ էինք նկարում, ասում էր՝ աղբ: Ու վերջ: Դե արի ու հասկացի՝ աղբի ինչը փոխես: Գլուխկոտրուկի մեջ էր գցում: Իսկ գլուխկոտրուկը հավաքողներին տեղ էր տալիս, դուռ բացում իրենց առջև: Մեր առջև:

Աննկարագրելի է, երբ պատերազմում զոհվում է մի մարդ, ով քո մեջ երազանք է սերմանել: Գիտակցաբար թե անգիտակցաբար՝ էական չէ: Կարևորը՝ ստեղծել է, ապրեցրել է այն քո մեջ: «Չլինել միջակություն, մեղր շատ ուտել, որպեսզի կյանքը մեղր չթվա, դառնալ խաղի օրենքները փոխող, երազել, կրթվել, գնալ առաջ, ամեն ինչ անել հանուն կայուն վաղվա»,— ասում էր Ալենը:

Ձգտում ենք հետևել իր ասածներին: Կանենք ամեն ինչ, որպեսզի իր հավատը մեր հանդեպ անտեղի չլինի, զուր չլինի: Մենք քեզ չենք հիասթափեցնի, Ալե՛ն: Մի օր կհպարտանաս մեզնով: Խոստանում եմ:



Գյանդիս գարնանային գրգռացյալ հեղուկի առնանդամների համար անգամ ամենամյա անբարենպաստ ժամանակներում:

—

## Օվսաննա Մանասյան

Ես մեծ պարտավորություն եմ վերցնում ինձ վրա՝ քո մասին գրելով: Հանուն քեզ գրելով, Ալե՛ն: Հիշողությունները, որ պահել եմ հավերժության համար, երբեք չեն մարի կամ մոռացվի: Ալե՛ն, դրանք քոնն են ու քո հավերժությանը:

Երկու տարի առաջ ձմռանը, երբ ներս մտա Թումոյի դասասենյակ, առաջին անգամ տեսա քեզ: Այն ժամանակ դեռ չէի էլ կարող մտածել, որ կյանքս փոխելու ես ու դառնաս ինձ համար շատ կարևոր մարդ: Բարձրահասակ, լայն ժպիտով: Հիշում եմ այդ օրը բրդյա սպիտակ սվիտերդ էիր հագել: «Ֆիլմերի դասընթացի՞ն եք, օրիորդ», եղավ մեր ծանոթության առաջին նախադասությունը: Դասընթացը տևեց մեկ ամիս: Գաղափար անգամ չունեի, որ դասընթացավարս դառնալու է իմ մոտ ընկերներից մեկը: Օգնում էիր բոլորին, չնայած խիստ և պահանջկոտ դասընթացավար ես եղել միշտ, որ ուսանողներդ լավ կրթվեն: Եթե իմանայիր, որ այդ ամբողջ ընթացքում անդադար քեզնից եմ խոսել բոլորի հետ, պատմել, թե ինչքան լավ ու գրագետ ես վարում դասընթացը, որ ուսանողներիցդ յուրաքանչյուրը երազում էր այդ ամիսը չավարտվի:

Մեր առաջին դասը մոնտաժն էր: Ասում էիր, որ գեղեցիկ և ճիշտ մոնտաժից հետո անգամ հիմարություն թվացող սցենարը այնպես կմատուցվի, որ դիտողը երկրորդ անգամ կցանկանա դիտել:

— Իհարկե, մոնտաժը շատ կարևոր գիծ է ֆիլմարտադրության մեջ, բայց միևնույն է գլխավորը մնում է սցենարը և այն, թե ինչ ես ցանկանում փոխանցել դիտողին,— ձայնդ զրնգում է ականջներումս:

Առաջին ֆիլմի մոնտաժը վերջացրի, եկար նստեցիր կողքիս, որ նայենք: Լուռ նայում էիր, և հանկարծ դադար:

— Այստեղ կադրերի փոխանցումը սահուն չի եղել,— այնքան սիրով էիր խոսում, որ անկեղծ ասած քեզ ուզում էի անվերջ լսել:

Երկրորդ ֆիլմի մոնտաժի ժամանակ ոչ մի երգ հնարավոր չէր ընտրել: Եվ թե ես, թե դու, Ալե՛ն, բավականին քմահաճ էինք երգի հարցում: Վերջապես գտանք ոսկե միջինը և մեզնից գոհ սկսեցինք ծիծաղել:

Դասընթացը վերջացավ, բայց մեր խոսակցությունները՝ ոչ: Մտերմացանք: Հիշում եմ մեր խոսակցություններում գանգատվողը միշտ ես էի լինում, իսկ դու քո համբերատարության անսահմանությամբ ինձ օգնում: Մի օր, երբ արդեն ուշ էր, ու բոլորը գնացել էին տուն Թումոյից, մնացել էինք մի քանի հոգով, ու հենց այդ ժամանակ հնչեց լեգենդար արտահայտությունդ՝ «Կյանքը մեղր չի՛: Առավել ևս, որ ես մեղր չեմ սիրում»:

Հիմա կյանքն իսկապես մեղր չէ առանց քեզ:

## Խորհուրդներդ

Գրքերի, ֆիլմերի ու, իհարկե, երաժշտության մասին յուրօրինակ կարծիքդ անհագությամբ լսում էր քո յուրաքանչյուր զրուցակից: Գրքերի մասին խորհուրդներդ կլանում էին: Գրքերը սիրում են կարդացվել: Գրքերը սիրում են քեզ, Ալե՛ն, այնքան շատ են սիրում, որքան դու իրենց: Տանդ գրքերը դեռ սպասում են, որ նորից բացես իրենց: Միշտ այնքան ոգևորությամբ էիր գրքեր խորհուրդ տալիս, հենց նույն օրը սկսում էի կարդալ ու քննարկում էինք: Մեր քննարկումները ամեն ինչի և հատկապես գրքերի մասին շատ երկար էին տևում, ու չէինք էլ նկատում՝ ոնց ժամանակն անցավ:

— Մարդիկ ուշադրություն են դարձնում գլոբալ խնդիրներին, բայց շատ ավելի մեծ ուշադրություն պետք է գրավեն այն խնդիրները, որ յուրաքանչյուրիս ներսում են ու մենք թաքցնում ենք:— Գլխավոր խոսքերիցդ էր, որ անգամ հիշում եմ, թե ինչ տոնայնությամբ ասացիր:



Վերջին ֆիլմը, որ խորհուրդ էիր տվել, դեռ չեմ նայել: Վախենում եմ նայել: Ո՞ւմ հետ պետք է քննարկեմ:

Ֆիլմարտադրության երրորդ դասընթացն էր: Արդեն վաղուց «դու»–ից անցել էինք «ջան»–ի: Ձաներն անպակաս էին մեր խոսակցություններից:

Հայոց լեզվի հանդեպ սերդ թույլ չէր տալիս անտարբեր մնալ սխալ արտահայտված բառերի նկատմամբ:

Գիտես հինգ լեզու: Հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և սիրո լեզուն: Ավելի ճիշտ սիրո լեզուն դու ես հորինել: Ու միշտ սովորեցնում էիր մեզ խոսել այդ լեզվով: Գրել, շարժվել, զգալ ու ապրել այդ լեզվով: Ալե՛ն, ես գրում եմ միայն քո լեզվով: Երկար ժամանակ չէինք տեսնվել, ու շատ կարոտել էի: Տեսնվեցինք, ամուր գրկախառնվեցինք: Դեռ նոր էի սկսել գրել, ու ոգեշնչման առաջին աղբյուրս ես եղել: Միշտ ոգևորում էիր ինձ գրել: Ասում էիր՝ մի ոչնչացրու գրածներդ երբեք: Ասելուցդ հետո էլ չեմ ոչնչացնում, խոսքերդ պահում եմ:

Նախքան բանակ գնալդ քո համար գրեցի:

*Ու թող երկինքը կուլ տա էությունս,*
*Որ մոռանամ ով լինելս,*
*Ու շաղախվեմ անհամբերատարության շղարշով,*
*Քանի որ չեմ ուզում կարոտել քեզ կրկին:*

Հիշում եմ, թե ոնց ուրախացար ու ասացիր, որ առաջինն եմ, ով քեզ համար գրում է: Ու թե ես ոնց ուրախացա, որ գրել եմ քեզ համար առաջինը, բայց երբեք վերջինը: Մեր ձգձգվող հանդիպումը նախքան բանակ գնալդ, չիրականացավ: Բայց ջերմությունդ զանգով ու հաղորդագրությամբ փոխանցեցիր: Բանակ գնալուցդ առաջ ասացիր, որ չդադարեմ գրել: Ալե՛ն, չեմ դադարել: Ավելին, հիմա շատ եմ գրում: Բայց գրելուց բարձր կարդում եմ, որ լսես ու քննարկենք: Պատերազմի նախօրեին՝ գիշերը, գրեցիր ինձ: Ասացիր, որ ծառայությունը շատ ա դուրդ գալիս ու ամեն ինչ շատ լավ ա: Վերջին անգամ ասացիր, որ գրկում ես պինդ:

Ու ես իմ հիշողություններում կընդգծեմ քեզ լույսի փայլող շողերով: Ու կմնաս հավերժ իմ մեջ, ինձնից զատ դու չես լինի: Ու

այն անկյունը սրտիս, որում դու ես բազմել, կծաղկի ինչպես գարնան կարոտ մնացած աշուն:

Ալե՛ն, քո մասին անսահման գրել է պետք: Դու հավերժ ես, Ալե՛ն: Ա՛խր այդ դու ես, իմ լայն ժպիտով ընկեր:

## Լիանա Արամյան

Ալենի մասին շատ էի լսել Թումոյի ուսանողներից, և բոլորը հիացած էին իրենով:

2020 թվականի հունվարին ինձ էլ բախտ վիճակվեց դառնալ իր սաներից մեկը: Կարող եմ վստահ ասել, որ այդ մեկ ամսվա ընթացքում շատ ավելին սովորեցի, քան այդ ամբողջ երկու տարիների ընթացքում, որ հաճախել եմ Թումո: Ալենը մեզ համար միայն դասընթացավար չէր: Նա դարձել էր նաև ընկեր և խորհրդատու: Թողնում էր, որ ինքներս մտածեինք ու գրեինք սցենարները, բայց նաև ուղղություն էր տալիս, որ հնարավորինս լավը լինեին մեր պատմությունները: Դասընթացի ժամանակ Ալենը վատառողջ էր, և երկու անգամ նրան ստիպված եղան փոխարինել մյուս դասընթացավարները: Նախավերջին դասին ասաց, որ ինքը մեր խմբի հետ շատ ավելի հետաքրքիր էր ուզում անցկացնել դասընթացը, բայց առողջական խնդիրները խանգարեցին:

Ալենը միակ դասընթացավարն էր, ում հետ կապը չէր կորել դասընթացի ավարտից հետո: Կարանտինի ընթացքում հարցնում էր փոքր եղբորս՝ Արամի մասին, քանի որ իր եղբայրը Արամին հասակակից է: Խորհուրդ տվեց չմոռանալ կիթառ նվագելը, շարունակել նույն ոգևորությամբ գրքեր կարդալ:

Շատ էր սիրում կարդալ: Դասընթացի ժամանակ էլ ամեն ազատ պահի կարդում էր: Պաշտում էր Ջոան Ռոուլինգին և նրա ստեղծած աշխարհը: Ասում էր, որ երբ ինչ–որ բան շատ ես ուզում, անպայման իրականանում է: Երաժշտական ճաշակը շատ նման էր իմին, և մինչ օրս երգեր կան, որոնք ասոցացվում են իր հետ: Ալենը ինձ համար դարձել էր օրինակ:

Ասում են, որ կատարյալ մարդիկ գոյություն չունեն, բայց Ալենը ապացուցում էր հակառակը:

Ալեն, մարդ, ում մասին հավերժ պատմել ա լինում:

— Ալե՛ն, կարոտում եմ:

Մեր խոսակցությունները միշտ կարոտելու մասին էին, իսկ հիմա հավերժ եմ կարոտելու ու էլ չեմ տեսնելու, որ պինդ գրկես, ասես «ջանի՛կ»:

Ալենը սիրում էր, սիրում էր ամեն ինչ: Ուզում էինք իր նման լինել, սիրել իր պես սիրուն: Ալենը ամեն մանրուք նկատում էր, Ալենը ամեն վայրկյանը գնահատում էր: Էնքան հպարտ եմ, որ իրեն ճանաչել եմ: Ալենը ուներ արժեքներ, որոնք պիտի ունենանք յուրաքանչյուրս, որ Աշխարհը լավը լինի:

Ալենի ծիծաղը, ժպիտը, հայացքը, ձայնը էնքան յուրահատուկ էին, որ շփոթել կամ մոռանալ չի լինի: Մենք ուշ–ուշ էինք հանդիպում, բայց հանդիպելիս ժամերով խոսում էինք:

Ալե՛ն, էլ ում հետ եմ քննարկելու Քարդաշյանների շոուն, ում հետ եմ խոսելու, թե ինչ ա սերը, էլ ով ա երգեր դնելու ու էդքան լավ պարելու: Ում նկարներն եմ ձևավորելու, ում համար եմ փոստքարտեր նկարելու: Էլ ով պիտի ինձ իմ սիրած կծու կոնֆետներից տա:

Ինձ ասել ես, որ մոլորվեմ, դու միշտ կողքս ես, գիտեմ, Ալե՛ն, գիտեմ, զգում եմ:

Ինչպես Ալենը կնքեց իմ անունը՝ լե փեթիթ Հելենե, էդպես էլ կմնամ միշտ:

***Քո ընկեր լե Փեթիթ Հելենե***
***Սիրով ու կարոտով***





Ես Մանեն եմ, այն երջանիկներից, ով հաստատեց ճանաչել Ալենին: Թումոյում մեր հատուկ դասընթացավարն էր: Այդ տարվա հատուկ դասընթացների խմբին Թումոն անվանել էր «Ուրիշ Հուլիս», և իրոք, Ալենը փոխեց մեր հուլիսը ու մեր կյանքի մեջ թողեց մի մեծ հետք:

Հենց առաջին օրը, երբ տեսա Ալենին, հասկացա որ, նա ուրիշ տեսակ է, չափազանց առաքինի է: Դրանից հետո նրա հետ խոսելիս կամ նրա ներկայությամբ ինչ–որ բան ներկայացնելուց առաջ շատ երկար էի մտածում. վախենում էի, որ հանկարծ չհիասթափվի ինձնից:

Մենք այնքանով էինք երջանիկ, որ մի ամբողջ ամիս առավոտից մինչև ուշ երեկո միասին աշխատում էինք: Ինչ ասես, որ չենք սովորել այդ ընթացքում: Չափազանց շատ հարգում ու սիրում էր հայոց լեզուն և մեզ էլ ստիպում էր, որ սովորենք ու ինքներս օգտագործենք այն բառերը, որոնք առաջին անգամ նրանից էինք լսում: Անկեղծ, միշտ կարծել եմ, որ նա կիսաստված է, որովհետև չափազանց կատարյալ էր (Աստծո լավագույն ստեղծագործություններից էր): Մենք նրան հենց այդպես էլ կոչում էինք՝ «Աստվածային լույս»: Առաջին տղան էր, ում տեսել եմ, որ այդքան շատ սիրում էր կարդալ:

Այդ հուլիս ամսվա ընթացքում առիթ եմ ունեցել մի քանի անգամ նստել և ուղղակի լսել նրա խորհուրդները ու չափազանց ուրախ եմ նաև նրա համար, որ մայրս էլ է խոսել նրա հետ, ու երբ մայրս ինձ պատմեց, այնքան հիացմունքով էր խոսում Ալենի մասին: Դասընթացի վերջում բոլորիս նամակներ էր փոխանցել ու բոլորս ամենաշատն ուրախացել էինք նամակի հետևում՝ գունավոր մատիտով նկարված սրտիկից: Այնքան ջերմություն կա այդ

նամակի մեջ: Ալենի զոհվելուց հետո որոշեցի, որ պիտի մի անգամ ևս կարդամ նամակս: Կարդալուց, իհարկե, լացել եմ, բայց նրա համար, որ այդ նամակը առաջինն էր ու վերջինը:

Ալենի անունը զոհվածների ցուցակում տեսել էր դասընկերուհիս, ու նա էլ առաջինը հայտնեց այդ բոթը: Վիճեցի նրա հետ, ու մի քանի օր չխոսեցի հետը, ասում էի, որ ստում է ու հաստատ պատահական է անունը գրվել: Հետո գրեցի բոլոր ընկերներիս, ովքեր գիտեին Ալենին, ու մեծ մասն ասացին, որ ուղղակի անհետ կորած է: Ես մինչև վերջ հավատացել եմ, որ Ալենը գալու է, ու ասացի, որ չար կատակներից մեկն էր, մինչև վերջ թե՛ ինձ, թե՛ մյուսներին համոզել եմ, որ պարզապես կորած է համարվում և վերջ: Ինչո՞ւ չէինք հավատում, որովհետև Ալենը սիրում էր կյանքը ու կյանքի մարդ էր, և եթե նա չպիտի ապրի, մենք էլ ինչպե՞ս ապրենք: Նա մեզ սովորեցրեց՝ ինչպես ճիշտ ապրել, բայց չսովորեցրեց՝ ինչպես ապրել առանց իրեն:

Իսկ հիմա, Ալենն արդեն եկել է և ապրում է մեզանից յուրաքանչյուրի մեջ ու ստիպում է, որ շարժվենք ճիշտ ճանապարհով: Հիմա բոլորս ունենք մեկ ընդհանուր նպատակ. ապրել այնպես, որ Ալենը հպարտանա մեզնով և աշխարհը փոխելու մեր ծրագրերով:

## Իզաբելա Գրիգորյան

Ալենի մասին բառերս չեն հերիքում... ուղղակի չգիտեմ՝ ոնց սկսեմ...

Ես Իզաբելան եմ՝ Թումոյի ուսանողուհի, ով բախտի բերմամբ ճանաչեց Ընկեր Ալենին... Հա, ես մինչև հիմա իրեն «Ընկեր»–ով եմ դիմում, որովհետև առաջին հերթին ես իրեն հարգում ու սիրում եմ՝ որպես լավագույն դասընթացավարի, ուսուցչի, մանկավարժի:

Իր շնորհիվ սկսել եմ սիրել ու հետաքրքրվել ֆիլմերով: Հիշում եմ, մի անգամ երբ պիտի ֆիլմ նկարեինք, ու ես պիտի երևայի կադրում, ասացի թե չեմ կարողանա, իմ փոխարեն մեկ ուրիշը թող անի դա...մոտեցավ ասաց. «Դու կարող ես, չմտածես, ես քեզ հավատում եմ, դու ամեն ինչ կարող ես», ու ասաց՝ գնա ու գաս՝ տեսնեմ կադրերդ:

Ստիպում էր ինձ հավատալ ինքս ինձ ու ուժերիս վրա վստահ լինել:

Չեմ չափազանցնի ու կասեմ վստահ, որ աշխարհում չկա իր նման ՄԱՐԴ, դասընթացավար ու ուղղակի ընկեր: Կարճ ժամանակում ամենալավ ընկերն էր դարձել ինձ համար, հարազատ մարդ:

Նա ինձ շատ–շատ բան է սովորեցրել:

Սովորեցրել է սիրել սեփական անձս, գնահատել ինքս ինձ... սովորեցրել է ապրել, իրոք ապրել, այլ ոչ թե գոյատևել: Օգնեց ինձ հասկանալ, թե ինչ եմ ուզում իրականում: Խորհուրդներ տվեց, որոնք փոխեցին ներկաս ու ապագաս:

Երբ տեսա անունը զոհվածների ցուցակում, չհավատացի ու սպասում էի լուրի հերքմանը:

Շատ եմ լացել, բայց հետո հիշեցի, երբ դասին տեսնում էր ինձ տխուր, կոտրված ու լացակումած, ասում էր՝ ժպտա, ամեն ինչ լավ է ու լավ է լինելու... ու ես հավատում էի Իրան, էնքան վստահ, հանգիստ ու ժպիտով էր ասում, որ անկախ քեզնից ժպտում էիր ու մոռանում՝ ինչ էր եղել:

Ամեն ինչի պատասխան ուներ, ամեն ինչից տեղյակ էր, ամեն ինչ գիտեր, կապ չունի՝ ինչ ոլորտ կլիներ, ուներ ամեն ինչի պատասխանը:

Դրսում էնքան վստահ ու ժպիտով էր քայլում, որ թեկուզ անծանոթը իրենից արդեն դրականն էր ստանում՝ ուղղակի մի հայացք նետելով Ալենի ժպիտին ու հանգիստ հայացքին:

Պարտական եմ Ընկեր Ալենին ամեն բառի, խորհրդի ու ինձ տրամադրած ժամանակի համար:

Աշխարհը մեծ մարդ ա կորցրել...

Ինքը շատ բան կարող էր փոխել:

Վստահ կարող եմ ասել, ինքը աշխարհը փոխելու է:

Մեր միջոցով ու մեր օգնությամբ ինքը աշխարհը կփոխի:

Մի անգամ հարց տվեցի, թե ինչին է հավատում, ասաց՝տիեզերքին: Իրա մեջ մի մեծ տիեզերք կար, ու ինքը հիմա տիեզերքի ամենապայծառ աստղն է ինձ համար:

Մի քանի օր առաջ բացեցի հին տետրերիցս մեկը ու հենց առաջին էջին տեսա մեծ գրված տառերով «Ալենի խորհուրդները», կարդացի ու հիմա նպատակս մեկն է՝ ապրել իր խորհուրդներով ու արդարացնել իր բոլոր սպասելիքները, ինքը հիմա նույնիսկ վերևից ինձ մոտիվացնում է, ուժ տալիս պայքարելու ու հասնելու գոնե իր հասածի կեսին:

Քաղաքը կորցրեց ևս մեկ ոտնահետք, մի վստահ քայլվածք, որ ուժ էր տալիս բոլորին: Ինքը լույս մարդ է ու երբեք իր մասին անցյալով թույլ չեմ տա խոսի ինչ–որ մեկը, ինքը հիմա էլ կա, ամեն մեկիս կողքին և ուժ ա տալիս: Ձայնը մինչև հիմա ականջներիս մեջ ա, էն ձայնը որ միշտ ասում ա՝ ամեն ինչ լավ ա, չմտածես:



## Արտուշ Պետրոսյան

Դժվար է ընդունել էն փաստը, որ տարիուկես տևած ուրախ պահերին վերջակետ դրվեց մի վարկյանում: Էն պահերին, երբ երկուսդ կայիք, ապրում էիք ու խոսում՝ տարբեր թեմաներից, կարդում ու նայում բացարձակ այլը, բայց միևնույն ժամանակ նույնը: Կպած ապրում էիք իրար հետ հեռավորության վրա ու երջանիկ էինք, որովհետև իրար ունեիք և ունեիք պլաններ, որոնք իրագործելու էիք շուտով:

Հիշում, պաշտում, երանի եմ տալիս էն պահերին, ժամերին, րոպեներին, վայրկյաններին, երբ գտվում էինք մի լուսավոր սենյակում ու նույնիսկ կասկած չկար, որ մեկ տարի անց այդ լույսը կմարի: Հիմա ապրում եմ մտքով ու հավատով, որ երազիս տեսնելու եմ, կամ ավելի լավը՝ գալու ես, գնանք նստենք սպիտակ սենյակում դու պատմես տեսածիցդ, իսկ ես՝ լսածիցս: Գաս, ասես. «Կատակ եմ անում, ամեն ինչ լավ է ու լավ է լինելու, չնայած որ կյանքը մեղր չէ»:

Ամենամեծ վախերիցս էր քեզ կորցնելը, քեզ չունենալը, իսկ հիմա վախենում եմ մի բանից. կարող է չապրեմ էնպես, ինչպես դու էիր ուզում, չէ՞ որ հիմա մի կյանք չեմ ապրում: Ապրում եմ նաև քո փոխարեն՝ ամեն տեղ քո մասին պատմելով ու հիշատակդ վառ պահելով:

Կարոտում եմ էն պահերը, երբ ինչ–որ բան էիր ասում՝ ավելացնելով. «Կգնաս տուն ու կմտածես ասածներիս մասին»: Վախենում եմ մոռանալ ամեն ասածդ, որովհետև չկա ու դժվար էլ լինի ինչ–որ մեկը, որ խոսի, բացատրի էնպես, ոնց դու էիր անում: Վախենում եմ մոռանալ ամեն ինչ ասող հայացքդ, ծիծաղդ, աչքերդ ու էսպես շարունակ:

Դու էն մարդն էիր, որ մի վայրկյանում դարձար հարազատ ու մտար սրտիս ամենախորքը ու մնացիր էնտեղ: Ոնց արեցիր դա, չեմ հասկանում, բայց ամեն ինչ կանեմ, որ միշտ մնաս էնտեղ:

Առեղծվածներով լի էիր, ամեն ասածդ բառի մեջ ինչ-որ հուշող բան կար: Քեզնից շատ բան կար սովորելու, կներես, որ չհասցրի կեսին հասնել ու բացահայտել քեզ լիովին, բայց կա մի փաստ, որը ամեն տեղ ասում եմ, ասել եմ ու ասելու եմ՝ քեզ հետ ունեցած հինգ րոպե տևողությամբ զրույցից կարելի էր ավելին սովորել, քան դպրոցում՝ դասի ժամին:

Լուրն իմանալուց հետո լացել եմ երկար՝ ամբողջ մարմնով, հոգով, սրտով ու հիմա էլ գրում եմ աչքերս լցրած, որն ուր որ է կհոսի գետից էլ արագ:

Իմացի՛ր, սիրել եմ, սիրում եմ, սիրելու եմ մինչև կյանքիս վերջին վայրկյանը՝ ԻՄ ԱԼԵՆ:



## Միլենա Ղազարյան

Ասում են՝ ճամբարում ձեռք բերած ընկերներն ամենալավն են: Սկզբում թերահավատորեն էի վերաբերվում այս խոսքերին, բայց հիմա ավելի քան վստահ կարող եմ ասել, որ հենց էդպես է: Ճամբարի ընկերները ձեռքբերում են: Ալենն իմ ու, վստահաբար կարող եմ ասել, նաև մյուս ճամբարականների ձեռքբերումն էր:

Ալենին ՁԵՌՔ ԲԵՐԵՑԻ 2017-ի ամռանը: Արդեն երկրորդ հերթափոխն ավարտին էր մոտենում, երբ Ալենը մյուս ջոկատավարների հետ «Լուսաբաց» եկավ:

Եկավ, տեղավորվեցին իրենց սենյակներում, ու արդեն մի քանի ժամ անց՝ հանգստի ժամին, Ալենը եկավ իմ ջոկատի համար նախատեսված «տնակը»:

— Ընկեր Միլենա, եկել եմ, որ ավելի լավ ծանոթանանք ու հարևանություն անենք,— ասաց Ալենը:

— Վա՛յ, ի՞նչ լավ բան եք արել, ընկե՛ր Ալեն: Հիմա թեյի սեղանի շուրջ կպատմեմ մեր առօրյայից:

Շատ տպավորվեցի: «Տարբերվում է մյուսներից»,— միանգամից անցավ մտքովս: Ալենն աչքի էր ընկնում բարձր հասակով, սլացիկ կերպարով ու բարի ժպիտով: Անհնար էր դեմքի ժպիտից չնկատել անսահման բարությունը: Նա անսահման կամեցող էր, անսահման նվիրված, անսահման ընկերասեր: Ժամանակի ընթացքում ավելի մտերմացանք, ու առհասարակ, նա բոլորի հետ էր լավ հարաբերությունների մեջ. բոլորի հետ՝ սիրով, ջերմ, պատրաստակամ:

Սովորաբար ճամբարում յուրաքանչյուր հերթափոխ տևում է 20 օր:

Նա 11–12 տարեկանների ջոկատավարն էր ու լավ ջիղ ուներ երեխաներին համախմբելու:

Ճամբարում կային տաղավարային ժամեր, երբ ամեն ջոկատավար իր երեխաների հետ քննարկում էր տարբեր թեմաներ՝ մշակութայինից մինչև ճամբարի կենցաղ: Իմ և Ալենի ջոկատների համար նախատեսված տաղավարներն իրար մոտ էին, մյուս բոլորից՝ բավականին հեռու:

Շատ լավ հիշում եմ, երբ մի օր աստղերից ու գալակտիկաներից էի խոսում երեխաների հետ, եկավ, միացավ զրույցին: Հիմա եմ հասկանում, երևի ձգտում էր դեպի երկինք, հաճախ էր նկարներում հայացքն ուղղում աստղերին:

Հաճախ էր միանում մեր տաղավարային ժամերին, այնպես, որ իմ ջոկատի երեխաները սկսել էին շատ սիրել ընկեր Ալենին:

Խելացի էր, շատ խելացի… գաղափար ուներ ցանկացած թեմայից, ինչի մասին կարող էր խոսք գնալ: Հենց դրանից էլ գլխումս մի միտք ծնվեց՝ իրեն «մտքի գիգանտ» ասելու: Արդեն անվան փոխարեն «մտքի գիգանտ» էի ասում, ճիշտ է, սկզբում ամաչում էր, հետո համակերպվեց:

Մի քանի օր անց, երբ արդեն սկսվել էին միջջոկատային միջոցառումները, որոշեցինք մեր ջոկատի կողմից մրցանակաբաշխություն անել ու բոլոր ջոկատավարներին պատվոգրերի տեսքով իրենց բնորոշող որևէ անուն տալ: Եթե մյուս ջոկատավարների համար երկար մտածեցինք, ապա Ալենի համար պարզից էլ պարզ էր՝ «մտքի գիգանտ»:

Հասավ իրենց միջոցառման օրը: Կազմակերպել էին շատ լավ ու վերջում, երբ երեխաների ելույթներն ավարտվեցին, Ալենը վերցրեց բարձրախոսն ու սկսեց երգել: Հաճելիորեն զարմանալի էր, անսպասելի. մինչդ այդ չգիտեինք, որ երգում է: Չնայած շփոթվածությանս՝ արագ միացրի տեսախցիկը՝ պահն անմահացնելու համար: Ինքնամոռաց երգում էր, մի պահ, երբ նկատեց, որ նկարում եմ, ժպտաց ու շարունակեց:

Ի՞նչ էր երգում: Կասեմ՝ Charlotte Cardin — Dirty Dirty: Շատ էինք տպավորվել երգից: Գրեթե ամեն օր դիտում էինք տեսագրությունը:






Բայց, ավա՛ղ, մոտենում էին գնալու օրերը: Ատում եմ ցանկացած տեսակի բաժանում: Դե՛ էլ ինչ ճամբարային հերթափոխ՝ առանց հրաժեշտի խարույկի: Խարույկ վառեցինք, պարեցինք, ուրախացանք:

Երեխաների քնելուց հետո որոշեցինք չարաճճիություն անել: Մի քանի հոգով պայմանավորվեցինք ու ճաշարանից կարտոֆիլ գողացանք, կեսգիշերին իջանք խարույկի մոտ տաք ծածկոցներով:

Նորից վառեցինք խարույկը, նստեցինք շուրջը, դեսից–դենից խոսեցինք ու նորից մտքներիս եկավ Dirty Dirty երգը: Ալենին խնդրեցինք, որ նորից երգի: Համաձայնեց, բայց պայմանով, որ կձայնակցենք:

Maybe I'm young, maybe I'm too young to understand this...

Պառկել էինք բոցկլտացող խարույկի կողքին, ոչինչ չէինք խոսում. լուռ նայում էինք աստղերին: Նկարեց մեզ ջոկատավարներից մեկը, Ալենն էլ հրապարակեց նկարն ու մակագրեց. «Աստղերին էինք նայում»:

Հիմա էլ ենք աստղերին նայում, Ալե՛ն, քեզ. դու աստղ ես դարձել, հիմա ես քեզ եմ փնտրում երկնքի միլիարդավոր աստղերի մեջ:

Մենք քեզ միշտ ու միշտ կհիշենք, որովհետև մարդիկ ապրում են այնքան, քանի դեռ մենք նրանց հիշում ենք:

Ալենի մասին անընդհատ կարելի է խոսել: Իր մարդ տեսակը, իր վերաբերմունքը շրջապատին միշտ ուրիշ էր: Դպրոցական տարիներին էլ Ալենը սիրում էր առանձնանալ, սիրում էր լինել առաջինը ու ձգտում էր լավագույնին: Ալենն ուներ շատ գեղեցիկ ձեռագիր, ու միշտ պաստառների ձևավորումը իրեն էր բաժին հասնում: Նույնիսկ ուսուցիչների խնդրանքով Ալենը գրում էր ստուգողական տետրերի կազմերի վրա, որպեսզի ամեն ինչ կոկիկ ու գեղեցիկ լիներ:

Դասերի ավարտին միշտ գնում էինք իրենց բակ՝ միասին խաղալու: Գրեթե միշտ վիճում էինք, բայց միշտ միասին էինք: Մի անգամ 4–րդ դասարանում ես ու Ալենը այնպես էինք վիճել, որ մեր ծնողներին տնօրենը կանչել էր իր մոտ: Հաճախ հիշում էինք ու զարմանում, թե այդ փոքրիկ տարիքում ոնց էինք այդքան մեծ կռիվ սարքել: Ալենի հետ միասին նաև դպրոցի պարի խմբակ էինք հաճախում: Լատինաամերիկյան պարեր էին, ու կզարմանաք, բայց Ալենը դրան էլ էր շատ լավ տիրապետում: Վերջին զանգին նստած էինք միասին, արդեն հասուն ու լավ ընկերների պես, իսկ մեր մեծ վեճերը դարձել էին ուղղակի փոքրիկ լեզվակռիվներ: Դպրոցն ավարտեցինք, բայց մեր հուշերն ու հարգանքը միմյանց նկատմամբ չավարտվեցին:

Մոտ երկու տարի առաջ ամռանը Գյումրի էի գնացել: Այդ ժամանակ Ալենն աշխատում էր Գյումրիում, ու հենց իմացավ, որ այնտեղ եմ, պայմանավորվեցինք հանդիպել: Ափսոս, որ վերջին պահին Ալենին հավելյալ աշխատանք տվեցին, ու չկարողացանք տեսնվել, բայց պայմանավորվեցինք, որ հանդիպելու ենք:

Պատերազմը հնարավորություն չտվեց մեզ հանդիպել երկրի վրա, բայց մի օր անպայման կհանդիպենք երկնքում...





2019 թվականի հոկտեմբերի 2–ի վաղ առավոտյան, ժամը 6.00 զարթուցիչի խլացնող ձայնից վեր թռա: Աստվա՛ծ իմ, ես մեկ ժամից պետք է լինեմ «Սասունցի Դավիթ» կայարանում: Հանկարծ չուշանամ: Դրսում մութ էր, ինչո՞ւ պետք է առավոտ կանուխ այսքան մութ լինի: Եթե ուշանամ, ես ինձ չեմ ների, ընկերներս էլ չեն սպասի ինձ, և ոչ էլ գնացքը: Կյանքումս առաջին անգամ պետք է գնացքով գնամ Գյումրի՝ ընկերներիս հետ, երեք ժամ մի՛ գնացքում, մի՛ վագոնում, մի՛ հրաշալիք: Մնում է հասնեմ տեղ: Յոթին տասնհինգ պակաս ես շնչակտուր, հազիվհազ հասա կայարան:

Արդեն հավաքվել էին Հասմիկը, Կարենը, Էրիկը, Էլենները, բայց մի րոպե՝ բա՞ Ալենը: Նայեցինք շուրջբոլորը: Առանց Ալեն՝ ոչ մի տեղ: Արևը քիչ–-քիչ դուրս էր գալիս, ճառագող և ջերմացնող լույսի շողերը ընկնում էին մեր հուսախաբ դեմքերին և ընդգծում մեր դժգոհությունը: Առանց մեր գիտակի՝ ոչ մի տեղ: Էլ ո՞վ պետք է մեզ ուղեկցեր դեպի Գյումրի, թանգարաններ, փողոցներ, կարուսելներ, մշակույթի տներ: Մարդիկ շտապում էին, բոլորը վազվզում էին փողոցներով, իրար էին փնտրում, տոմսեր էին գնում, աշխատանքի էին շտապում: Ամեն ինչ այնքան խառն էր, ուզում էի դադարեր քաղաքի աղմուկն ու անցուդարձը, միգուցե Ալենին ինչ–որ բա՞ն է պատահել: Քանի որ Ալենը երբեք չէր ուշանում, մեր անհանգստությունը տեղին էր: Բայց եկավ վերջապես ու բարի ժպտաց, ցրեց անհանգստությունը, ու շտապեցինք դեպի գնացքը:

Ճանապարհ գնալն էլ պետք է հիշարժան լինի, հետո պիտի հիշես, հիշես ու սիրտդ պիտի լցվի ու նորից լցվի, բայց շա՜տ լցվելուց էլ պետք է զգուշանաս: Եվ այդ հիշողություններն էլ պիտի պահես թանկ, որ չցնդեն, որ չմոռացվեն:

Այս մեր ուրախ ճանապարհորդությունը ինձ շատ բան սովորեցրեց, խոստովանում եմ, շատ սիրեցի այդ ճանապարհը, այդ ընթացքը: Մենք հարուստ էինք իրարով, դա եղավ իմ կյանքի ամենաերջանիկ օրը, որովհետև Ալենը եկավ:

Վագոնում, ի ուրախություն մեզ, քիչ մարդ կար: Մեզ սաստող ու փնովող միջին տարեկիցներից մարդ չկար: Ես, Ալենը և Հասմիկը՝ այս կողմում, Էլենները, Կարենը և Էրիկը մեր ձախ կողմում: Ամբողջ ճանապարհին կատակները, պատմությունները, երգերը մեզանից անպակաս էին: Իրար հետ խաղալով, դաս անելով, սլանում էինք դեպի մի քաղաք, որի մասին Ալենը բոլորիցս լավ գիտեր: Նա անմնացորդ սիրում էր Գյումրին, ասաց՝ եթե հասցնեմ, մեծ հաճույքով կապրեմ այստեղ:

Գյումրվա փողոցներով քայլելիս Ալենը տխրեց: Իսկ միգուցե շատ վաղուց էր տխուր, մենք՝ տարված Ալենի բարի ու հոգատար ներկայությամբ, չէինք նկատել, չէինք հասկացել, թե իրականում ինչ կա Ալենի սրտում: Այդ մեծ սրտում ո՞նց էր Ալենը տեղավորում այդքան մարդ, ո՞նց էր սիրում, հոգ տանում, ժպտում՝ նույնիսկ ցավի միջից: Ալենն այդպես էլ մեզ չասաց՝ ինչից է սրտնեղում: Քո տխրության մասին չեմ ուզում խոսել: Քեզ ուրախ եմ հիշելու, դու հաղթեցիր բոլորին, նույնիսկ այդ ցավին:

Պտտվեցինք քաղաքի կենտրոնում, առանց մի վայրկյան դժգոհելու, գնացինք եկեղեցի, բոլորս մոմ վառեցինք, աղոթեցինք՝ ամեն մեկս ինչ–որ հույսով ու երազանքներով: Հիմա ուզում եմ փոխել երազանքս, ուզում եմ աղոթել կրկին քեզ համար, ինձ համար էլ ոչինչ չեմ ուզում: Իմը չկատարվեց, քոնը՞:

— Կուզե՞ք ճախրենք,— հարցրեց Ալենը:

Ես այդ պահին հասկացա, որ խոսքը կարուսել նստելու մասին էր: Տեսած կլինեք՝ պտտվող սատանի անիվ կոչվածը: Կարուսելի ամենաբարձր կետից երևում էր ամբողջ Գյումրին: Այնքան մոտ էինք սպիտակ ու կապույտ ամպերին: Վերևից մարդիկ նման էին արագաշարժ մրջյունների, որ վազվզում էին իրար հետևից: Ես սիրեցի այդ բարձրությունը և մի քանի րոպե կտրվեցի իրականությունից:

Կյանքն էլ է նման կարուսելի. ցածրից ես բարձրանում վեր, հետո երբ խաղը վերջանում է, իջնում ես: Կարող է լինել նաև, որ



քո բարձունքից իջնես վար: Եվ հարց է առաջանում՝ կբարձրանա՞ս կրկին: Ալենը կմնա բարձունքում ընդմիշտ:

Այդ օրվա լուսանկարներով ալբոմ եմ պատրաստել: Գեղեցիկ է ստացվել:

Նա գեղեցկացրեց մեր անշուք կյանքը, մեր անխնամ հոգին խնամեց, հոգ տարավ, նա եկավ, որ մենք ժպտանք, բայց նա ավելի լայն ժպտաց, նա եկավ, որ մենք իրենով սիրենք բոլորին, բայց նա ավելի շատ մեզ սիրեց ու աշխարհը: Նա եկավ, որ մենք հաղթենք, բայց մենք պարտվեցինք, ինքը կրկին հաղթեց՝ մահին:

Նա լուսավորեց և՛ մեզ, և՛ մոլորակը, և՛ տիեզերքը: Նա բոլորի հանդեպ էր ուշադիր՝ փոքրիկների, ծերերի, հուսահատվածների, տխուր մարդկանց:

Դարձավ իր աշակերտների համար Ընկեր Ալեն և մնաց հավերժ Ուսուցիչ: Նա լույս աշխարհ եկավ և լույս դառնալով գնաց: Օրինյալ եղավ քո աշխարհ գալը: Ես չգիտեմ ինչո՞ւ դու այսքան շուտ գնացիր, երևի հոգնե՞լ էիր մեզնից, դո՞ւ ուզեցիր, թե՞ քեզ խլեցին մեզանից, քո մորից, տնից–տեղից:

Անխաղաղ աշխարհի մեր խաղաղության հրեշտակ… Ես քեզ այսպես կկոչեմ, հիմա և հավիտյան:

Այս օրը 20.00 մենք պետք է լինեինք Գյումրու կայարանում: Ուշանում էինք: Մտածեցինք՝ չենք հասցնի, մեր գնացքը կգնա: Այդ օրը քաղաքի մարդաշատ փողոցներով մենք իրար ձեռք բռնած վազում էինք.

— Չթողնե՛ք ձեռքներդ իրարից, չկտրվեք, չկորցնեք իրար,— գոռում էր Ալենը ու էլ ավելի պինդ բռնում մեր ձեռքերը:

Մարդիկ զարմացած մեզ էին նայում, այս խելառ երիտասարդները ինչի՞ց են ուշանում: Մեզ թվում էր՝ ուշանում էինք մեր կյանքի գնացքից, ապագայի տոմսը չէինք գնել, բայց ուղեվարձը պիտի վճարեինք:

Հետո նա թողեց մեր ձեռքերը, մենք չիմացանք, նա վճարեց մեր փոխարեն: Մենք հասցրեցինք, նա՝չէ:

Հիմա այդ տեղը դատարկ է, մենք մի օրում դարձանք հավերժ դատարկ: Դատարկությունն է, որ քեզ քամում է: Այդ օրվա հիշողությունները մնացին, ինձ չլքեցին: Դուք էլ ամո՛ւր բռնեք, մի՛ թողեք, որ ձեզ լքեն:

«Երբեք մի՛ վախեցեք ոչ մի բանից, միշտ առաջ շարժվեք, ու այն, ինչ ձեզ կթվա անհասանելի ու դժվար, հենց այդ ուղղությամբ շարժվեք»:

Այս խոսքերը նա ասաց, երբ ընդունվել էր Բոստոնի համալսարան: Մինչ օրս այս խոսքերն ուղեկցում են ինձ, օգնում առաջ շարժվել և հասնել անհասանելի թվացյալին: Ալենը օրինակ էր այն մեծատառով մարդու, ում ցանկանում էին նմանվել բոլորը: «Ինչպե՞ս կարելի է այդքան սիրել կյանքը»: Սա հարց էր, որ միշտ տալիս էի ինքս ինձ, բայց տեսնելով Ալենի անմնացորդ սերն ու նվիրումը կյանքի հանդեպ՝ հարցս ակամա գտնում էր իր պատասխանը:

Ալենը ոչ մի վայրկյան անգործ չէր մնում, անդադար կարդում էր, աշխատում, կազմում նոր պլաններ: Ալենով էին հարստանում բեմում ներկայացումների փորձերը: Նա բոլոր ներկայացումներում մարմնավորում էր գլխավոր հերոսի կերպարը: Եվ սա պատահական չէր: Նա օժտված էր դերասանին բնորոշ ճիշտ կեցվածքով, տվյալ կերպարին համապատասխան հոգեբանությամբ, զգացողությամբ և այնպես էր կատարում իր առջև դրված խնդիրները, որ արժանանում էր բոլորի հիացմունքին և նույնիսկ ստիպում հուզվել: Ալենի հետ խաղացել եմ բավականին շատ ներկայացումներում: Նա այնպիսի խաղընկեր էր, ով օգնում էր նաև դիմացինին՝ ճիշտ հասկանալ և խաղալ տվյալ կերպարը: Իհարկե, շատ դեպքեր են եղել, երբ փորձերն ընդհատել ենք բարձր ծիծաղով, հումորով, բայց ի վերջո հավաքվել ենք և ներկայացել հավուր պատշաճի:

Ակամա հիշեցի մի դեպք մեր փորձերից: Երբ առաջին կուրսում բեմադրում էինք էտյուդներ, կուրսընկերուհիս որոշեց բեմադրել իր հեղինակային «Ռոնենին և խնձորենին» էտյուդը: Եվ ինձ ու Ալենին ընտրեց մարմնավորելու նշված կերպարները: Երկուսս էլ չէինք ցանկանում խաղալ, դրա համար պայմանավորված անդադար ծիծաղում էինք փորձերին, և գործը գլուխ չեկավ այդպես էլ:

Ալենի ժպիտն էր լուսավորում մեր լսարանը, մեր փորձերը՝ հաղորդելով դրանց աշխուժություն և հետաքրքրություն: Երբեք չէր մեղադրում ոչ ոքի՝ ասելով, որ յուրաքանչյուրն ինքը գիտի իր դժվարությունները: Չափազանց ընկերասեր էր: Միշտ պայուսակում քաղցրավենիք ուներ, որը մենակ չէր ուտում:

Ալենը հումորի մեծ զգացում ուներ, կատակում էր և զվարճացնում բոլորին: Աչքի էր ընկնում իր դաստիարակությամբ, շնորհքով: Նա կուրսի պարծանքն էր: Միշտ ասում էինք. «Մենք

կուրսում Ալեն ունենք»: Նա անմնացորդ նվիրված էր իր մասնագիտությանը:

Հիշողությանս մեջ միշտ վառ կմնա առաջին կուրսում կուրսընկերներիս այցը մեր տուն: Եկել էին իմ ծննդավայր՝Ցողամարգ: Զբոսնում էինք դաշտերով մեկ, նկարվում, տարբեր պատմություններ բեմադրում: Մեր ժամանցը ավելի հետաքրքիր դարձնելու համար ընկերներիս հետ մեքենայով ուղևորվեցինք քիչ հեռու՝ հեքիաթային բնության գրկում հաճելի ժամանակ անցկացնելու: Ճանապարհին, երբ բոլորս լուռ էինք, մեքենայում հանկարծակի լսվեց զվարճալի երաժշտություն, և մինչ օրս ականջներիս մեջ լսվում է նրա զրնգուն ծիծաղը: Մեր «փոքրիկ էքսկուրսիան», միասին ունեցած երջանիկ պահերը կարծես ավելի համախմբեցին մեզ:

Միասին անցկացրած չորս տարիները մեզ դարձրին մեկ ընտանիք: Միասին թև ու թիկունք լինելով՝ հաղթահարեցինք դժվարությունները: Երջանիկ պահերին ուրախացանք բոլորով, դժվարին պահերին սատար կանգնեցինք մեկմեկու:

Ավարտական դիպլոմները ստանալու օրը համալսարանի մեծ դահլիճում Ալենը նստած էր կողքիս: Կուրսընկերս հետ Ալենն իր բանակ գնալու մասին էր խոսում: Ես անսովոր անհանգստությամբ հարցրի Ալենից՝ բա Բոստոնի համալսարա՞նը:

«Առաջին հերթին պարտքս կատարեմ հայրենիքիս առաջ և հետո կմեկնեմ սովորելու»: Եվ դա վերջին խոսքերն էին, որ լսեցի Ալենից, և վերջին անգամը, որ տեսա նրան:

Ճիշտ է, Ալենը մեծ հայրենասեր էր, բայց չէի գիտակցում, որ կողքիս նստած է իրական Հերոս: Հերոս, ով զոհեց իրեն հանուն հայրենիքի և հայ ժողովրդի: Որքա՜ն երազանք ու նպատակ նա թողեց անկատար:

Մինչ օրս երբեք գրածս ավարտին չեմ հասցրել, որովհետև գրչիս թանաքը կեսից լղոզվել է: Իսկ այսօր, երբ ցավս ու հպարտությունս միախառնվել են, երբ արցունքներս կրկին չեն խոչընդոտել, հպարտությամբ կարող եմ ասել մեկ բան ընդամենը. հպարտ եմ, որ ճանաչել եմ Ալեն անունով Հերոսի:



## Մելինե Ղազարյան

Սեպտեմբեր ամիսն էր, երբ առաջին անգամ մտանք մեր լսարան ու ծանոթացանք իրար հետ: Իհարկե, բոլորը շատ ջերմ ու լավ մարդիկ էին, բայց ես առաջին օրից սկսված նկատեցի ու առանձնացրի մեկին՝ Ալենին…

Նստում էր մեր լսարանի միակ և իրեն «պատկանող» կարմիր աթոռին: Մենք դասերի ընթացքում թաքուն փսփսում ու ծիծաղում էինք: Մեր կուրսղեկ պ. Գասպարյանը հաճախ էր ինձ ու Ալենին նկատողություն անում և ասում, որ ես կրկնում եմ նրան: Ալենը շատ լուրջ էր վերաբերվում ոչ միայն իր կատարած աշխատանքին, այլ նաև իր շրջապատի յուրաքանչյուր անհատի:

Եթե ես իմանայի, որ այդ օրերը չեն կրկնվի, ես ավելի հաճախ նրա հետ թատրոն կամ կինո կգնայի, ֆանտաստիկ ֆիլմեր կքննարկեի կամ ուղղակի կքայլեի ու անվերջ կլսեի նրան: Ես չգիտեի, որ նրա ամեն ասած ու արածը կհիշեմ արցունքներով և անսահման կարոտով:

Գնացքները գնում, բայց վերադառնում են ճիշտ ժամանակին, մարդիկ նրանց սպասում են, բայց գնացքները մարդկանց չեն սպասում: Մարդիկ գնում են՝ խոստանալով վերադարձ, բայց... մնում է սպասել ու սպասել, երբեմն հավերժ:

Գնացքում էինք, Ալենը բացեց թատրոնի պատմության «Ֆրանսիական կլասիցիզմ» գիրքն ու սկսեց կարդալ բարձրաձայն և նշումներ անել: Կարևոր ու իր համար հետաքրքիր մտքերը միշտ գրում էր, իսկ հետո քննարկում: Ամբողջ Գյումրի գնալու ճանապարհին նայում էի հեռուն և մտածում, թե ինչպես է, որ Ալենը երբեք ոչինչ չի մոռանում: Չհասկացանք էլ՝ ինչ շուտ անցավ ժամանակը, և մենք հասանք Գյումրի:

Ժամանակն անցնում է, իսկ մենք ասում ենք՝ դեռ ժամանակ կա ինչ–որ մի բան անելու կամ կարևոր խոսքեր ասելու: Իսկ Ալենն այդպես չէր ասում, կարևորում էր ամեն օրը և լավ խոսքերը չէր խնայում: Մենք կուրսում հինգ հոգով մտերիմ էինք և մեզ ասում էինք «ջանիկներ», իսկ Ալենին՝ «անջանիկ». այդպես էր ուզում:

Այդպես էլ քեզնից օրինակ չվերցրի ու չասացի, որ դու ամենա–ամենաջանիկն ես: Ժամանակը չթողեց... քեզ չթողեց մեր մոտ: Իսկ հիմա գիտակցելով, որ ժամանակն էլ չկա, ստիպված եմ սպասել քեզ հավերժ և հույս ունենալ, որ նորից կտեսնեմ, բայց իմ երազում: Բայց վստահ եմ, որ դու ինձ էլի ավելի ուժեղ կգրկես երազում էլ:

Պատերազմը ցավի և չարիքի հոմանիշն է: Խոսք եմ տալիս փորձել աշխարհում բարին ավելացնել գոնե մի քիչ, որ ժպտաս վերևից քո լուսավոր ժպիտով:

***Քո ջանիկ՝ Փոքր Էլեն:***





«Հիմա ավելի շատ սիրեք իրար, որովհետև գուցե սա վերջն է...»:

Ու խավարեց ամեն բան, այն, ինչ մեզ հեռու էր թվում, եկավ ու հասավ: Երբ դու նոր ես սկսում մտնել մեծերի աշխարհ, քեզ ամեն բան ավելի գունավոր է թվում, բայց բավական է մի քանի օր, ու դու սկսում ես հասկանալ, որ ամենաշատը երազում ես մանուկ մնալու մասին: Մենք դեռ շատ վաղ հասակից ուսումնասիրել ենք «պատերազմ» եզրույթը, բայց այն երբևէ այսքան ցավոտ չի եղել, որքան հիմա: Պատմության դասերը մեզ միշտ անհետաքրքիր ու անկարևոր են թվացել՝ հատկապես այն պատճառով, որ շատ էին կռիվները: Մենք ծնվել և մեծացել էինք, երբ «պատերազմ»–ը գրքում գրված բառ էր, այլ ոչ ապրելակերպ:

2016 թվականի ապրիլ ամիսն էր, հազիվ էինք մի փոքր կտրվել սահմանին տիրող քառօրյա պատերազմից, ես սովորականի նման արագ քայլերով շտապում էի համալսարան: Բացեցի 207 լսարանի դուռը, ու հենց այդ պահին ասես մի մեծ արև փակած լինեին այդ փոքրիկ սենյակում: Ներս մտա, բարևեցի, մոտ 10 րոպե չէի կարողանում հասկանալ՝ ինչ է կատարվում, քանի որ սովորականի համաձայն՝ պարոն Գասպարյանը միայնակ նստած ինձ չէր սպասում: Մի շատ տարբերվող արտաքինով երիտասարդ անդադար արվեստից էր խոսում: Հետո, երբ խոսքն ավարտեց, կուրսղեկս ասաց.

— Էլե՛ն, ծանոթացի՛ր, Ալենն է՝ մեր նոր ապագա ուսանողը, հիմա միասին եք պարապելու:

Ալենից անծայրածիր դրական էներգիա էր գալիս, ու ես մտածում էի՝ երանի ընկերանանք: Այդպես էլ եղավ, ու դրան

հաջորդող 4 ուսումնական տարիներին մենք եղանք իրար համար թև ու թիկունք: Բոլոր իրավիճակներում հաղթահարման ճանապարհները երկուսով էինք մտածում, միասին միշտ հաղթում: Ալենն ինձ համար օրինակ դարձավ. ինչպես է պետք սովորել, ընկերություն անել, ապրել ամբողջ ուժով, բայց, ցավոք, չսովորեցրեց ինչպես ապրել առանց իրեն:

Ես երևի բոլոր բառերիս հետ արտասվել եմ, բայց մի քանի պատմություն եմ ուզում պատմել այդ անփոխարինելի ֆենոմենի մասին, որի կարիքն այս աշխարհը շատ ուներ: «Ինչպես էր պետք ընկերություն անել»:

2017 թվական, մայիս: Ծննդյանս օրն էր մոտենում, քննարկումների մեջ էինք, թե որտեղ նշել, ու Ալենն ասաց, որ աղմկոտ տեղեր չի սիրում, բայց ես որոշել էի պարել այդ օրը: Այդ օրը երկար չմնաց, բայց եկավ ու ևս մեկ անգամ ցույց տվեց՝ ինչպիսին պետք է լինի ընկերը: Այդ ծնունդիս ինձ նվիրեց Լեոնարդո դա Վինչիի «Առակներ, հեքիաթներ, լեգենդներ» գիրքը, որի առաջին էջը մակագրել էր՝ «Le gusta a Dios» (Աստվածները գոհ են)՝ մեր սիրելի արտահայտությամբ: Ներեցե՛ք, բայց չեմ պատմի՝ ինչու: Ամենակարևորը այն էր, որ նա այդ օրն ինձ հետ էր:

2019 թվական, օգոստոսի 1: Իմ 10 տարվա երազանքն էր տեսնել Իսպանիան: Ու քանի որ Ալենը կարողանում էր ապրումակցել, նա ինձնից շատ էր ուզում, որ գնայի: Մի կարճ տեքստ ստացա այդ օրը նրանից. «Վաղը թռնում եմ Իսպանիա»: Առաջին րոպեն շոկային էր, բայց հետո, իհարկե, ուրախացա: Ասաց. «Շատ եմ տխրել, որ քո երազանքը ինձ է վիճակվել»: Իսկ ես ամենայն անկեղծությամբ ասացի, որ հենց իրենից եմ ուզում լսել ամենասիրելի երկրիս մասին: Երբ վերադարձավ, ինձ էջանիշ էր բերել Բարսելոնայից և մի գեղեցիկ ծրար՝ Պիկասոյի նկարներով: Նվիրելիս ինձ համար բարեմաղթանք գրեց ու մի լավ պատմեց Իսպանիայիս մասին:

2019 թվական, նոյեմբեր: Դիպլոմային աշխատանքների նախապատրաստական փուլն էր. ես բեմադրում էի իմ գրած պիեսը, իսկ քանի որ միշտ տղաների պակաս ունեինք, Ալենը համաձայնվեց խաղալ այդ դերը, չնայած որ համաձայն չէր հերոսի հետ: Փորձերին գալիս էր հնարավորինս հաճախ, և քանի որ



զբաղված էր, միշտ ասում էր, որ չի հասցնում, բայց իմ համար կգա… «Ինչպես էր պետք սիրել»:

Նոյեմբեր ամիսն էր՝ Ալենի մոր ծննդյան նախօրեն: Հիշում եմ՝ ինչքան մեծ ոգևորությամբ էր պատմում նախապատրաստվող անակնկալի մասին: Մոր նկատմամբ ամենամեծ սերն էր տածում: Դասերից հետո գնացինք, գնեցինք նվերը: Բարձրաճաշակ էր Ալենը:

2019 թվական, դեկտեմբեր: Կերպարը, որին մարմնավորում էր ներկայացմանս մեջ, վերջում մահանում էր հանուն սիրո, ու ինքն ասում էր, որ այս հատվածը ամենաշատն է հավանում: «Ինչպես էր պետք ապրել»:

2020 թվական, հուլիս: Ավարտում էինք արդեն, պատրաստվում դիպլոմների ստացմանը, ու շատ մեծ ոգևորություն կար, նույնիսկ հատուկ հագուստ պատվիրեցինք: Ես ու Ալենն այդ օրը նկարվեցինք մեր վառ կարմիր դիպլոմներով ու իրար խոստացանք, որ երբ մագիստրատուրան էլ ավարտենք, նորից կհանդիպենք ու կնկարվենք:

2020 թվական, սեպտեմբեր: 097–ով սկսվող հեռախոսազանգերին ուրիշ ոգևորությամբ էի պատասխանում, գիտեի, որ ամենահարազատ ձայնն եմ լսելու, որ ամենահոգևոր զրույցն եմ ունենալու: Ալենը միշտ ուզում էր՝ ես խոսեի, երբեք չէր բողոքում ու սիրով պատմում էր բանակի մասին: Երանի՜ նորից զանգեր.... Երանի՜ մեր վերջին զրույցը հրամանատարը չընդհատեր:

Դու հրեշտակս դարձար, հիմա իմ հրեշտակին դեմքով եմ ճանաչում, դու հերոս դարձար, հիմա առանց հերոս եմ ապրում, դու հպարտությունս դարձար, հիմա անվերջ հպարտ եմ: Էլ չկաս, որ գրկեիր այնպես, ինչպես մենակ դու էիր կարողանում: Երանի՜ չթողնեի գնայիր… Երանի՜ աշխարհը մի քիչ արդար լիներ, երանի՜, հազա՜ր երանի: Պատերազմը հիմա ուրիշ գույն ունի, ուրիշ անուն ունի, որն ինձանից խլեց ամենաթանկը:

## Հերբերտ Գասպարյան

ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ

Երբ փակում եմ աչքերս, իմ առջև հառնում է Ալեն Մարգարյանի լուսավոր, հմայիչ կերպարը: Ինչո՞վ էր արտասովոր Ալենը: Երբ նա մտնում էր լսարան, այն լցվում էր առանձնահատուկ հմայքով: Նա երբեք դասերից չէր ուշանում: Միշտ գալիս էր ժամանակին, լուրջ, միշտ պատրաստ: Ես երբեմն զարմանում էի, թե որտեղից այդ երիտասարդի մեջ այդքան վճռականություն, այդքան ձգտում, այդքան գիտելիք: Երբ էր հասցրել լինել այդքան կազմակերպված: Ինքս էլ ինքնաբերաբար մոտենում էի նրան որպես ոչ սովորական ուսանողի: Մենք քննարկում էինք շատ տարբեր հարցեր, որոնց ընթացքում նա դրսևորում էր մեծ ակտիվություն, լրջություն, միշտ ցանկանալով իր գիտելիքներով գրավել աշխարհը: Նա մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում ինչպես ռեժիսուրայի՝ որպես իր մասնագիտության, այլև բժշկության և հատկապես մանկավարժության նկատմամբ:

Ալենն ուներ նաև դերասանական մեծ շնորհ: Նա հասցրեց խաղալ կուրսային բեմադրությունների բոլոր գլխավոր դերերը: Օրինակ Շանթի «Հին Աստվածներ» ներկայացման հատվածում նա խաղաց Աբեղայի դերը, Յուջին Օ՚ Նիլի «Սերը ծփիների տակ» ներկայացման հատվածում, Վ. Սարոյանի «Հե՛յ, ով կա» ներկայացման մեջ՝ տղայի դերը, ինչպես նաև հաջողությամբ խաղաց Սարոյանի «Այնտեղ, որտեղ ես եմ ծնվել, մարդիկ բարեկիրթ են» պատմվածքի բեմադրության մեջ: Սարոյանի այդ գողտրիկ պատմվածքում նա խաղաց Ջոյի դերը: Փորձերի ընթացքում ստեղծվեց հրաշալի ստեղծագործական մթնոլորտ, որի ընթացքում եկանք ընդհանուր եզրակացության, որ Սարոյանը

նկարագրում է ոչ թե Ջոյի ծննդավայր Չիկագոն, այլ հենց իր պատմական հայրենիք Բիթլիսը: Մնում էր հանդիսատեսին տեղ հասցնել այդ գաղափարը: Եվ երբ տնօրենը հարցրեց, թե վերջապես ասա՝ ո՞րն է քո ծննդավայրը, Ալեն–Ջոն առանց պատասխանելու ժպտաց իր հմայիչ ժպիտով՝ հիշելով իր Բիթլիսը, հետո լրջացավ, կովբոյի իր գլխարկը քաշեց աչքերին: Եվ հենց այդ պահին հնչեց հայկական մի գողտրիկ երաժշտություն: Շնորհիվ Ալենի նույնպիսի մթնոլորտ ստեղծվեց նաև «Հե՜յ, ով կա» պիեսի բեմադրության ընթացքում, ինչպես նաև մյուս կուրսային աշխատանքներում:

Սիրելի՛, թանկագի՛ն Ալեն, ողջ ուսումնառության ընթացքում ստեղծեցիր բեմական, հերոսական կերպարներ և նույնքան հերոսաբար գնացիր դեպի հավերժություն: Քո լուսավոր կերպարն ընդմիշտ կմնա իմ հոգում:



Արմեն Սանթրոսյան
ՀՀ ժողովրդական արտիստ

Ես ուզում եմ խոսել իմ լավագույն ուսանողի՝ Ալենի մասին: Ես նրա մասին չեմ խոսի անցյալ ժամանակով, չեմ ասի «նա այսպիսին էր»: Ո՛չ, չեմ ասի, որովհետև Ալենը մեզ համար հիմա էլ կա, հիմա էլ մեր կողքին է: Այ, հիմա կբացվի լսարանի դուռը, և իր դեմքից երբեք չիջնող հմայիչ ժպիտով, արագ քայլերով, շատ գործունյա, ներս կմտնի իմ բարի, կիրթ, քաղաքավարի, տաղանդավոր ուսանող Ալենը: Կնստի, պայուսակից կհանի ընթացիկ դասի նյութերը, կասի. «Սկսենք, պարո՛ն Սանթրոսյան»: Ահա՛, խնդրեմ, խոսքս չավարտած ներս մտավ պարտաճանաչ, կարգապահ Ալենը:

— Բարև՛ ձեզ, պարո՛ն Սանթրոսյան:

— Բարև՛, Ալե՛ն ջան, ո՞նց ես, գործերդ ո՞նց են, գիտեմ, որ շատ գործ ունես:

— Լավ եմ, շնորհակալություն, գործերս էլ լավ են: Դո՞ւք ոնց եք:

— Լավ եմ, Ալե՛ն ջան:

— Դասը սկսե՞նք:

— Սպասի՛ր, Ալե՛ն ջան, մի՛ շտապիր: Պայուսակիցդ նյութեր էլ մի՛ հանիր: Դու արդեն ավարտում ես: Սա մեր վերջին դասն է: Գուցե այլևս առիթ չլինի՝ քեզ ասելու այն, ինչ մտածում եմ քո մասին: Դրա համար էլ ուզում եմ հիմա ասել այն, ինչ կուտակվել է իմ մեջ քո ուսումնառության տարիների ընթացքում:

Ալե՛ն ջան, ես հաճախ մտածել ու զարմացել եմ, թե ինչպես ես կարողացել այդքան երիտասարդ՝ գիտելիքների այդպիսի հսկայական պաշար կուտակել և դեռ անթերի էլ տիրապետել

3 օտար լեզվի: Քեզ տրված յուրաքանչյուր հարցի, որ ոլորտին էլ այն վերաբերի, վերաբերի կյանքին, մարդկային հոգեբանությանը, դու ունես քո պատասխանը: Եվ դրանք ստանդարտ, սովորական պատասխաններ չեն: Դու ամեն մի հարցում խորացել, մանրակրկիտ վերլուծել ես, յուրաքանչյուր հարցի համար գտել ես քո յուրովի, ինքնատիպ պատասխանը: Եվ կարևոր է, որ դու դրանցով էլ առաջնորդվում ես կյանքում, հյուսում այն ոսկե շղթան, որով գնում ես դեպի քո նպատակները:

Ալե՛ն ջան, համոզված եմ, ինչ մասնագիտություն էլ ընտրեիր, անպայման մեծ հաջողությունների կհասնեիր, որովհետև ոչ մի երևույթի մատների արանքով չես նայում, այլ արժևորում ես այն կարևորը, որով պիտի առաջնորդվես կյանքում: Ընդունվել ես Բոստոնի համալսարան, վստահ եմ կսովորես, անպայման կվերադառնաս, չես մնա այնտեղ և ձեռք բերած քո գիտելիքներով խիստ օգտակար կլինես մեր երկրի զարգացմանը: Ես մի վայրկյան անգամ չեմ կասկածում քո հայրենասիրությանը: Քեզ նման երիտասարդ տաղանդներ հիմա մեզ շատ են պետք:

Ալե՛ն ջան, դու միշտ կանգնած ես ընկերներիդ կողքին: Առանց քո կարծիքը պարտադրելու, առանց թեկուզ մի բառով, մի հայացքով վիրավորելու նրանց՝ քո խելացի խորհուրդներով օգնության ես հասնում: Երբ մտնում ես լսարան, լսարանում մթնոլորտը միանգամից փոխվում է, քո ժպիտը, քո էներգիան փոխանցվում են մյուսներին, և դասը դառնում է ավելի արդյունավետ: Դրա համար էլ կուրսում բոլորը քեզ շատ են սիրում: Դե լավ, մի՛ ամաչիր, մի՛ կարմրիր, գիտեմ, որ մեծամտացող չես և ոչ էլ գոռոզացող, դրանք մարդկային արատներ են, որոնցից դու, փա՜ռք Աստծո, շատ հեռու ես, դրա համար այս ամենը ասում եմ քեզ:

Ալե՛ն ջան, շարունակի՛ր ապրել այդպես: Կյանքում շատ դժվարությունների կհանդիպես, բայց ես համոզված եմ, որ քո տաղանդով, քո աշխատասիրությամբ կհաղթահարես բոլոր դժվարությունները և կհասնես նպատակիդ: Բարի երթ եմ մաղթում քեզ և ուզում եմ ասել՝ շատ ուրախ եմ, որ քեզ նման ուսանող եմ ունեցել:



Գայանե Ամալբաշյանց

# ՆԱՄԱԿ ԱԼԵՆԻՆ

Մեր ընկերությունը սկսվեց գրեթե վեց տարի առաջ, երբ առաջին անգամ հանդիպեցինք: Եթե կհիշես, գարուն էր՝ գեղեցիկ, պայծառ և տաք օր: Նշեցինք Սուրբ Զատիկի տոնը իսկ հետո միասին այցելեցինք Էջմիածնի Մայր Տաճար: Այն ժամանակ մենք Նազելիի հետ իրար քիչ էինք ճանաչում, բայց քո շնորհիվ, Ալեն ջան, մենք անցկացրեցինք հրաշալի օր, մոռացանք ժամանակի մասին և չէինք ուզում բաժանվել:

Մեր ծանոթությունից հետո, Հայաստանից մեկնեցի մի շատ հաճելի և ջերմ զգացումով, վստահ լինելով, որ Հայաստանն ունի հրաշք ապագա, քանի որ ունի քեզ պես զավակներ: Դու քո սերնդի լավագույն ներկայացուցիչներից էիր՝ գերազանց կրթությամբ, դաստիարակությամբ, աշխարհայացքով և մարդկային հարաբերություններ կառուցելու բացառիկ տաղանդով: Ամեն րոպե զգում էի քո հոգատար վերաբերմունքը ցանկացած հարցում, լիներ դա մայրիկիս փաստաթղթերը տպելու աջակցություն, աշխարհի տարբեր անկյուններից հուշանվերներ բերելը, թե դստերս համար TUMO–ում Animation–ի դասընթաց գտնելը:

Ի դեպ հիշում ես, մեր վերջին հեռախոսազրույցի ժամանակ, խնդրեցիր Մարիին փոխանցեմ որ նրանով շատ ես հպարտանում: Տես նա իր սերը քո հանդեպ նկարով է արտահայտել: Շատ երկար չէր համարձակվում նկարել քեզ, ասելով, որ եթե նկապարտադիր պետք է լավ նկար ստացվի, հակառակ դեպքում ընդհանրապես պետք չէ սկսելը:



Ալեն ջան, քո բացառիկ լինելու մասին այդքան է խոսվել, որ ինչ էլ որ նշեմ կլինի կրկնողություն: Քո հեռանալով պատճառեցիր մի հսկայական, անդառնալի կորուստ մարդկության և հայ ազգի համար, մի անտանելի ցավ և բաց վերք, ընկերներիդ և բոլոր քեզ ճանաչողների համար: Աղոթում եմ, որ Աստված ընտանիքիդ անդամներին ամուր պահի եվ այս վիշտը հաղթահարելու ուժ տա:

Դու քո կարճ բայց շատ իմաստալից կյանքով ցույց տվեցիր թե ինչպես է պետք ապրել և սիրել: Ամեն անգամ որոշում կայացնելուց, մտածում եմ, իսկ ինչ կանեիր դու: Դու բոլորիս սրտերում լուսավոր հետք թողեցիր, որն իմ խորին համոզմամբ, մարդու աշխարհ գալու գլխավոր իմաստներից մեկն է:

Լինելով քրիստոնյա, համոզված եմ, որ դեռ կհանդիպենք և շատ կզրուցենք: Փորձում եմ լինել լավատես, չտխրել, ապրել քո սկզբունքներով, շնորհակալ լինելով ճակատագրին, որ ճանաչել եմ քեզ եվ զբաղեցրել մի շատ փոքրիկ տեղ քո մեծ և բարի սրտում:

## Կարեն Վարդանյան

Ալենի հետ վերջին անգամ զրուցեցի հեռակապով, զորակոչի նախօրեին: Կարճ զրույցի նպատակը Ալենին ոգեկոչելն ու անվտանգ ծառայություն մաղթելն էր: Զրույցի ավարտին ասաց. «Շատ բարձր եմ գնահատում Ձեր բոլոր բարեմաղթանքներն ու խորապես զգացված եմ Ձեր ուշադրության համար»: Կարծում եմ կհամաձայնվեք, որ հազվադեպ ենք լսում երիտասարդների կողմից արտաբերած այսպիսի խոսքեր, ինչպես ցավոք, շատ հազվադեպ ենք հանդիպում Ալենի նման փայլուն երիտասարդների:

Անդրադառնալով մեր վերջին զրույցին, որոշ անհանգստություն կար իմ մեջ, որ լինելով բացառիկ բարեկրթության, քաղաքակիրթ վարվելակերպի և հաղորդակցման ունակությունների կրող, հնարավոր հակասություն կարող էր լինել Ալենի աշխարհայացքի, մտավոր կարողության, հարուստ և խորը հոգեկան ըմբռնումների և բանակային կյանքի արժեքային համակարգի, ընդունված կարգի, վարվեցողության կանոնների մեջ, որոնք շատ դեպքերում ցավոք տրամաչափվում և ընդհանրացվում են միջակից ցածր որակները ընդունելով որպես ընդհանուր հայտարար և հարգելիության նիշ:

Թե՛ մեր զրույցի մի քանի րոպեն, թե՛ Ալենի ծառայության ընթացքն ու հերոսական անմահացումը ապացուցեցին, որ մեկ անձի մեջ, ի դեմս Ալենի, կարող են համատեղվել քաղաքակրթության և բարեկրթության բացառիկ որակները, պատերազմական դրության ծայրահեղ դժվար պայմաններում ռազմական ընկերների մարտական ոգին բարձրացնելու, հերոսական պահվածքի և հայրենասիրության բացառիկ դրսևորումների հետ:

Կարելի է երկար գրել Ալենի մարդկային բարձր որակների, օրինակելի առանցքային արժանիքների մասին, սակայն

կցանկանայի նշել միայն մեկ ցանկություն, որ Ալենի կերպարը լինի առաջնորդող օրինակ բոլոր հայ երիտասարդների համար: Այս դժնդակ օրերին, երբ գերակշռող է ազգային անկման և համընդհանուր անզորության զգացումը ողջ հայ ժողովրդի մեջ, երբ բոլորը շտապ լուծումների փնտրտումների մեջ են, իմ անկեղծ ցանկությունն է Ալենի մարդկային որակները սահմանել նոր և համընդհանուր կիրառման բարձր նիշ հայ երիտասարդների համար, կրթել նրանց ազգային հայրենասիրական ծրագրերով, միևնույն ժամանակ շեշտադրելով առաջընթաց ապահովող նորարարական մոտեցումներն ու տեխնոլոգիաները ի նպաստ Հայաստանի տնտեսական, սոցիալական, անվտանգային և պաշտպանական ծրագրերին և նպատակներին: Իմ խորին համոզմամբ, սա կլինի ներկայիս և գալիք սերունդների կողմից Ալենի հիշատակի հարգման ամենագործնական տարբերակը:



## Գոհարիկ Ալեքսանյան

Ալենի մասին գրելուց առաջ ուզում եմ անդրադառնալ նրա հրաշք մայրիկին՝ իմ շատ սիրելի և հարգելի տիկին Նազելիին: Մայր և մեծատառով մարդ, որի հմայքը, գեղեցկությունն ու բարությունը սահմաններ չունեն, և հենց նրան եմ պարտական իմ աշխատանքային հաջողությունների համար: Եվ այսքանից հետո դժվար չէ պատկերացնել, որ նման մորից կծնվեր այնպիսի Ալեն, որին մենք գիտենք:

Ալենին ճանաչում եմ 2006 թվականից, երբ նա 7 տարեկան սիրունատես ու շատ խելացի աչքերով տղա էր, նրա բարի դեմքն ու համեստությունը միանգամից գրավեցին բոլորի ուշադրությունը, թե ինչպես 7 տարեկան երեխան կարող էր շրջապատում իրեն դրսևորել շատ զուսպ ու համեստ: Տարիներն անցան, և Ալենը չփոխվեց, այլ դարձավ ավելի կատարյալ: Ստացած կրթությունը, շրջապատը և հրաշք մոր սերը նրան դարձրին տարբերվող և իր տեսակի մեջ եզակի: Ալենի կարգախոսը դարձավ փոխել աշխարհը, բարություն սփռել ամենուրեք: Ալենին դժվար է բնութագրել մի քանի բառով կամ տողով, նրա մասին կարելի է անվերջ խոսել ու բազմահատոր գրքեր գրել: Գրքեր, որոնց նկատմամբ Ալենի սերն անսահման է, նրա գրադարանը կազմված է բազմալեզու և բազմաժանր գրքերից, որոնք բոլորն էլ ընթերցված են նրա կողմից՝ մեկ շնչով: Շատ անգամներ, երբ գնացել եմ շնորհավորելու Ալենի տարեդարձը, այդ օրը նա տուն է եկել բազմաթիվ նվերներով, որոնց գերակշիռ մասը գրքեր էին:

Իրոք, մարդ պետք է լինի կատարյալ, անթերի և բազմակողմանի զարգացած, որ նման մտքեր արտահայտի. «Հուսով եմ՝ մի օր բոլորը կհասնեն մտքի այն հասունությանը, որ գիրք նվեր

ստանալուց մեր պես ուրախանան»: Ալենի այս և շատ մտքեր այժմ թևավոր խոսքեր են դարձել, և այդ ամենն ընդամենը 21 տարեկանում: Հատկապես սիրում է, երբ զրուցակիցը նույնպես արժևորում է գիրքը: Մի անգամ հերթական հանդիպման ժամանակ ասացի, որ համացանցում կարդացել եմ «Նվիրվելու արվեստը կամ ձոն վարդին» գրքից մեջբերումներ ու շատ կցանկանայի ամբողջ գիրքն ընթերցել. այդ պահին Ալենի դեմքն ու ժպիտը այնքան բարություն ու գոհունակություն էին արտահայտում միայն այն պատճառով, որ դիմացինը գիրք է ուզում ձեռք բերել, որպեսզի ընթերցի, ու նա միանգամից ասաց, որ այդ գիրքն ինձ կնվիրի:

Ալենի՝ համալսարանում սովորելու տարիներին գրեթե ամեն օր հանդիպել ենք առավոտյան՝ ես՝ աշխատանքի գնալիս, իսկ Ալենը՝ համալսարան, ու ամեն անգամ իր լուսավոր ու բարի ժպիտով բարևում և հարցնում էր, թե ինչ նորություն կա իմ կյանքում, երբեք նրա ուշադրությունից չեն վրիպում դիմացինի հագուստը, հագուստի գույնը, զարդերը, և միշտ կարծիք է հայտնում, որն անհնար է հաշվի չառնել, իսկ երբ ես եմ հարցնում, թե ինչու է ոտքով գնում, միշտ նույն պատասխանն եմ ստանում. «Քայլելիս ես մտածում եմ»:

Ես հիմա էլի ամեն օր անցնում եմ նույն ճանապարհով ու հայացքով փնտրում Ալենին, սպասում, որ ինձ խոստացած գիրքը կնվիրի, համատեղ միջոցառումների ժամանակ ամենաստացված ու գեղեցիկ լուսանկարները կնկարի…

Եթե նկատեցիք, Ալենի մասին ես գրել եմ ներկա ժամանակով, քանի որ Ալենն անմահացած հերոս է, նրա սխրանքն անմահ է, երկրի վրա թե տիեզերքում՝ միևնույն է, նա մեզ հետ է հավերժ՝ մեր առօրյայում, մեր կյանքում:

Ալվարդ Ջիվանյան
Բանասիրական գիտությունների դոկտոր

# ԱԼԵՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ալենից ինձ մնացել է ֆեյսբուքյան շատ սեղմ մի նամականի: Ցավոք, ստացվեց այնպես, որ մեր նախատեսած հանդիպումների մի մասն ինչ–որ պատճառով տեղի չունեցավ: Խանգարեցին հանգամանքներ, գուցե նաև իմ անհետևողականությունը, և, անշուշտ, սպասվելիք աղետից բոլորիս անտեղյակությունը: Կարող էր այլ կերպ լինել: Չեղավ…

Ալենի հետ ծանոթացել եմ 2016 թ.: Նոր էր լույս տեսել Ջոան Ռոուլինգի «Հարրի Փոթեր» վիպաշարի առաջին գիրքը: Ալենը դեռ աշակերտ էր, Ռոուլինգի երկրպագու և, առհասարակ, անհագ ընթերցող: Փոքրիկ ֆիլմ էին նկարահանում «Հարրի Փոթերի», թարգմանության, հրատարակման մասին: Ալենը հրավիրել էր ինձ «Բյուրոկրատ» գրախանութ, որտեղ և նկարահանելու էին ֆիլմը: Ինքը հարցեր էր տալիս, ես պատասխանում էի:

Ինձ այնքան դուր եկավ՝ ինչպես էր աշխատում. հետևողական էր, համարձակ, ուշիմ ու նրբանկատ: Հստակ ոճ ուներ արդեն, ինձ ուղղված հարցերն անսովոր էին, ինչ–որ տեղ՝ անսպասելի:

Ավելի ուշ ֆիլմը դիտելիս զարմանքով նկատեցի, որ հարցերն անհամեմատ շատ էին, քան ֆիլմում հնչեցին: Գրեցի Ալենին՝ հարցնելով՝ ինչո՞ւ այդքան զրուցեց հետս հինգ րոպե տևողությամբ ֆիլմի համար: Շատ անկեղծ պատասխանեց, որ հարցերն ավելի շատ անձամբ իրեն էին հետաքրքիր: Հրավիրեց ինձ Թումոյում ֆիլմը դիտելու, բայց մեր հանդիպումը, ցավոք, չկայացավ. համալսարանում քննաշրջան էր:

Ջան, ամ սիրտը բաց է հեքիաթի համար, տի օր ամեպատան կհայտնվի հեքիաթի տեղ:

Այնքան լայն էր Ալենի հետաքրքրությունների շրջանակը. ուզում էր մասնակցել Հովի. Թումանյանի թանգարանում հեքիաթին նվիրված ամենամյա գիտաժողովներին «լսորդի կարգավիճակում», ինչպես ինքն էր գրել: Դարձյալ ինչ–որ պատճառով չհաջողվեց:

Ալենից վերջին նամակն ստացել եմ 2019թ. դեկտեմբերին՝ ուղիղ մեկ տարի առաջ: Ցանկանում էր մասնակցել մանկական գրականությանը նվիրված իմ դասախոսություններին: Հետաքրքվում էր մանկական գրականության տեսությամբ՝ «թեմայից անկախ»: Նամակում գրել էր. «Վաղուց ուզում եմ, բայց շարունակ չի ստացվում: Խոստանում եմ աննկատ մնալ ու չխանգարել»: Զարմացել էի. ինչպե՞ս կարող էր որևէ մեկին խանգարել, երբ իր փայլուն ներկայությունը միայն զարդարել կարող էր ցանկացած լսարան:

Իմ դեպքում գուցե թե լռելն էր ճիշտ, ոչինչ չասելը, քանի որ թռուցիկ հանդիպումներ ենք ունեցել միայն: Բայց պարտավոր էի թղթին հանձնել հուշերի այն մի նշխարքը, որ մնացել էր ինձ մոտ Ալենից: Լուսավոր ու պայծառ երիտասարդ էր Ալենը. վաղաժամ ճանապարհ ընկավ՝ ցավ ու տրտմություն թողնելով իրեն ճանաչող ու սիրող մարդկանց սրտերում:



Վարդան Դևրիկյան
Բանասիրական գիտությունների դոկտոր

# ՆԱ ԱՊՐԵՑ ԻՐԵՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿՑՄԱՄԲ

Ալենի մասին դժվար է գրել ոչ միայն անցյալով, այլև անգամ ներկայով, որովհետև նա մեր օրերում ապրող վաղվա մարդն էր:

Ռոմանտիզմի գրականությանը բնորոշ է վաղվա հերոսը, այն անձնավորությունը, ով այսօր դեռևս չկա, բայց վաղն է գալու, ում սպասումով ապրում է հասարակությունը: Ռոմանտիզմի գրականությունը, դժբախտաբար, նաև մի օրինաչափություն ունի. վաղվա բոլոր հերոսները ներկայում կյանքից հեռանում էին եղերական վախճանով: Իրենց ապրած կյանքով ցույց էին տալիս, թե ինչպիսին պետք է լինի վաղվա մարդը և հեռանում, մինչև որ իրական կյանքում վաղը կգան նրանք:

Ալենը թերևս ճակատագրի նախասահմանվածությամբ ժամանակից շուտ էր աշխարհ եկել կատարելու իր առաքելությունը՝ ցույց տալու, թե ինչպիսին պետք է լինի այսօրվա կյանք մտնող և վաղը մեր երկրի համար պատասխանատվություն ստանձնող քաղաքացին:

Ափսո՜ս, ինքը չհասցրեց իր օրինակով ցույց տալ, սակայն վստահաբար այդ ճանապարհով են ընթանալու Ալենին ճանաչած իր սերնդակիցները, և այդ ճանապարհը կդառնա Ալենի ամենամեծ և կենդանի հուշարձանը, որն ինքը ևս, իր ողջ համեստությամբ, կցանկանար ունենալ:

Ալենին երախտագիտությամբ կհիշեն իրեն գրեթե տարեկից իր աշակերտները, որոնց և ընդհանրապես իրեն ճանաչողների համար նա դարձավ մարդկային բարձր նկարագրի և համակողմանի խոր գիտելիքների զարմանալի համաձուլվածքի մարմնավորում:

Երեք թվի ընդունված խորհրդաբանությամբ՝ սովորաբար մարդուն բնութագրում են երեք հատկանիշներով: Որքան էլ փորձեմ ըստ այդմ ընդհանրացնել նրան բնորոշ հատկանիշները, միևնույն է, հնարավոր չի լինում կրճատել ևս մեկը՝ չորսի իջեցված հետևյալ հատկանիշներից՝ գիտելիք, պայծառություն, համեստություն և նվիրվածություն:

Ալենն առանձնանում էր ոչ միայն լեզուների փայլուն իմացությամբ, այլև վերլուծական խոր մտքով և անչափ կարդացածությամբ: Չնայած իր երիտասարդ տարիքին՝ տեղյակ էր գիտության ամենաժամանակակից ուղղություններին և զարգացման միտումներին: Ապշեցուցիչը, սակայն, այն էր, որ մտածում էր ուսումնառության մագիստրական աստիճանում ընտրել մի մասնագիտություն, որն առավել կարևոր կլինի մեր հասարակության առաջընթացի ու առկա սոցիալական խնդիրների հաղթահարման համար:

Ալենին, երբ Բոստոնի համալսարան էր ընդունվել, ի տես իր ակնհայտ կարողությունների և արժանիքների, որքան էլ որ հոգեբանորեն դժվար և անսովոր լիներ, ասացի՝ միգուցե ճիշտ կլինի միանգամից սովորելո՞ւ գնաս և օր առաջ կիրառես քո գիտելիքները և իմացությունները:

Խորիմաստ ժպտաց և ոչինչ չասաց: Դա մեծ անակնկալ էր ինձ համար: Անակնկալ էր, որովհետև Ալենի հետ կապված սխալվել եմ միայն մի հարցում: Թվում էր, թե իր ողջ փայլուն կրթությամբ և գիտելիքներով նա աշխարհի քաղաքացի է: Նրանից երբևէ չեմ լսել Արցախ, Հայաստան և Հայրենիք բառերը: Հայկականի հետ առնչվող հասկացությունների մասին խոսել է որպես մշակույթի և արվեստի բարձրարժեք ստեղծագործությունների մասին:

Մեր հայրենիքի համար ճակատագրական պահին, սակայն, Ալենն ապացուցեց, որ Հայրենիքին կապվածությունը ևս պետք է



արտահայտվի գործով և ոչ թե խոսքով: Այդ պահը դարձավ նրա կյանքի թռիչքի վերջին խոյանքը, որը գումարվելով Հայրենիքի համար նահատակված իր բոլոր մարտական ընկերների՝ մեր հերոսների հավաքական սլացքին՝ կանգուն է պահում մեր բզկտված երկիրը:

Այսօր ո՛չ Ալենն է մեր կողքին և ո՛չ էլ մերն է Մատաղիսը, ուր ընդհատվեց իր կյանքի թռիչքը:

Ալենը և մեր ընկած բոլոր–բոլոր հերոսները դարձել են այն հավաքական կենսատու փարոսը, որը ոչ միայն լուսավորում, այլև ուժ է տալիս ապրողներիս՝ տեր կանգնելու Հայոց զույգ պետականությունների այսօր մեծապես վտանգված ապագային:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Շողակաթ Դևրիկյան. **Մեր օրերի առաքյալը** . . . . . 9
Էդգար Մարտիրոսյան. **Քայլերն ու պայքարները** . . . . . 53
Լիանա Հարությունյան . . . . . 63
Երվանդ Աբրահամյան. **Անվերադարձ**. . . . . 69
Աննա Մկրտչյան. **Վերջին նկար** . . . . . 77
Մարիա Հովհաննիսյան. **Նամակ Ընկերոջս** . . . . . 83
Միլենա Բարսեղյան . . . . . 88
Մարիա Սարգսյան . . . . . 95
Դիանա Սարգսյան . . . . . 101
Գևորգ Տիգրանյան . . . . . 105
Միլենա Ոսկանյան . . . . . 108
Անահիտ Տերտերյան . . . . . 110
Մերի Շահբարյան. . . . . 112
Անի Կապզմալյան . . . . . 114
Օվսաննա Մանասյան. . . . . 117
Լիանա Արամյան . . . . . 121
Էլեն Դեմիրյան . . . . . 122
Մանե Մկրտչյան . . . . . 123
Իզաբելա Գրիգորյան. . . . . 125
Արտուշ Պետրոսյան. . . . . 127
Միլենա Ղազարյան. . . . . 129
Մանե Մնացականյան . . . . . 132
Լուսինե Գալստյան . . . . . 133
Անի Վանցյան . . . . . 136
Մելինե Ղազարյան . . . . . 139

Էլեն Պողոսյան . . . . . 140
Էլեն Խաչատրյան . . . . . 141
Հերբերտ Գասպարյան . . . . . 145
Արմեն Սանթրոսյան. . . . . 147
Գայանե Ամալբաշյանց. **Նամակ Ալենին** . . . . . 149
Կարեն Վարդանյան . . . . . 151
Գոհարիկ Ալեքսանյան . . . . . 153
Ալվարդ Ջիվանյան. **Ալենի հիշատակին** . . . . . 156
Վարդան Դևրիկյան. **Նա ապրեց իրեն վերապահված առաքելության գիտակցմամբ** . . . . . 159

# բոլորիս
# ԱԼԵՆԸ

Գեղարվեստական խմբագիրներ՝
Շողակաթ Դևրիկյան
Միլենա Բարսեղյան
Լիանա Հարությունյան

Խմբագիր և սրբագրիչ՝
Վանուհի Եղիշյան

Լուսանկարները՝
Ն. Տերտերյանի անձնական արխիվից

Հրատարակչության տնօրեն՝
Էմին Մկրտչյան

Գեղարվեստական ղեկավար՝
Մարիամ Կանայան

Տեխնիկական խմբագիր՝
Նվարդ Փարսադանյան

Ձևավորումը՝
Վիտալի Ասրիևի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/8
Թուղթը՝ կավճապատ: Ծավալը՝ 10,5 տպ. մամ.

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak